Մեր ՀԱՅՐԸ սուրբ Ավետարանն է, ՄԱՅՐԸ մեր՝ Առաքելական սուրբ Եկեղեցին (Եղիշե, Ե դար):

Որդյա՛կ իմ, ՀՈՐԴ խրատը լսիր ու ՄՈՐԴ օրենքը մի մերժիր (Առակ. 1:8):

Այն աչքը, որ իր ՀՈՐԸ կծաղրի և իր ՄՈՐԸ հնազանդվելը կանարգի, ձորերի ագռավները պետք է փորեն ու արծիվների ձագերը պետք է ուտեն (Առակ. 30:17):

Եվ դարձյալ տալիս եմ ձեզ խորհուրդը սուրբ ԵԿԵՂԵՑՈՒ. ինչ բարի գործ որ կատարեք, թող լինի բարեգործություն և փառք հանդերձյալ կյանքի համար: Ամեն (Արձակում):



ԽՐԱՏԱՆԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ

Գիրք 3

Գիրք Գ

Բարկության, դատելու և հնազանդության մասին

Ծիծաղի և լացի մասին

Որքա՜ն գեղեցիկ է ծերերի իմաստությունը և պատվավոր մարդկանց իմացությունն ու խորհուրդը:

Սիրաք 25:7

Նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքինությունը՝ ամոթ ու նախատինք է իր պապերի համար և մի նոր անեծք:

Սիրաք 20:28

Առաջաբան

Զարթի՛ք և մի՛ ննջէք նման հիմար
կուսից նիրհէք, ալելուիա...
Ներսես Շնորհալի

Մատենաշարի այս հատորյակում զետեղված խորագրերը ներկայացնում են այն կրքերը և արարքները, որոնք շատ հեշտությամբ հեռացնում են Աստծո շնորհը քրիստոնյայից: Դրանցից են, ըստ սուրբ հայրերի, բարկությունը, դատելը և ծիծաղը: «Զգույշ եղեք, որպեսզի ոչ մեկը ձեզանից Աստծո շնորհից ետ չմնա» (Եբր. 12-15):

Նորադարձ քրիստոնյային, ըստ սուրբ հայրերի, Տերը տալիս է շնորհ, այսպես կոչված, առաջին սիրո և առաջին ջերմության, որոնք և զարդարում են նորադարձին խնդությամբ, երկյուղով, պահքի կամեցողությամբ, անձանձրույթ աղոթքով և Սուրբ Գիրքը ջանասիրությամբ սերտելու մղմամբ, ողորմություն տալու հոժարակամությամբ, նաև՝ հույսով, համբերությամբ և այլն: Այս բոլորը ճրիաբար ստանալով՝ նորադարձը կարծես անարգել հաղթահարում է բոլոր խոչընդոտները և ելնում դեպի երկինք: Բայց փորձառություն չունենալու պատճառով, շուտով տեղիք է տալիս մեղքերին և զրկվում վերը նշված շնորհներից: Զրկվելով առաջին սիրուց և ջերմությունից, քրիստոնյան մեծ ցավ է ապրում, նման մի մարդու, որը կորցրել է իր ողջ ունեցվածքը և, ըստ սուրբ Գրիգոր Նարեկացու, նմանվել հանկարծահաս նավաբեկյալի:

«Մինչդեռ չվում էի ես անհոգ, աներկբա մի վստահությամբ՝ փորձության, հազիվ չնչին մի կասկած մտանցելով այն փոքր միջոցից, որ մնում էր դեռ մինչև հանգրվան, համարելով ինձ արդեն ժամանած, ձմեռը հանկարծ ամառ ժամանակ, բքաբեր հողմով վրա հասնելով՝ երեքայլան իր դիմահարությամբ խառնեց-խռովեց անդորրն հիմնովին, և ալիքների վայրագ բախումից նավը խորտակվեց» (Նարեկացի, Բան ԻԵ):

Եվ մեծ ցավով է տանում քրիստոնյան այն բոլոր վերը նշված ճրի շնորհներից մերկանալը, որոնցով խնդում և բերկրում էր իր հոգին: Նարեկացին՝ ներկայացնելով շնորհազրկումը և համեմատելով այն նավաբեկության հետ, շարունակում է նկարագրել նավի բոլոր պերճանքների և սարքավորումների կործանումը:

«Քայքայվեց սարքը թիավարության, հիմնախիլ եղավ կայմը բարձրաբերձ, առագաստն ամբողջ իր թռչարանով պատառոտվելով դարձավ ծվեններ անկարկատելի: Զարդերից զրկվեցավ շինվածքը շքեղ, առասանները ճգման՝ խզվեցին: Տապալվեց գլխի դիտարանը պերճ, կտրվեց պարանն ապավանդակի, խարսխակայմը քանդվեց հիմնիվեր, բաժանվեցին զույգ կցման լծակները հաստ ու ամրակուռ: Ծռվեցին սամիքն ուղղընթացության, սուզվեց հիմնապատ նեցուկը նավի, դեկը իր կազմվածքով ընկղմվեց անհետ, նավարկությունը զրկվեց իր բոլոր հարմարանքներից, ողնափայտն ամուր կոտրվեց իսկույն: Զստակապերը հոշված՝ թափվեցին, ավերակ դարձավ նավագոգն ամբողջ, նավախելը իր եզրաշրթերով՝ խախտված դուրս թռավ: Շքեղ բազմոցներն ընկան, սուզվեցին, հիմնահատակվեց վանդակապատ վայելչակառույց դահավորանքը հանգստարանի, փլվեց, խորտակվեց, տախտակամածը քայքայվեց խպառ, պնդիչ գամերը դուրս թռան տեղից: Որպես արդյունք այդ ավերածության՝ մնաց ողբերիս հուշարձանն այս լոկ»:

Եվ թվարկված ամեն մի կործանված մասը այս նավի, համեմատում է մի շնորհի հետ, որից զրկվում է նորադարձը՝ մեղքերին տեղիք տալու պատճառով: Նմանօրինակ վիճակի համար այսպիսի աղոթք է հղում առ Աստված սուրբ Եփրեմ Ասորին. «Մեկնիր, Տեր, Քո ձեռքը նավաբեկյալիս, որ ընկղմված եմ չարիքների խորքերում, փրկիր ինձ իմ մեղքերի ալիքների սաստիկ ծովածափ բռնությունից»:

Եվ ինչ վիճակի մեջ կլինեն նրանք, երբ միանգամից զրկվեն, մերկանան այս բոլորից: Իհարկե, մեծ վիշտն ու ցավը կհամակի նրանց հոգին, ըստ սուրբ Եփրեմի. «Նայիր, Տեր, իմ անձի մերկությանը, որ կողոպտեց թշնամին: Եվ այժմ խայտառակ և ամոթալից եմ Քո առջև: Մարդասիրիր և հանդերձ հագցրու ինձ, մտցրու և ուրախացրու Քո ընտրյալների խավի մեջ»:

Սակայն, ըստ հայր Ամոնի, առաջին սերը և ջերմությունը կորցրած անձանցից մի մասը, ցավոք, համակերպվում է այդ վիճակին, որոնց համար գրված է, թե. «Հոգով սկսեցիք և մարմնով եք վերջացնում»: Իսկ մյուսները՝ ցավով և կարոտով հիշելով կորցրածը, մեծ բաղձանքով ջանում են այն վերագտնել, որն և այսպես է արտահայտում Նարեկացին.

«Կլինի՞, արդյոք, որ բազմախորտակ տապանը մարմնիս տեսնեմ նորոգված: Պիտի նկատե՞մ ողբալի հոգուս փչրված նավը ողջացած նորեն: Արդյոք կլինի՞, որ բաժանվածս մեծ տարածությամբ, դարձյալ միանամ: Կտեսնե՞մ, արդյոք, սիրտս վշտագնած ու բազմաթախիծ՝ նորից բերկրելիս: Հուսա՞մ, որ մի օր՝ իսպառ խաթարված բուն էությունն իմ կգտնի իրեն: Պիտի երևա՞ թշվառացյալիս տաղավարն ավեր վերստին կանգուն: Կլինի՞ մի օր տարամերժ գերիս՝ նորից ազատված: Լույսի շնորհից ընկածս, արդյոք, կարո՞ղ է հուսալ, որ կկազդուրվի: Պիտի ցույց տա՞ս ինձ ողորմածաբար այնքան հարազատ պայծառությունը վայելչանքներիդ: Արդյոք երբևէ պիտի երևա՞ ամենատխուր հոգիս ժպտերես: Կլսե՞մ գուժկան ձայնի փոխարեն թշվառիս հասնող

ավետիքի լուր: Կտեսնե՞մ, արդյոք, իմ բյուրակործան ջարդած անոթը վերանորոգված: Մտքիս աչքերը պիտի նկատե՞ն պարտամուրհակս պատառոտված մի օր: Անձկության ժամին բարեշնորհիդ քավության լույսը կծագի՞ վրաս: Քո ուղեկցությամբ կմտնե՞մ արդյոք լույսիդ խրախճանքի մեջ: Ըստ Եզեկիելի, կկենդանանա՞ն ցամաքած անկյանք ոսկորներս գոս՝ զորացած դարձով բանական շնչիս: Կլինի՞, արդյոք, որ նորից նայեմ քո սուրբ տաճարին, հանց կետի փորից մարգարեն գոչեց, ես որ կանգնած եմ դեմդ լուսամերժ և ամոթահար: Խավարասուն մթնածիս վրա կծագի՞ արդյոք պայծառ առավոտ: Տագնապահարս հավերժասառույց կարո՞ղ եմ հասնել գարնանամուտին: Կտեսնե՞մ առատ ցողն անձրևային հոգուս արոտը կանաչազարդող, և գազանակուր ոչխարս մերժված կտեսնե՞մ, արդյոք, նորից գթառատ կամքի հոտի մեջ» (Նարեկացի, Բան ԻԵ):

Եվ կորցրած սիրո և ջերմության հետևանքով սկսվում է մաքառումների և փնտրտուքի անապատային մի շրջան: Ինչպես հրեաները ուրախությամբ և ցնծությամբ դուրս եկան Եգիպտոսից, առանց որևէ դժվարության անցնելով բոլոր արգելքների միջով, նույնիսկ անհնարին թվացող Կարմիր ծովով: Բայց այս ուրախությանը հաջորդեց անապատի տապը, և շատերը այս անապատային փորձություններին չդիմանալով, ըմբոստացան և կորսվեցին՝ չհասնելով խոստացված կաթ ու մեղր բխող երկրին, և շատ քչերը մնացին հավատարիմ, ինչպես որ Քաղեբը և Հեսուն այն խոսքի համեմատ, թե. «Շատ են կանչվածները և քիչ՝ ընտրյալները»: Եգիպտոսից դուրս գալու ուրախությունը խորհրդանշում է առաջին սերն ու ուրախությունը, նրանից զրկվելը, անապատի ընթացքը և մեծ ջանքով ու տառապանքով այն գտնելը, որը կոչվում է երկրորդ սեր և երկրորդ ջերմություն, արդեն խորհրդանշում է Ավետյաց երկիրը գրավելը, խոսքի համեմատ, թե. «Երկնքի Արքայությունը այսկողմ-այնկողմ մի փնտրեք, այլ՝ ձեր մեջ»:

Եվ այստեղ՝ այս անապատային վիճակում է, որ սկսվում է բուն բարի պատերազմը սատանայի, աշխարհի, մեղքի և սեփական եսի դեմ: Այս պատերազմում է, որ մարդն սկսում է ճանաչել իր իրական կերպարը, տեսնելով իր մեջ մեծ թշնամիների՝ արծաթասիրության, աշխարհասիրության, վավաշոտության, որկրամոլության, բարկության, մեծամտության, հպարտության, փառամոլության, նախանձի և շատ ու շատ այլ կրքերի տեսքով: Այստեղ է սովորում իր անձից հրաժարվել, և իր անկարողությունը տեսնելով՝ հույսը դնել Աստծո վրա, նաև՝ սովորում է համբերել նեղություններին, վշտերին, բարությամբ չարին հաղթելուն, մի խոսքով, սովորում է բարի պատերազմ վարել:

Զգտելով կորցրած սերը և ջերմությունը վերագտնել, քրիստոնյան ստանում է Տիրոջ աջակցությունը, ըստ սուրբ հայր Մակար Մեծի. «Երբ Աստված տեսնում է մեզ՝ հոժարությամբ այս պատերազմի մեջ տքնելիս, առաքում է իր սուրբ զորությունը, հաստատում մեր սրտերը, շնորհում ուրախարար արտասուք և խորհուրդների հանգստություն, զորացնում է մեզ թշնամուց առավել և թույլ չի տալիս չարի խորհուրդներին նեղել մեզ՝ երկյուղել տալով իր շնորհած զորությամբ, ինչպես որ Պողոսն է ասում. «Ձգնեցեք բազում աշխատությամբ և առեք Աստծո զորությունը»:

Եվ այս պայքարում հաղթողները ստանում են երկրորդ սեր և ջերմություն, որ առաջինի պես հուզական և վաղանցիկ չէ, այլ ավելի կայուն ըստ հայր Ամոնի: Եվ սա նմանվում է նաև սուրբգրային հետևյալ առակին. որ մի մարդ աշխատելով մի հողակտորի վրա, գանձ գտավ, բայց քանի որ հողակտորը իրենը չէր, նա իրեն մեծ ուրախություն պատճառած այդ գանձը նորից թաղեց, ապա գնալով՝ վաճառեց ամեն բան, ինչ-որ ուներ և գալով՝ գնեց հողակտորը՝ գանձով հանդերձ:

Առաջին սերը և ջերմությունը, որ տրվեց, և ուրախության մեծ պատճառ եղավ, խորհրդանշեց գանձի գտնելը, կորցնելը, գանձը նորից հողի մեջ թաղելը, իսկ որպեսզի այն սեփականացվի, արդեն սրա համար գին է պահանջվում: Այդ գինը վճարելու համար պետք է ամեն բան անվերապահ վաճառել: Խոսքը շատ ու քչի մասին չէ: Ինչպես որ այրի կնոջ երկու լուման ընդունելի եղավ, իսկ հարուստների գանձերը՝ ոչ, չնայած որ չափազանց ավելի էին երկու լումայից, բայց ընդամենը մի մասն էր ունեցվածքի՝ ընդունելի չեղավ: Զէ՞ որ ասվեց. «Զեք կարող իմ ետևից գալ, մինչև որ չուրանաք ձեր հորը, մորը, կնոջը, երեխաներին և, եթե ինքներդ ձեզ էլ չուրանաք, չեք կարող ձեր խաչը վերցնել և ինձ հետևել»:

Պետրոս առաքյալն էլ ասաց, թե՝ Տեր, մենք ամեն բան թողեցինք: Այսինքն՝ տուն, տեղ, ընտանիք, ձկնորսություն, բայց սա դեռ ամեն ինչ չէր: Ուրանալով այս ամենը, Պետրոսը դեռ չէր ուրացել իր անձը, որը և հաստատեց աքաղաղը: Բայց երբ զղջալով ուրացավ իր անձը, այն ժամ ստացավ երկրորդ սերը և ջերմությունը և չխուսափեց հանուն Տիրոջ գլխի վրա խաչվել:

Ցավոք, շատերն ընկնելով այս անապատային վիճակի մեջ, փոխանակ անձնուրացության ուղով ջանալու ձեռք բերել այն, ինչ կորցրին, ծուլությունից և այլ մարմնավոր խորհուրդներից բռնված, խաբվելով սատանայից, սկսում են այդ անապատից դուրս գալու փոխարեն, իրենց համար, հենց անապատի մեջ, կառուցել Քանանի նմանակը՝ կեղծվածը:

Իրականում սա ինքնախաբեություն է, այսպես կոչված, միրաժ, որը կարծես թե կա, բայց իրականում՝ չկա: Այն խոսքի համեմատ, թե. «Աստվածպաշտության կերպարանք ունեք, բայց Աստծո զորությունը ուրացել եք»: Ինչպես որ այն տասներկու հետախույզ-

ներից միայն երկուսը Աստծո զորությանը վստահե-
ցին, իսկ տասը՝ ետ կանգնեցին, չնայած Աստծո ժողովրդի
ընտրյալներից էին, և իրենց հետ ապստամբեցրին ողջ Իսրայելին,
որն էլ դարձավ կորստի պատճառ թե՛ նրանց, թե՝ շատ-շատերի հա-
մար: Իսկ Քաղեբը և Հեսուն արժանացան Քանանի երկրին, քանի որ
չվախեցան պատերազմի մեջ մտնել՝ վստահելով Տիրոջ զորությանը:
Թեև իրենք էլ տարան անապատի քառասուն տարվա հոգնությունը, և,
կարծես, 40 տարի անց, արդեն անհուսությունից, հասան բաղձալի
նպատակին. «Քանզի, արդարև, Տերը բարեգութ, որպես օրինակ մարդ-
կությանը, լացեց նաև թաղված այն ազգականի (Ղազարոսի) համար,
լացեց մոլորյալ Երուսաղեմի, նույնիսկ մոլեգնած Հուդայի վրա, որոն-
ցից վերջին երկուսը կորցրին հույսը փրկության՝ ծովում կործանված
այս նավակի պես, մյուսը, սակայն, անդնդի հատակն հասնելուց հետո,
հույսի առասանն իր ձեռքում պահած, Փրկչի զորությամբ հանգիստ,
ապահով դուրս ելավ նորից» (Նարեկ):

Իսրայելի հեղգանալու պատճառն այն էր, որ Քանանը որպես բուն
նպատակ աչքաթող էր արվել: Քանանն իր արժեքը կորցրել էր նրանց
համար: Փոխարենն արժևորվել էին լորամարգիները, մանանան, սառը
ջուրը, երգն ու պարը, փառամոլությունը, կռապաշտությունը և, նույ-
նիսկ, աստվածպաշտությունը մի ուրիշ ձև էր ուզում ստանալ: Մովսե-
սը մի նպատակ ուներ. Տիրոջ կամքը կատարելով՝ Իսրայելին հասցնել
Քանան, իսկ Դաթանը, Աբրիոնը և Ահարոնի երկու որդիներն ուզում
էին աստվածպաշտությունը ծառայեցնել իրենց կրքերին և, անապատի
տապի մեջ, զգացմունքներին հագուրդ տալուն:

Ալեկոծ և մթին ծովում նավը որպես նպատակ և փրկություն, ամեն
կերպ ջանում է իր տեսադաշտից չկորցնել փարոսը, որն իրեն խոստա-
նում է խաղաղ նավահանգիստ: Եվ եթե երբեմն ալեկոծության կամ
անփութության պատճառով տեսադաշտից կորում է փարոսը, ապա ան-
հոգ չպետք է լինել, այլ ամեն ջանք թափել՝ այն վերագտնելու համար,
խոսքի համեմատ, թե. «Փնտրեցեք Տիրոջն ու հզորացեք, փնտրեցեք
Նրան ամեն ժամ» (Սաղմոս 104), նաև՝ «Նայեք ձեր հավատքի կատա-
րողին և առաջնորդին»:

Այն քրիստոնյաները, որոնք կորցրել են առաջին շնորհները, և այն
վերագտնելու փոխարեն, ստեղծում են դրա կեղծվածը՝ բուտաֆորիան:
Նրանք սկսում են մեկ այլ ջանասիրությամբ ոչ թե կորածը գտնել, այլ՝
եղած վիճակի մեջ մնալով, Աստծուն ծառայություն մատուցանել:

Նավաբեկության ենթարկված և իր վայելչություններից զրկված
նավն իրեն փրկելու, վերստին նորոգվելու փոխարեն, մտածում է այդ
վիճակում մեծ ճանապարհորդություններ կատարել, մեծ-մեծ գոր-
ծեր անել: Շատ բնորոշ է նման ջանքը գնահատվել մի հոգեշ-
ահ գրքում. «Աստծո հա-

մար, բայց՝ առանց Աստծո»: Ով այս պարագայում
ամեն բան կեղծում է, կորցրած խնդրության փոխարեն ձեռք է
բերում անզուսպ ծիծաղ, սեր՝ առանց ջերմության, այլ՝ կեղծավո-
րությամբ, չարին բարիով հաղթելու փոխարեն գլուխ է բարձրաց-
նում բարկությունը, վրեժխնդրությունը, մերձավորին դատելը, բամ-
բասելը, նախանձը, հիշաչարությունը և այլն:

Եվ առաջնորդվելով նման ձևով, քրիստոնյաները միայն անունով են
լինում քրիստոնյա, որի համար ասվում է. «Վա՛յ ձեզ, որ նման եք գե-
ղեցիկ և հարդարված գերեզմանների, որը լի է ամեն տեսակ ապակա-
նությամբ»: Այս խոսքերը վերաբերվում էին փարիսեցիներին, որոնք
երկար աղոթում էին, երկրից-երկիր էին ընկնում, որ մեկն ու մեկին
քարոզելով՝ դարձի բերեն, պահք էին պահում և այլն, բայց իրենց ներ-
քին՝ սրտի հարցերը, անտես էին անում, որի համար և ասվեց. «Սոդո-
մի և Գոմորի համար դատաստանի օրն ավելի հեշտ կլինի, քան ձեր
համար»:

Այո, այս պարագայում ամեն բան կեղծված է: Քրիստոնյան գտնվում
է բերկրաթմբերի մեջ, այսինքն՝ կեղծը դնում է իրականի տեղ և այդ
գաղջ վիճակում ինքն իրեն համոզում, որ ամեն բան լավ է, որոնց և
շատ սազական է սուրբգրային այն խոսքը, թե. «Նրանք կարծես կիսա-
եփ ճակնդեղ լինեն: Նրանց մեջ Տիրոջ բարկությունն է լցված, նրանք
խոտորված են Տեր Աստծուց: Դրա համար էլ լսիր, ով տառապյալ, որ
հարբած ես, բայց ոչ գինուց» (Եսայի 51:20-21):

Նման վիճակում մարդը փոխարեն ջանա ձեռք բերել Աստծո երկյու-
ղը, ինչը մղիչ ուժ է այս գաղջության ճահճից դուրս գալու համար և
պատճառ՝ կորցրած շնորհները գտնելու, «փափուկ բարձ» է դնում գլ-
խի տակ՝ ինքն իրեն խաբելով և հետևելով չար դիվային վարդապետու-
թյանը, թե. «Դու արդեն ապաշխարել ես, դարձի ես եկել: Էլ ոչ մի բան
քեզ չի սպառնում, կարող ես անհոգ լինել, քո փրկությունն ապահով-
ված է, և այլևս ոչինչ չի սպառնում»:

Ինչպես գրում է Սարգիս Շնորհալին. «Համարելով ինձ արդեն իսկ
փրկված, կրեցի ես շատ մեծ վնասներ»: Եվ այս վարդապետությունը
մղում է սրա-նրա հարցերով զբաղվելու, անտես անելով սեփականը: Եվ
զարմանալին այն է, որ բազում սուրբգրային համարներ այս պարագա-
յում են անտեսվում. մխացող նետեր, մռնչացող առյուծներ, մանր աղ-
վեսներ, որոգայթներ, գայթակղություններ, նաև՝ բարի պատերազմի
զրահներ, որով կոչ է անում զինվել առաքյալը:

Զմոռանանք այն առակները, որոնք ամեն կերպ քրիստոնյային մղում
են «ահով և դողով» իրենց փրկությունը գործել, այսինքն՝ հիմար
կույսերը, որոնք թեև սպասում էին փեսային, բայց չարժանացան և
դրսում մնացին, նաև այն ծառաներից մեկը, որ ծույլ և ան-

պիտան կոչվեց այն բանի համար, որ իրեն վստահ-
ված գումարն անհոգության պատճառով պահել էր և հանդի-
մանվեց. «Կապեք դրա ձեռքերը և ոտքերը, մեջտեղից կտրեք և նե-
տեք արտաքին խավարը ու անհավատների հետ դասեք նրան»: Ահա
տեսնում ենք, որ այն ամենը, ինչը սպառնում է անհավատին, սպառ-
նում է և իր փրկության գործում անհոգ քրիստոնյային: Նաև սերմնա-
ցանի առակը: Չէ՞ որ չորս վիճակներից միայն մեկն է, որ փրկության
պիտի արժանանա: Մյուս երեքն էլ լսել էին Աստծո խոսքը և, նույնիսկ,
երկուսը բավականին աճ էին ունեցել, բայց մնացել անպտուղ, որի հա-
մար ասվում է, թե. «Լավ էր, ընդհանրապես, ճանաչած չլինեինք, քան
թե՝ ճանաչելով ետ կանգնեինք»:

Եվ առաքելական թղթերի մեծամասնությունն էլ, հիմնականում, մի
նպատակ ունեն. արդեն իսկ դարձի եկած քրիստոնյաներին վերջնական
փրկության առաջնորդել, ինչպես ասում է առաքյալը՝ «ընթացքը կա-
տարել»: Եվ քանի որ մարդուն տրված է մեկ անգամ մեռնել, այնու-
հետև՝ դատաստան, միգուցե արժե՞ մի փոքր ջանք թափել նմանօրինակ
ճահճային, գաղջ, խաբուսիկ վիճակից դուրս գալու համար: Մնում է
մի բան՝ կամ վերագտնել կորցրած սերը և ջերմությունը, ըստ Հովհան-
նես Սանդուղքի, որն այսպես է ասում. «Երբ անձը, ինքն իրեն դավա-
ճանելով՝ կորստյան է մատնում երանելի և բաղձալի ջերմությունը,
այնժամ թող քննի մանրակրկիտ, որպեսզի տեսնի, թե ինչ պատճառով
զրկվեց դրանից: Եվ այդ պատճառի վերացման վրա թող կենտրոնացնի
իր ամբողջ ջանքը և իր բոլոր ունակությունները, քանի որ նախկին
ջերմությունը հնարավոր չէ ուրիշ կերպ հետ բերել, եթե ոչ այն դռնե-
րով, որոնցով այն դուրս է եկել»:

Եվ կամ տրվել անհոգության, մինչև որ հասնի այն օրը, երբ ամեն
բան կդրվի արդարադատության կշեռքի նժարներին:

Շատ մոտ է այդ օրը, երբ կորոշվի մեր հավիտենական բնակության
վայրը: Որպեսզի պատկերավոր լինի մեր կյանքի տևողության և մեզ
սպասվող հավիտենականության իրավիճակը, քննենք մի օրինակ:
Ասենք՝ մի մարդու հաղորդեն, թե քո յոթանասնամյա կյանքի տևողու-
թյունից մի ակնթարթ պիտի կրճատվի՝ ինչ-որ հիվանդության պատճա-
ռով, ի՞նչ եք կարծում, կտխրի՞ այդ մարդը: Դժվար թե այս լուրը նրան
մեծ անհանգստություն պատճառի, քանի որ ակնթարթը չափազանց
աննշան մի տևողություն է, համեմատած յոթանասուն տարվա հետ,
իսկ եթե այժմ այդ յոթանասուն տարին համեմատենք մեզ սպասվող
հավիտենականության հետ: Կտեսնենք, որ այն ահավոր փոքր, չնչին
միջոց է, աներևակայելիորեն փոքր մի բան:

Իսկ այն ակնթարթը, որը համեմատեցինք յոթանասուն տարվա
հետ, չնայած ոչնչի է նման, սակայն միևնույն ժամանակ սա

չափազանց մեծ ժամանակ է, քան հավիտենակա-
նության հետ համեմատած յոթանասուն տարին: Ահա այստե-
ղից կարելի է եզրակացնել, թե ինչպիսի չնչին ժամանակ է մեզ տր-
ված մեր հավիտենության հարցերը լուծելու համար: Սրա համար էլ
Պողոս Առաքյալը ասում է, թե. «Ժամանակը ծախու առեք»:

Վա՛յ մեզ, եթե անհոգ և ծույլ գտնվենք, վա՛յ մեզ, եթե չեղվենք ճշ-
մարտության ուղուց: Մի՞թե այս չնչին ժամանակը չարժի զոհել՝ հա-
նուն հավիտենական անվախճան կյանքի, միևնույն ժամանակ խուսա-
փելով անվախճան տանջանքներից, մշտնջենական խավարից, լքումից,
գեհենի հրից, ատամների կրճտոցից ու լացից:Այսպես է գրված. «Այսօր
է ընդունելի ժամանակը, այսօր է ապաշխարության օրը, վաղվան մի՛
թողեք, քանի որ չգիտեք, թե վաղն ինչ կծնի»:

Ի՞նչ վիճակի մեջ կլինենք մենք, եթե դատաստանի ահավոր օրը
պարզվի, որ ոչ թե մեր խաչն ենք կրել, այլ եղել ենք պատրանքի մեջ՝
կրելով ընդամենը խաչի կեղծված օրինակը՝ բուտաֆորիան:

Ուրեմն, ջանանք ելնել այս վիճակից՝ հետևելով սուրբ հայրերի
խրատներին, և ջանանք ճանաչել մեր շեղումները և սխալները: Եվ ըստ
սուրբ Գրիգոր Նարեկացու, աղերսենք Տիրոջը, որ օգնի մեզ գտնելու
կորցրածը. «Եվ այսպես, չարի որոգայթները, ըստ Հոբի խոսքի, անելա-
նելի պաշարել են ինձ: Եթե ցույց տրվի բարերար կամքիդ լույսն ողոր-
մության, եթե գթության դռները բացվեն, եթե ծավալվի ճաճանչը
փառքիդ, հայտնվի խնամքը գթած, տարածվի կենաց օրն արեգակիդ,
բացվի ըղձալի դեմքն առավոտիդ, թե աղբյուրանա առատությունը մե-
ծիդ քաղցրության, վտակն Արարչիդ կողերից հոսի, ցայտի կայլակը
անապակ սիրուդ, շնորհիդ խոստման ծագումն երևա, ծաղկի կենսատու
ծառը պարգևիդ, բաշխվի մասունքը մարմնիդ սրբազան, եթե արծարծ-
վի հույսը առկայծման, լսվի ընդհատված ձայնը ողջույնիդ, և քո հե-
ռացած խաղաղությունը դարձյալ մոտենա: Այդ երանելի վիճակով այն-
ժամ, զինված հաստատուն հույս ու հավատով, ապավինելով հավետ
Սուրբ Հոգուդ, որը պաշտվում է բարձրյալ Հորդ հետ, ու քաղցր ձայ-
նով փառաբանվում է լույսում անմատույց, ես՝ մեղապարտս, կստանամ
և կյանք, և երանություն՝ քավությամբ հանդերձ: Եվ դրանք իմ մեջ
կպահվեն որպես անկորուստ ավանդ, առհավատչյա և ստույգ հիշա-
տակ, անմահության քո անեղծ պարգևի, անճառ, ահավոր, հզոր, միայն
սուրբ, անձնավորումդ անքնին, անհաս եռյակ տերության, որ իսկու-
թյան մեջ, բարձր ու հարակա, թագավորում ես՝ պսակազարդված միշտ
քո քաղցրությամբ, ողորմությամբ ու մարդասիրությամբ:

Բոլորի հանդեպ, ըստ ամենայնի, ամեն ինչի մեջ կարող ես, գթած,
Քեզ վայելում է Փառք և՛ այս կյանքում, և հանդերձյալում մշտն-
ջենական մեծ օրն հայտնության, հավիտյանս. ամեն»:

Սուրբ հայր Ամոնի թուղթը

Սուրբ Հոգին հանգչում է ուր որ կամենում է, հանգչում է սրբերի, հանդարտների և մարդկանցից ցածրագոների մեջ, և եթե մեկը քաղցրությամբ լցվում է Սուրբ Հոգով, Հոգին նրան սկզբում տալիս է Աստծո երկյուղը և ջերմություն՝ նրա սրտին: Եվ երբ նրանց շնորհում է սրտի ջերմություն, տալիս է նրանց շնորհ՝ ատելու աշխարհի պետքերը, ոսկին և արծաթը, և նրանց բոլոր հոգսերը՝ հայր և մայր, կին, որդիներ և եղբայրներ, սիրելիներ և աշխարհի մեջ եղած բոլոր զբաղմունքները: Եվ շնորհում է նրան լինել ընչազուրկ (անինչք), անուրեք՝ նման Աստծո Որդուն, և քաղցրացնում է նրա համար Աստծո գործերն առավել, քան մեղրախորիսխը. թե՛ աշխատանքները, թե պահքերը, թե՛ հսկումները, թե հանդարտության լռությունը և ողորմածությունը, ամեն բան Աստված խաղաղությամբ քաղցրացնում է նրա համար, մինչև որ ամեն բան սովորեցնի նրան: Եվ երբ ամեն բան սովորեցնում է, այնուհետև գալիս են փորձություններ, և այնժամ ամեն գործ, որ առաջ քաղցրություն էր պատճառում նրան, ծանր և դառն է համարում: Շատերը, որոնք նման փորձության մեջ են ընկնում, նրանց սկսում է քաղցր թվալ մարմնական խորհուրդներից առաջացած խրատները, և սրանք վիրավորվելով՝ ընկնում են և չունեն արդարության կշիռ: Այս է, որ Պողոսն ասում է. «Հոգով սկսեցիք և հիմա մարմնով եք վերջացնում» (Գաղատ. 3:3), և այդքան իզուր աշխատեցիք:

Իսկ եթե մարդն ընդդիմանա սատանային հենց պատերազմի սկզբում և հաղթի չար դևին՝ Աստծո շնորհիվ, քանի որ մարդը պարտավոր է իր հաղթությունն Աստծունը համարել, ապա դրանից հետո Աստված տալիս է նրան Իր սիրո հաստատուն ջերմությունը և անխռով համբերությունը, քանզի առաջին ջերմությունը հուզական է և անհաստատ, իսկ երկրորդ ջերմությունն առավել հաստատուն և անշարժ: Եվ սրանից ծնվում է երկնավոր գանձերի մեծության տեսությունն ու իմացությունը, որն իր մեջ ունի անխռով և անհույզ համբերություն:

Եվ նավի նման՝ քաղցր և ազնիվ, հողմերից ջրի երեսին համաչափորեն առագաստը օդով լցրած, թռչնի նման առաջ է

սլանում, մինչդեռ նավորդները հանգչում են ուրախությամբ: Եվ հիմա դուք՝ իմ սիրելինե՛ր և որդինե՛ր, ձեր սրտերի խորհուրդներում ստացեք երկրորդ ջերմությունը, որպեսզի հանգստություն ունենաք ամեն ինչում, քանի որ նա, ով ըստ այն երկրորդ ջերմության է ապրում, կարող է խոնարհեցնել բոլոր ախտերի շարժումները, և վերջինս նորոգում է մարդու ողջ հնությունները, սրում մարդու իշխանական միտքը չար խորհուրդներից, և ապա սա էլ բնակեցնել է տալիս աստվածությանը մարդու մեջ, որպեսզի մարդը լինի տաճար Աստծո, ինչպես որ գրված է, թե՝ «Կբնակվեմ նրանց մեջ և կընթանամ նրանց հետ»:

Իսկ երբ մեկը կամենա փորձությունների պատճառով իրենից հեռացած առաջին ջերմության տեղն ընդունել երկրորդ ջերմությունը, ապա այս առաքինության գործ է: Նա թող իր և Աստծո միջև ուխտ անի՝ ասելով, թե՝ ներիր ինձ իմ առաջին մեղքերը, որոնցում ծուլացա, այլևս չեմ անցնի Քո խոսքից: Եվ այնպես պետք է անի, որ որևէ մարմնավոր խորհուրդ չբնակվի իր մեջ ու մնա: Եվ տեղիք չտա իր մարմնական ցանկություններին կամ սրտի շարժումներին, այլ ամեն ժամ իր խոհուրդները պարզի Աստծո առաջ: Եվ ուրախացող արտասուքով հանդիմանի իր հոգուն և ասի. «Ինչո՞ւ ծուլացար մինչև հիմա և խոպանացար այսչափ օրեր ու ժամեր»: Եվ նորից հիշի բոլոր տանջանքները և անանց Արքայությունը՝ հանդիմանելով իր հոգուն ամեն ժամ, ասելով, թե՝ «Ինչպե՞ս Աստված շնորհեց քեզ և պատրաստեց այդքան պատիվը, և դու ծուլացար ու կարճմտեցիր»:

Եվ երբ այս ամենը հոգին ասի ինքն իրեն՝ հանդիմանելով ցերեկ ու գիշեր և ամեն ժամ, շուտով մարդը կհասնի Աստծո սիրո երկրորդ ջերմությանը, որը լավագույն է, քան առաջինը: Քանզի երանելի Դավիթը, երբ տեսնում էր, որ իր վրա է եկել խորհուրդների ծանրությունը, տրտմելով այսպես էր ասում, թե՝ «Հավիտենական տարիները հիշեցի և խոսեցի» (Սաղմ. 76:6): Եվ դարձյալ՝ «Հիշեցի առաջինները և խոսեցի քո գործերի մասին» (Սաղմ. 76:11), «Քո ձեռքերի արարածների մասին խորհեցի և քեզ տարածեցի իմ ձեռքերն աղոթքներով հանդերձ»: Եվ դարձյալ Եսային ասում է. «Երբ որ դառնաս և հեծեծես, այնժամ կապրես և կիմանաս, թե ուր էիր սկզբում»: Եվ արդ, իմ սիրելի՛ որդյակներ, եթե այսպես ամրացնենք մեր խորհուրդները և սանձահարենք մեր հոգին ու մարմինը, խոնարհությամբ և լռությամբ բոլոր ախտերը մեզանից կհանենք Քրիստոսի շնորհով, Որին փառք հավիտյանս: Ամեն («Հարանց Վարք»):



Մեր սուրբ հայրապետ Հովհան Մանդակունու թուղթը բարկացողների համար

Մեղքի բոլոր բնություններից և պիղծ ախտերի անօրենություններից առաջացած անիրավությունները անձը ամեն կերպ ջանում է ծածկել մարդկանցից: Իսկ բարկության ախտի մոլությունը այդպես չէ, նա անամոթ է և վայրենաբարո, անպարկեշտ և գազանամիտ, աղաղակելու պահին նա նմանվում է մրգապահների կողմից հալածված հավքի, որն արագ շարժվում, և դեռևս օդ չթռած, սկսում է կարկաչել, ցույց տալով իր բնության թեթևությունը: Այսպիսին է բարկացող մարդը, որ տակավին սրտին չհասած խոսքի ընդդիմությունը, բորբոքվում է՝ աղաղակելով և նմանվում բոցկլտացող կրակի, իր բնության անամոթ թեթևությունը բոլորին ցույց տալով և անբարեհամբույր գազանության երեսից չի կարողանում ծածկել իր մոլության անօրենությունը: Այլ՝ կրակի մեջ մտած քամու նման, վառում է իր բարկության անօրենությունը և խոսքով բոլորին ցավ պատճառում, ասպատակողների արշավանքի պես: Քանզի, երբ մեկը բարկության դևին հնազանդվի, վերջինս նրա բոլոր զգայությունները կհիմարացնի, նրա լեզվին ուզածի պես չարություն խոսել կտա, բերանը թշնամությամբ կլցնի, միտքը ցասումով կգազանացնի, սիրտը բարկությամբ կթնդացնի, լյարդը պնդությամբ կկարծրացնի, արյունը կեռացնի, մարմինը կգազանացնի, աչքերը կայլագունի, դույնը կփոխի, մարդուն կվայրենացնի և նրան բազում անպարկեշտություններ բառբառել կտա՝ վայրենի գազանների գազանությունից ավելի գազանացնելով: Նույնիսկ, խածոտող գազանների և թունավոր սողունների մեջ չկա այսպիսի չարաբարոյություն և, տակավին, ո՛չ խժերի և ո՛չ էլ քարբի դառնությունը չի հավասարվի բարկացողների ախտերին: Ո՛չ մահաբեր թույները և ո՛չ էլ կարիճի խայթոցները չեն նմանվում բարկության խայթոցներին, ո՛չ սրի կտրածը և ո՛չ կրակի այրուցքը չեն կարող այնքան կսկիծ առաջացնել, որքան բարկացողները, և դեռ պետք է ասել, որ դիվահարները դևերից այնքան չեն չարչարվում, որչափ բարկացողները:

Որովհետև դևը հանապազ նախանձի բարկությամբ վառվելով, միշտ պնդում է անհաշտ ոխակալության վրա և բարկացկոտի սրտի վրա միշտ թանձր է պահում նախանձի խավարը: Ինչպես որ թունավորներըմշտապես իրենց հետ կրում են իրենց թույնը, նույնպես էլ բարկացողները իրենց հետ կրում են նախանձի քենը և ցասումը: Կատաղի շների նման հարձակվում են բոլորի վրա, կարիճների նման խայթում են՝ լցված բարկության թույնով, քանի որ չեն կարողանում անմիջապես խոնարհվել միմյանց: Նրանք իժեր ու իժերի ծնունդներ են կոչվում, քանի որ անհաշտ են միշտ միմյանց հետ և անհնազանդ՝ մեկզմեկու: Շատ են խոսում՝ յուրաքանչյուրն իր անձը արդարացնելու համար, և պատմություններ հորինում՝ իրենց ելը արդար ցույց տալու նպատակով, բոլորի առջև ուզում են իրենց հանցանքը ընկերոջ վրա բարդել, և նրանց մեղավոր կարծեցնել տալ լսողներին: Քանի որ տրտմության պահերին դևը նրան մղում է անզգջության, և խստացնում նրա միտքը, որպեսզի չապաշխարի, սիրտը քարացնում է, որպեսզի ականջ չկախի եղբոր խրատներին կամ գրվածքների վարդապետությանը: Իր զգայարանները բթացած սատանայի կողմից, այլևս չի ճանաչում իր հանցանքները, այլ՝ այնպես է թվում իրեն, թե ինքը բոլորովին անմեղ է, իսկ ընկերները հանցապարտ: Նմանապես և դիմացինն է իրեն արդար կարծում, իսկ ընկերոջը՝ մեղավոր: Խստացնելով մեկի սիրտը, սատանան համոզում է, որ սա չզիջի, քանի որ նախ դիմացինն է պարտավոր զիջել, քանի որ նա է մեղավոր, իսկ մյուսին պնդել է տալիս, թե պետք չէ նախ դու իրեն հնազանդվես, որովհետև անմեղ ես: Եվ այսպես, երկկողմանի թշնամությամբ, սատանան մարդկանց իրարից անզիջող և անապաշավ ոգով բաժանում է: Ժամանակի ընթացքում ծանրացնում է եղբոր սիրտը և այնպես է կարծել տալիս նրան, թե ամոթ և նախատինք է իրեն համար ընկերոջ առջև խոնարհվելը, քանի որ, ասում է սա մտովին, եթե նախ ես զիջեմ, ամեն ոք ինձ հանցավոր պիտի կարծի, իսկ նրան՝ անմեղ, և այս պատճառով, գազանացած մնում է անհնազանդության մեջ: Քանզի բարկության անօրեն ախտը, եթե երբևէ տիրի մարդու մտածմունքին, իրենից կհափշտակի իր միտքը, կգազանացնի իրեն և կհեռացնի նրանից Աստծո երկյուղը ու ահեղ դատաստանի սարսափը: Եվ այսպիսով, հեռանալով արդարությունից, սա էլ դատաստանը երբեք մտքով չի անցկացնում և չի մտաբերում իր մահվան օրը ու սարսափելի բեմի արհավիրքները, այլ՝ պնդելով, մաքառում է, որպեսզի իր անձի կամքը կատարվի: Ոչ եղբոր տված ամոթանքը, ոչ վարդապետների խրատը, ոչ պատվիրանների հրամանները, ոչ Աստծո երկյուղը, ոչ Արքայության փափկությունները և ոչ էլ տանջանքների արհավիրքները պատկառանք չեն առաջացնում նրա մեջ՝ զղջումի ու ապաշխարության համար: Նաև, նա համարձակ-

վում է եկեղեցի մտնել՝ Աստծուն աղոթք մատուցելու համար, որոնք ոչ ընդունելի, ոչ էլ Աստծո մոտ լսելի կլինեն: Տերն Ինքն է քեզ ասում. «Եթե քո ընծան պատարագի սեղանին բերես և այնտեղ հիշես, որ քո եղբայրը քո դեմ քեն ունի, թող ընծադ սեղանի վրա, գնա հաշտվիր եղբորդ հետ, ու ապա արի՝ ընծադ մատուցելու» (Մատթ. 5:23), և այն ընդունելի պիտի լինի:

Յուրաքանչյուր մարդու աղոթք, որն ինքնին պատարագ է, անընդունելի կլինի Աստծո մոտ, եթե նա, նախ չգնա և չհաշտվի իր տրտմյալ եղբոր հետ, իսկ աղոթքը ընդունելի կլինի, եթե, նախ հաշտվի նրա հետ: Ինչպես որ ասված է. «Արևը ձեր բարկության վրա մայր չմտնի» (Եփես. Դ-26), որպեսզի չպատահի, որ գիշերվա մեջ դևերը մոտդ գան և դրդեն քեզ՝ մյուս օրն էլ չհաշտվելու եղբորդ հետ, և մտքիդ մեջ արթնացնեն չար խորհուրդներ ու նախանձ, և տեսակ-տեսակ նենգություններ: Այլ՝ դեռ ցերեկը չմթնած, գնա ու հաշտվիր եղբորդ հետ: Մինչդեռ աշխարհի մեջ ես, բարեկամացիր ոսոխիդ հետ, որպեսզի չլինի, որ նա քեզ դատավորին մատնի, դատավորը՝ դահճին, դահիճը՝ բանտին, և այնտեղից էլ դուրս չելնես: Նույնպես էլ դու, տակավին գիշերը վրա չհասած, փութա հաշտություն կնքել ընկերոջդ հետ, առանց մյուս օրվան հետաձգելու, որովհետև անհայտ է մեզ համար այս աշխարհից մեր ելքի օրը, և չգիտենք, թե հաջորդ օրը պիտի ժառանգե՞նք, թե՞ ոչ, թեպետ Տիրոջ ողորմությամբ ժառանգում ենք հաջորդ օրը, սակայն չենք շտապում հաշտվելու եղբոր հետ: Սրանով նմանվում ենք հեթանոսներին, որովհետև չկա քրիստոնեություն՝ առանց եղբոր և ընկերոջ հետ հաշտության: Իսկ ինչպիսի՞ դառը տանջանքներով պետք է դատվեն նրանք, որ ընկերոջ հանդեպ թշնամության զգացում են տածում և սրբազան Խորհրդին են մոտենում:

Ինչպիսի՞ հուր և ինչպիսի՞ խավարային գեհեններ են արդյոք իրենց սպասում: Հաղորդվում ես Տիրոջ մարմնին, ի՞նչ է, ուզում ես Աստծուց գողանա՞լ՝ ընկերոջդ դեմ ունեցած թշնամությունդ թաքցնելով: Այո՛, Կայենը ևս ուզում էր Աստծուց գողանալ՝ թաքցնելով եղբոր սպանությունը, բայց նայիր նրա տագնապը և տատանումը, որ պտուղն էր իր չար խորհուրդների:

Նա, որ Տիրոջ մարմնին մոտենա և թշնամություն սնուցի բարեկամի դեմ, Փրկչի մարմինն իր համար կենարար չի լինի, այլ՝ կիզող հուր, որովհետև նա իր անձի դատաստանն է ըմպում և ճաշակում: Ոմանք էլ, հաղորդությանը չեն մոտենում, մերժելով եղբոր հետ հաշտվելը, այլ՝ երկար ժամանակ հեռանում են սուրբ Խորհրդից, և եղբորը աղաչելը և նրա հետ հաշտվելը ավելի ծանր բան են համարում, քան Քրիստոսի մարմնից և արյունից հեռանալը և այն չընդունելը: Ընկերոջը չխոնարհվելու համար, արհամարհում է Տերունական խորհուրդը:

Եվ չի՞ մտածում, թե Քրիստոսի փափագելի մարմնի սիրույն ընկերոջ հետ չհաշտվելով ավելի ևս արհամարհում է Աստծուն, ինչպես որ Պողոսն է ասում. «Ո՞վ կարող է բաժանել մեզ Քրիստոսի սիրուց՝ նեղությո՞ւնը, թե՞ մահը», սրանցից և ոչ մեկը չի կարող զատել Քրիստոսի սիրուց: Իսկ քո ունեցած մի կտոր թշնամությունը ընկերոջդ դեմ, քեզ բաժանեց Քրիստոսի սիրուց, և Սուրբ խորհուրդը մերժելով՝ հեռացրեց: Քանզի եթե մեկը հակառակվի քեզ, և դու Աստծո պատվիրանի համեմատ խոնարհեցնես քեզ, մի՞թե որևէ բան վնասած կլինես, ընդհակառակը, մեծապես կվարձատրվես: Եթե մեկը քեզ անարգի և արհամարհի, դու դրա վրա ավելացրու՝ ասելով ինքդ քեզ, թե՝ հող ու մոխիր էլ եմ:

Եթե մեկը քեզ գծուծ ու քրչոտ ցնցոտիավոր կոչի, դու՝ ասա, թե՝ մերկ եկա աշխարհ, մերկ էլ կգնամ այստեղից:

Այսպիսի խոնարհությամբ կկապես անօրենների լեզուն, կխցես թշնամիների բերանները, կքայքայես սատանայի ջղերը, կցրես նրա խորհուրդները, և քո թշնամիներից և ոչ մեկը չի կարող քեզ վնաս հասցնել, եթե միայն առողջ միտք ունենաս: Ահավասիկ, շատ շատերը թշնամություն կրեցին և համբերեցին, նույնիսկ, թշնամիների համար աղոթեցին: Ստեփանոսը իրեն քարկոծողների համար աղոթում էր, Մովսեսը, Սամուելը և, մանավանդ, Աստծո որդին՝ Քրիստոսը, թշնամություն կրեցին, բայց իրենց թշնամիների համար աղոթք էին մատուցում: Ու հիմա դու էլ նմանվիր այս երևելի մարդկանց և Աստվածորդուն: «Դադարիր բարկանալուց և վերջ տուր սրտմտությանը և չարերի հետ մի նախանձիր» (Սաղմ. ԼԷ 8), ասում է մարգարեն, քանի որ ուր որ բարկություն ու սրտմտություն կա, այնտեղ Սուրբ Հոգու շնորհները չեն հանգրվանում և բարկացող սրտից արդարության խորհուրդներ չեն դուրս գալիս, ինչպես որ ասվում է. «Մարդու բարկությունը Աստվածային արդարությունը չի կարող գործել» (Հակոբ. Ա-20):

Կա նաև արդար ցասում և արդար բարկություն, օրինակ, երբ Սամուելի և Փենեհեսի նման, Աստվածային պատվիրանների համար փափագում ես վրեժ լուծել և կամ զրկյալ եղբոր վրեժխնդրությունն ես ուզում առնել: Իսկ նա, որ սրանից ավելի բարկանա և ցանկանա իր անձի վրեժը լուծել, ապա սա հանիրավի բարկանալ կնշանակի, որի համար Քրիստոսը ասում էր, թե այդպիսին պիտի պարտավոր դառնա գեհենի հրին: Քանզի հանիրավի բարկությունը բացում է դուռը բազում ախտերի, որովհետև բարկության պատճառ է աղաղակը, կռիվը, ատելությունը, թշնամությունը, նախանձը, ոխակալությունը, վրեժխնդրությունը, սպանությունը և բազում այլ տեսակի չարությունները: Նա, որ հաղթահարի այս բարկությունը, այս բոլոր ախտերը կմարի, նման վառելանյութը սպառած կրակի: Քանի որ, երբ մեկը

բարկանա, և դու համբերությամբ կրես այն, բնա-
կանաբար, կտանես նրա բարկությունը: Իսկ եթե մեկը քեզ դի-
վահար կոչի, բնավ մի բարկացիր, եթե բարկանաս՝ թշնամուն ար-
դարացրած կլինես, որովհետև բարկությունը դևին է պատկանում,
այլ ոչ թե՝ Աստծուն: Ահա մեր Տիրոջն էլ դիվահար կոչեցին, և Նա բնավ
չբարկացավ, այլ հեզությամբ պատասխանեց, թե դև չկա իր մեջ: Մեկը
թշնամանալով արհամարհեց քեզ, մտաբերիր, թե որքան ավելի մեր Տի-
րոջ հանդեպ թշնամություն արեցին և արհամարհեցին: Մեկը կռվեց ու
ապտակեց քեզ, մեր Տիրոջն էլ խփեցին, ապտակեցին, և նույնիսկ, չար-
չարեցին ու խաչեցին, որոնց դու դեռ չենթարկվեցիր: Ուրեմն, այս բո-
լորը հիշիր այն պահին, երբ ցասումդ կբորբոքվի:

Սատանան, ինքնին, մեր դեմ բավական զորավոր թշնամի է, այն-
պես որ մեր եղբայրներին էլ մեզ թշնամի չդարձնենք, այլ փութանք
հաշտվել նրանց հետ, նրանց կանխելով և նրանց առջև ծունկի գալով՝
ընդունենք նահատակության պսակը: Քանզի ոսոխների և վեճերի մեջ
փառքի պսակներ են գտնվում: Նա, որ առաջինը նահատակվի և խո-
նարհվի իր եղբոր առջև՝ հաշտության համար, նա էլ կհափշտակի
պարգևն ու պսակը՝ իր նախախոնարհ նահատակության համար, քանի
որ իր խոնարհումով նա չար թշնամուն՝ սատանային, վիրավորեց, իր և
իր եղբոր կյանքը փրկեց սատանայի ձեռքերից և հավիտենական մահ-
վանից: Եվ սրա համար պիտի արժանանա բազմաթիվ վարձքի և անս-
պառ բարիքների վայելչությանը:

Ու հիմա, մի փոքր խոնարհության պատճառով, չկորցնենք հա-
վիտենական փրկությունը, որովհետև շատերը հավիտենական կյանքի
համար արհամարհեցին իրենց անձերը և ինչքը, ամուսնության սերն ու
որդիների գութը, համբերեցին զանազան տանջանքների և մատնվեցին
կրակի, որպեսզի միայն ժառանգեն Աստծո Արքայությունը: Իսկ քո
առջևդ ոչ հուր կա, ոչ սուր և ոչ էլ զանազան տանջանքների համբե-
րել, այլ միայն խոնարհվել տրտմած եղբորդ առջև, աղաչանքով հաշտ-
վել հետը և ընդունել նահատակության պսակը:

Ինչո՞ւ ես եղբորդ աղաչելու համար սիրտդ կարծրացնում, կրա-
կի չէ, որ պիտի դիմես, այլ խոնարհությանը: Ուրեմն, շտապիր աղա-
չանքով ընկերոջդ առջև ընկնել և արժանանալ նահատակության պար-
ծանքին, լուսո պսակին և երկնքի արքայության անսահման վայելչու-
թյանը: Այս բոլոր բաները լսելով մեր տրտմությունները մեղմացնենք,
բարկությունը շիջուցանենք, աղաղակը դադարեցնենք, սերը տենչանք,
խոնարհություն ստանանք, հնազանդություն ընդունենք և ընկերոջ
հետ հաշտվելու համար առաջ նետվենք, որպեսզի համարձակու-
թյամբ երկնքի բարիքները ժառանգենք, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիս-
տոսի հետ, որին փառք հավիտյանս, հավիտենից. Ամեն:

Նարեկ

Բան ԾԶ

Իմ դժոխարմատ մահառիթ ծառի պտուղները դառն,
Որոնք ընտանի թշնամիներ են,
Հակառակորդներ մոտ ու հարազատ,
Դավաճան որդիք,
Ստորև պիտի նշեմ մեկ առ մեկ իրենց անունով.
Ահա և դրանք.
Միտք նանրախորհուրդ, բերան չարախոս,
Տարփահայաց աչք, ականջ թյուրալուր,
Մահաձիգ ձեռքեր, երիկամ անթոր,
Մոլորուղի ոտք, աներկյուղ ընթացք, խոտոր ճանապարհ,
Ծխախառն շունչ, երթ խավարային,
Քարազանգված լյարդ, հեղհեղուկ մտքեր,
Անհաստատուն կամք, չարիք անփոփոխ,
Բարեմասնություն, խախտված հիմնովին,
Տարագիր հոգի, վաճառված ավանդ,
Վիրավոր գազան, նետահար թռչուն,
Փախչող գահավեժ, բռնված հանցապարտ, ծովահեղձիկ հեն,
Անպատրաստ մարտիկ, նենգավոր զինվոր,
Ցոփ սպառազեն, թուլամորթ մշակ,
Անսիրտ աղոթիչ, ստոր բեմական,
Անխունկ քահանա, անձիր վարդապետ,
Կշտամբված դպիր, ցնդած իմաստակ, բռի ճարտասան,
Լպիրշ կերպարանք ու անպատկառ դեմք,
Անամոթ երես, անմարդկային տիպ,
Ծանակելի գեղ, անհրապույր դույն,
Փչացած խորտիկ, զազրաթորմի համ,
Գաղձախեղդ այգի, որդնահարված որթ,
Ուտիճակեր հասկ, փչաբեր պարտեզ,
Մեղր, որ դարձել է մկներին ճարակ,

Անպաշտպան անկյալ, սնապարծ անհույս,
Անճար նզովյալ, անհաշտ բաժանված,

Դատարկ շաղակրատ, հավամիտ գոռոզ,
Գազան ապիրատ, դժնդակ ագահ,
Սանձազերծ լկտի, մոլագար դժխեմ, գուփող մարդասպան,
Որոմ ու տատասկ ցանող երկրագործ,
Հեգ երջանկություն, մեծություն սմքած,
Բարեզարդություն՝ զրկված պերճանքից,
Տկարացած ուժ, ընկած բարձրություն,
Փառավորություն՝ արված ոտնակոխ,
Անդուլ զանցառու, ինքնակամ գայթող,
Նենգ խորհրդակից, կամակոր տնտես,
Գժտված բարեկամ, գողամիտ հսկիչ,
Մերձավոր կծծի, ժլատ բաշխատուր, գծուծ տնօրեն,
Ըղձանքներ անսեր, սիրտ անկարեկից,
Ամենատյաց բարք, աղիքներ անգութ,
Անխոհեմ ընթացք, անարգ դիպվածներ,
Հողի գաղտնիքներ, ծածկություններ պիղծ,
Զեխ վաճառական, չվայտ շահարար,
Արբշիռ պաշտոնյա, խարդախ գանձապետ,
Բանսարկու դեսպան, դռնապան քնկոտ,
Աղքատ հպարտ ու ճղճիմ մեծատուն,
Ժանտ ատենապետ, մատնիչ պահապան, չարախոս դրկից,
Անհաս սուրհանդակ, մեղապարտ բանբեր,
Առաքյալ սադրիչ ու խռովարար, թանձրամիտ միջնորդ,
Տարագիր արքա, անարգ թագավոր, կայսր հոգեկործան,
Տիրադավ իշխան, զորավար զրկող,
Խորող դատավոր, անաշխատ ռամիկ,
Նախատողի ծաղր, բարեկամի ողբ,
Գրողի պարսավ, հանդիմանողի ամբաստանություն:
Կար ժամանակ, որ կրում էի ես
Շատերն այդ վսեմ հորջորջումներից,
Իսկ հետո վատթար որակումների
Աստիճանաբար արժանի դարձա.
Այնքա՜ն բազմադեպ ապականարար այդ չարիքների
Մի մասից, իրոք, խաբվեցի որպես հիմար ու անգետ,
Իսկ մյուսներին իմ տկարությամբ հպատակվեցի՝
Կամովին ինքս ինձ մատնելով մահվան:
Քեզ ատելի ու ինձ կորսաբեր
Վերոգրյալի ո՞ր մասը արդյոք

Ընծայեմ ի սպաս քո պաշտամունքին,
Որպիսինե՞րը ներկայացնեմ
Քո ամենասուրբ մեծության առաջ
Ամփոփարանս ապականության,
Եվ կամ դու ինչպե՞ս, ի՞նչ համբերությամբ
Այդքան մտքերս պիտի հանդուրժես,
Ներես ու լռես կամ լսես նույնիսկ,
Զենթարկես մահվան արժանավորիս դանակոծության:
Սակայն աննշույլ մթամածության
Խավարով պատած այս հոգիներին
Քո ողորմության լույսո՛վ ընդունիր՝
Նրանց բուժելու, կենսագործելու, քավելու համար,
Ո՛վ դու, զորություն անվթարելի,
Քեզ փառատրությո՛ւն հավիտյանս. ամեն:

(սբ. Գրիգոր Նարեկացի)

Բարկության, դատելու և հնազանդության մասին

Ամբարիշտին **խրատողը** ինքն իրեն արատ կվաստակի...

Աստվածաշնչից

Իմաստունին **խրատ** տուր և ավելի իմաստուն կլինի (Առակ 9:7):

1. Դադարի՛ր բարկանալուց և զայրույթդ վերջացրու, մի՛ նեղացիր և չարություն անել չփորձես (Սաղմ. 37:8):

2. Լսե՞լ եք, թե ինչ ասվեց նախնիներին. « Մի՛ սպանիր», որովհետև, ով որ սպանի, ենթակա կլինի դատաստանի: Իսկ Ես ձեզ ասում եմ, թե՝ ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի, և ով որ իր եղբորն ասի՝ հիմար, ենթակա կլինի ատյանի, և ով որ իր եղբորն ասի՝ ապուշ, ենթակա կլինի գեհենի կրակին (Մատթ. 5:21-23):

3. Բարկությունը հիմարին սպանում է, ու նախանձը անմիտին մեռցնում է (Հոբ 5:2):

4. Իմ սիրելի՛ եղբայրնե՛ր, իմացե՛ք այս բանը. թող ամեն մարդ արագ լինի լսելու մեջ, ծանր՝ խոսելու մեջ և ծանր՝ բարկանալու մեջ, որովհետև մարդու բարկությունը Աստծո արդարությունը չի կատարում (Հակ 1:19-20):

5. Թե բարկանաք էլ, մեղք մի՛ գործեք. արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի, և սատանային տեղիք մի՛ տվեք (Եփես. 4:26-27):

6. Ամեն դառնություն, բարկություն, զայրույթ, աղաղակ և հայհոյություն թող վերանա՛ ձեզանից՝ իրենց չարությամբ հանդերձ: Միմյանց հետ եղեք քաղցր, գթած՝ ներելով միմյանց, ինչպես որ Աստված ներեց մեզ Քրիստոսով (Եփես. 4:31-32):

7. Այժմ դուք ևս թոթափեցե՛ք այդ բոլորը՝ բարկություն, զայրույթ, չարություն, հայհոյություն և խեղկատակություն՝ ձեր բերանից (Կողոս. 3:8):

8. Հիմար և անկիրթ վիճաբանություններից ետ քաշվիր. իմանալով, որ կռիվներ են ծնում: Բայց Տիրոջ ծառային պետք չէ կռիվ անել, այլ ամենի հետ հեզահոգի լինել, սովորեցնող, ոխ չպահող (Բ Տիմ. 23:26):

9. Զգուշացե՛ք, չլինի որ մեկը Աստծո շնորհքից ետ մնա. չլինի թե բարկության արմատ վեր ելնի՝ ձեզ նեղելով, և նրանով շատերը պղծվեն (Եբր. 12:15):

10. Իսկ եթե ձեր սրտերում դառը նախանձ և հակառակություն ունեք, մի՛ պարծեցեք, որ սուտ եք հանում ճշմարտությունը: ...Որովհետև, ուր հակառակություն և նախանձ կա, այնտեղ կա անկարգություն և ամեն չար բան (Հակ. 3:14-16):

11. Սիրալիր պատասխանը մեղմացնում է զայրույթը, բայց խիստ խոսքը բարկություն է հարուցանում (Առակ. 15:1):

12. Կռվի սկիզբը ջրերի արձակման է նմանվում, ուրեմն՝ վեճը չբռնկված, ետ քաշվիր (Առակ. 17:14):

13. Շուտ բարկացողը հիմարություն է անում, իսկ իմաստուն մարդը՝ համբերում է (Առակ. 14:17):

14. Ընկեր մի՛ լինիր բարկացկոտ մարդուն և մի՛ առնչվիր դյուրաբորբոք բարեկամի հետ, որ չլինի թե սովորես նրա ճանապարհները (Առակ. 22:24-25):

15. Քարը ծանր է, ավազը դժվար է բարձրացնել, բայց երկուսից էլ առավել ծանր է անզգամի բարկությունը: Անողորմ է զայրույթը, բարկությունը՝ սաստիկ, բայց ոչ մեկից էլ պակաս չէ նախանձը (Առակ. 27:3-4):

16. Անօրեն մարդիկ քաղաքը մատնում են կրակի, բայց իմաստունները վանում են բարկությունը (Առակ. 19:8):

17. Ուրիշի դատ ու վեճին խառնվող մարդը նման է նրան, ով ձեռքը դցում է շան պոչը բռնելու (Առակ 26:7):

18. Ինչպես կատաղած մարդը, որ կրակի կայծեր, նետեր ու մահ է ցանում, այնպես է այն մարդը, որ իր բարեկամին նենգություն է անում և հետո ասում. «Կատակ արի» (Առակ. 26:18-19):

19. Կրակը չիկանում է ածուխից, փայտը բորբոքում է կրակը, բանսարկուն էլ հրահրում է կռիվ (Առակ. 26:21):

20. Շողոքորթների խոսքերը փաղաքշող են, բայց դառնում են կռվի բուն (Առակ. 26:22):

21. Հանցանքը ծածկողը բարեկամություն է փնտրում, բայց պատմողը՝ մտերիմ բարեկամներին է բաժանում (Առակ 17:16):

22. Եթե խոսքը ձգձգես, դատաստան ու կռիվ դուրս կգա (Առակ. 30:33):

23. Մի՛ շտապիր հոգուդ մեջ բարկանալ, որովհետև բարկությունը հանդչում է հիմարների ծոցում (Ժող. 7:9):

24. Եթե բարկանաք՝ մի՛ մեղանչեք, ձեր անկողնու մեջ ինչ էլ որ ասեք՝ ձեր սրտում զղջացեք (Սաղմ. 4:5):

25. Մարդը մարդու հանդեպ բարկություն է կուտակում, իսկ Տիրոջից բժշկություն է խնդրում: Իր նման մարդու հանդեպ նա չունի ողորմածություն, բայց աղերսում է իր մեղքերի թողության համար: Ինքը ևս հողեղեն է, բայց ոխ է պահում: Ո՞վ քավություն կտա նրա մեղքերին: Հիշիր քո վախճանը և դադարիր թշնամություն անելուց, հիշիր ապականացու լինելդ ու մահդ և մնա՛ պատվիրանների մեջ: Հիշիր պատվիրանները և ոխ մի՛ պահիր մերձավորիդ հանդեպ (Սիրաք 28:3-8):

26. Հեռու մնա վեճից և դու կնվազեցնես մեղքերդ, քանզի զայրացած մարդը կռիվ է բորբոքում, մեղավոր մարդը գժտեցնում է իր բարեկամներին և նրանց մեջ, ովքեր խաղաղությամբ են ապրում, բանսարկություն է դցում (Սիրաք 28:10-11):

27. Կրակը վառվում է ըստ իրեն սնող նյութի, իսկ կռիվն էլ բորբոքվում է ըստ նրան դրդռող սաստկության. մարդու զայրույթը լինում է ըստ նրա զորության և ըստ նրա հարստության՝ սաստկանում է նրա բարկությունը (Սիրաք 28:12):

28. Անգիջում հակառակությունը կրակ է բորբոքում, և անգիջում կռիվը արյուն է հեղում: Եթե կայծի վրա փչես, կբորբոքվի, եթե նրա վրա թքես՝ կմարի, այդ երկուսն էլ քո բերանից են դուրս գալիս:

Քսուն և երկերեսանին թող անիծվեն, քանզի բազում խաղաղ ապրողներ կործանեցին (Սիրաք 28:13-15):

29. Եթե ... քո բերանով բարկության ոչ մի խոսք չասես, այն ժամանակ կարող ես ապավինել Տիրոջը (Եսայի 58:13):

***

30. Մի՛ դատեք, որ Աստծուց չդատվեք, մի՛ դատապարտեք և չպիտի դատապարտվեք, ներեցեք և ներում պիտի գտնեք Աստծուց ... Ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի միջի գերանը չես նշմարում ... Կեղծավոր, նախ քո աչքից գերանը հանիր, ապա լավ կտեսնես՝ քո եղբոր աչքի շյուղը հանելու համար (Ղուկ. 6: 37-41):

31. Ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեր համար (Մատթ. 7:1):

32. Ուստի, ո՛վ մարդ, դու, որ դատում ես, չես արդարանալու այն բանի համար, որ ընկերոջդ ես դատում, դրանով իսկ ինքդ քեզ ես դատապարտում: Քանի որ դու նույնն ես անում, ինչի համար որ դատում ես նրան:

Քանզի գիտենք, որ Աստծո դատաստանը ճշմարտությամբ է գործադրվում նրանց նկատմամբ, ովքեր այսպիսի բաներ են գործում: Իսկ արդ, ո՛վ մարդ, դու, որ դատում ես նրանց, ովքեր այդպիսի բաներ են գործում, և դու էլ նույնն ես գործում, կարծում ես, թե ազատվելո՞ւ ես Աստծու դատաստանից (Հռոմ. 2:3-4):

33. Դու ո՞վ ես, որ դատում ես ուրիշի ծառային. կանգնած լինի, թե ընկած՝ իր տիրոջ համար է, բայց նա կկանգնի, որովհետև կարո՛ղ է Տերը նրան կանգուն պահել: ...Դու ինչո՞ւ ես դատում քո եղբորը, կամ ինչպե՞ս ես արհամարհում քո եղբորը, քանի որ բոլորս էլ կանգնելու ենք Քրիստոսի ատյանի առաջ ... որովհետև գրված է. «Կենդանի եմ ես, - ասում է Տերը, - որպեսզի ամեն ծունկ ինձ ծնրադրի և ամեն լեզու Աստծուն դավանի»: Ապա ուրեմն՝ մեզանից յուրաքանչյուր ոք Աստծուն հաշիվ է տալու իր համար: Ուստի, միմյանց չդատենք (Հռոմ. 14: 4-13):

34. Եղբայրներ, միմյանց մի՛ բամբասեք. ով բամբասում է եղբորը կամ դատում է եղբորը, չարախոսում է օրենքի մասին և դատում է օրենքը. իսկ եթե օրենքն ես դատում, օրենքը պահող չես, այլ դատավոր: Կա մե՛կ Օրենսդիր և Դատավոր, որ կարող է փրկել և կործանել. դու ո՞վ ես, որ դատում ես քո մերձավորին (Հակ. 4:11-12):

35. Սամվելն ասաց. «Մի՞թե Տիրոջ համար ավելի հաճելի են ողջակեզներն ու զոհերը, քան Տիրոջ ձայնին անսալը: Հնազանդությունն ավելի լավ է, քան խոյերի ճարպը» (Ա Թագ. 15:22):

36. Որովհետև, ինչպես մեկ մարդու անհնազանդությամբ շատ մեղավորներ եղան, նույնպես և մեկի հնազանդությամբ շատ արդարներ պիտի լինեն (Հռոմ. 5:19):

37. Հնազանդվեցե՛ք միմյանց Քրիստոսի երկյուղով: Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպես կհնազանդվեն Տիրոջը, որովհետև մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ

Քրիստոս գլուխն է եկեղեցու և ինքն է Փրկիչն այդ մարմնի: Եվ ինչպես եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես և կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց՝ ամեն ինչում (Եփես. 5:21 -24):

38. Լսեցե՛ք ձեր առաջնորդներին և հնազանդվեցե՛ք նրանց, որովհետև նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիվ են տալու ձեր փոխարեն: Եվ նրանք ուրախությամբ թող անեն այդ բանը և ո՛չ հոգոց հանելով, քանի որ այն ձեր օգուտի համար չէ (Եբր. 13:17):

39. Պետք է առավել Աստծուն հնազանդվել, քան մարդկանց (Գործք 5:29):

40. Զգիտե՞ք, թե ում համար, որ դուք ձեզ ծառայության մեջ եք դնում՝ հնազանդության համար, ծառա եք, ում որ հնազանդվում եք. եթե՝ մեղքին՝ մահվան է տանում, իսկ եթե՝ Աստծու հնազանդությանը՝ արդարության (Հռոմ. 6:16):

41. Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հպատակի նրան. քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. և եղած իշխանությունները Աստծուց են կարգված: Հետևաբար, ով հակառակում է իշխանությանը, Աստծու հրամանին է հակառակում. և նրանք, որ հակառակում են, իրենց դատաստանն են ընդունում. քանի որ իշխանավորները վախ չեն ազդում բարի գործերի համար, այլ՝ չար գործերի: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից. բարի՛ն գործիր և նրանից գովասանք կստանաս, որովհետև նա Աստծու պաշտոնյա է քեզ՝ բարի գործերի համար. իսկ եթե չար գործես, վախեցի՛ր. քանի որ սուրը մեջքին ի զուր չէ կապված. Աստծու սպասավոր է նա, վրեժխնդիր՝ բարկության համար, նրա դեմ, որ չարն է գործում. դրա համար պետք է հնազանդվել ոչ միայն բարկության համար, այլ նաև խղճմտանքի պատճառով. ահա թե ինչու հարկեր եք վճարում. որովհետև նրանք Աստծու սպասավորներ են՝ այդ բանին կանխապես նշանակված: Արդ, հատուցեցե՛ք յուրաքանչյուրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկյուղ՝ երկյուղը, որին պատիվ՝ պատիվը (Հռոմ. 13:1 -6):

Հայրերից

1. Զգուշացիր որևէ մեկի վրա բարկանալուց, ների՛ր բոլորին (Անտոն Անապատական):

2. Երբ քեզ վրա է հարձակվում բարկությունը, շտապ քշիր, հեռացրու նրան քեզանից և կուրախանաս քո կյանքի բոլոր օրերում (Անտոն Անապատական):

3. Եթե մեկը անարդարացի կերպով կհանդիմանի կամ կլռեցնի քեզ, դու դրանից մի տաքացիր (Անտոն Անապատական):

4. Մի շտապիր բարկանալ և ոչ մի պահիր նրա հանդեպ, ով քեզ բարկության մեջ է գցել (Անտոն Անապատական):

5. Երբ վիրավորանք ստանաս մեկից, նրա հանդեպ մի սառիր, այլ ասա. «Ես արժանի եմ, որ բոլոր եղբայրները արհամարհեն ինձ» (Անտոն Անապատական):

6. Թե մեծերը և թե փոքրերը թող աղոթեն, որպեսզի չլինի թե ընկնեն բարկության բռնակալ լծի տակ (Անտոն Անապատական):

7. Ով մյուս երեսն է դարձնում ապտակողին, նա ուրախ է նաև անարգանքների և լուտանքների ժամանակ: Մեր Տեր Հիսուս Քրիստոս երբեք չի թողնի այդպիսինին, քանի որ Նա բարի է և օգնում է այն անձանց, որոնք համբերում են Իր անվան համար, և փնտրում են Նրան՝ տալով նրանց ուժ և ամրություն, մինչև որ նրանք հաստատվեն երանելի անկրքության հանգրվանի մեջ: Եվ այսպես, ուրախացիր, երբ կհանդիպես վշտերի և խռովությունների, քանի որ նրանց հաջորդում են քաղցր պտուղներ (Անտոն Անապատական):

8. Եթե դու որևէ մեկին նկատողություն ես անում բարկությամբ, ապա դու սեփական մոլուցքդ ես բավարարում: Այսպիսով, որպեսզի ուրիշին փրկես, ինքդ քեզ ես կործանում (Մակար Մեծ):

9. Երբեք ոչ մի բան մի պնդիր, որ քո կամքով լինի, քանզի դրանից բարկություն է ծնվում (Մակար Մեծ):

10. Եթե ուզում ես չբարկանալ քեզ վիրավորողի վրա, ապա ջանասիրաբար ամբողջ սրտով աղոթիր Աստծուն նրա համար ու որևէ բան ընծայիր և բոլորին ասա, որ նա բարի է (Եփրեմ Ասորի):

11. Ձեռ կարողանում կրել վիրավորանքները, լռիր և կհանդարտվես (Եփրեմ Ասորի):

12. Ով իր սրտում պահում է հիշաչարություն, նա նման է իր կրծքի տակ իժ կերակրողին (Եփրեմ Ասորի):

13. Եղբայրների միակամությունը Տիրոջ բնակարանն է, իսկ թշնամությունը նրանց միջև՝ ուրախացնում է անիրավին (Եփրեմ Ասորի):

14. Բարկությունը և ատելությունը սրտում բազմապատկում են խռովքը, իսկ ողորմածությունը և հեզությունը մարում են այն (Եվագր Պոնտացի):

15. Արևը թող մայր չմտնի մեր բարկության վրա, որպեսզի գիշերը դևերի հարձակումները չզարհուրեցնեն մեզ, և մեր միտքը չդարձնեն ավելի երկչոտ՝ հաջորդ օրը պատերազմ մղելու համար: Զարհուրելի երազները սովորաբար առաջանում են բարկության տագնապալի բռնկումներից հետո, և ոչ մի այլ բան այնքան չի շեղում մեր մտքերն իր ընթացքից, ինչպես տագնապալի բարկությունը (Եվագր Պոնտացի):

16. Ուշադիր եղիր քո հանդեպ, որպեսզի բարկացած վիճակում չվռնդես որևէ եղբոր: Դրա համար ամբողջ կյանքում չես փախչի թախծի դևից, որը աղոթքի ժամանակ միշտ քո առջև կբերի այդ արարքդ՝ դարշանք պատճառելով քեզ (Եվագր Պոնտացի):

17. Բարկությունը և գրգռվածությունը հեռացնում են սերը, իսկ հիշաչարությունը ոչնչացնում է շնորհները (Եվագր Պոնտացի):

18. Սաղմոսերգությունը սանձում է բարկությունը և մեծահոգաբար քշում է վախը (Եվագր Պոնտացի):

19. Ջղայնությունը հոգու գինովություն է. խելքահան է անում ինչպես գինին: Պատկերացրու բարկացկոտին. նա ինքն իր տերը չի և իրեն իսկ չի ճանաչում, չի ճանաչում և ներկաներին, հարձակվում է բոլորի վրա, ասում է ինչ մտքին գալիս է, անսանձ է, հայհոյող, հարվածող, սպառնում է, երդվում է, գոռգոռում է և դուրս է գալիս ափերից (Բարսեղ Կեսարացի):

20. Քո մեջ ոչնչացրու երկու բան՝ քեզ ոչ մի բարձր բանի պիտանի մի համարի՛ր և մի՛ մտածիր, որ ուրիշ որևէ մարդ ավելի ցածր է քեզանից, այդ դեպքում քեզ հասցրած անարգանքը երբեք բարկության չի տանի (Բարսեղ Կեսարացի):

21. Բարկությունը վտանգավոր խորհրդատու է յուրաքանչյուրի համար, ինչ որ ձեռնարկվում է բարկության ժամանակ, երբեք չի կարող ողջամիտ լինել (Գրիգոր Աստվածաբան):

22. Բարկացկոտությունը դա ցուցանակ է, որ մարդու կամքից անկախ ինքն իրեն է ցուցադրում (Գրիգոր Աստվածաբան):

23. Մարդու հեզությունը հիշվում է Աստծու առաջ, և անբարկացկոտի հոգին դառնում է Սուրբ Հոգու տաճար (Նեղոս Սինայեցի):

24. Բարկացկոտի աչքերը պղտոր են և արյունոտ, սրանք ի հայտ են բերում սրտի վրդովմունքը, իսկ համբերատարի դեմքը

հանգիստ է, աչքերն էլ բարյացկամ են և նայում են ուղիղ (Նեղոս Սինայեցի):

25. Քշիր բարկություն բորբոքող մտքերը, հեռացրու քեզանից և մի թող վրդովմունքը հորձանք տա սրտիդ մեջ: Եվ չես խռովվի աղոթքի պահին (Նեղոս Սինայեցի):

26. Բարկացկոտի մտքերը իժերի ծնունդներ են, որոնք հոշոտում են իրենց իսկ ծնած սիրտը (Նեղոս Սինայեցի):

27. Ճգնելով բարկության դեմ՝ Տիրոջ խնամակալության տակ լինես, իմաստուն կերևաս մարդկանց աչքին, աստվածպաշտությամբ կապրես (Նեղոս Սինայեցի):

28. Ով հաշտեցնում է միմյանց վրա բարկացողներին, նա հաղթում է բարկության ոգուն (Նեղոս Սինայեցի):

29. Ով խաղաղությունը պահելու համար համբերում է զայրացկոտին, իրականում հենց նա է խաղաղության որդին (Նեղոս Սինայեցի):

30. Բարկությունը հարուցում է թախիծ և անբարյացկամություն, իսկ սերը երեքին էլ վռնդում է (Նեղոս Սինայեցի):

31. Բարկությունը և ատելությունը սրտի հրդեհ է, իսկ անհիշաչար հոգին ոռոգվում է հոգևոր ցողով (Նեղոս Սինայեցի):

32. Ով հիշաչար է դևերի հանդեպ, նա մարդկանց հանդեպ հիշաչար չէ, իսկ նա, ով դևերի հետ խաղաղություն է պահպանում, նա հիշաչար է եղբայրների նկատմամբ (Նեղոս Սինայեցի):

33. Համբերիր ամենամեծ չարախոսություններին և ծանր վիրավորանքներին, մի եղիր հիշաչար, այլ օրհնաբանող (Նեղոս Սինայեցի):

34. Կրիր համբերությամբ անարգանքները և շրթունքներով փակիր բարկության դռները և կառաջադիմես (Նեղոս Սինայեցի):

35. Ընդհանրապես ոչինչ մի պատասխանիր սպառնացողին, որպեսզի լռությամբ պատնեշես բոց շնչող բերանը (Նեղոս Սինայեցի):

36. Անբնական է աղվես տեսնել հավերի մեջ, բայց ավելի անբնական է տեսնել բարկացկոտ հովվի, քանի որ աղվեսը ոչնչացնում է հավերին, իսկ սա վրդովվեցնում և կորստի է մատնում բանական հոգիներին (Հովհաննես Սանդուղք):

37. Ինչպես քամիներն են ալեկոծում ծովը, այնպես էլ բարկությունը ամենից առաջ խռովում է միտքը (Հովհաննես Սանդուղք):

38. Եթե Սուրբ Հոգին անվանվում է խաղաղության Հոգի, իսկ զայրույթը՝ սրտի վրդովմունք է, ապա ոչինչ այնքան չի խոչընդոտում Սուրբ Հոգու գալստյանը, ինչպես բարկացկոտությունը (Հովհաննես Սանդուղք):

39. Տխուր տեսարաններ եմ ես տեսել բարկացկոտ մարդկանց շրջանում, ինչն առաջ է գալիս թաքուն ինքնամեծարումից:

Քանզի բարկության մեղքի մեջ ընկնելուց հետո, նրանք դարձյալ բարկանում էին, ինչ է թե՝ հաղթվել են բարկությունից: Ես զարմանում էի՝ տեսնելով, թե ինչպես են նրանք անկում անկումի ետևից գործում, և ցավում էի՝ տեսնելով, թե ինչպես են մեղքի համար իրենք իրենց պատժում մեղքով և սարսափելով դևերի ներգործությունից՝ ես քիչ էր մնում հուսահատվեի (Հովհաննես Սանդուղք):

40. Բարկացկոտ մարդը ժամանակ առ ժամանակ կամավոր տրվում է այս կրքին, դրա համար էլ արդեն սովորության ուժով, անկախ իր կամքից պարտություն է կրում սրա կողմից:
Ինչպես որ ջուրը, կամաց-կամաց լցվելով կրակի վրա, ամբողջովին հանգցնում է այն, այդպես էլ արցունքները ճշմարիտ լացի, հանգցնում են դյուրաբորբոքությունը և բարկությունը: Այս պատճառով էլ, կարգավ խոսենք այս մասին (Հովհաննես Սանդուղք):

41. Անբարկությունն անարգանքներ կրելու անհագ ցանկությունն է, ինչպես որ փառամոլ մարդկանց մեջ լինում է գովաբանություն ստանալու անօրեն ցանկություն: Անբարկությունը հաղթանակ է բնությանդ դեմ, անզգայության, անարգանքների և արհամարհանքների հանդեպ, որը ձեռք է բերվում սխրանքներով և քրտինքով (Հովհաննես Սանդուղք):

42.Հեզությունը հոգու հանդարտությունն է թե՛ անպատվության, և թե պատվի արժանանալու դեպքում (Հովհաննես Սանդուղք):

43. Անբարկության սկիզբը լեզվի զսպումն է՝ խռովված սրտի ժամանակ: Միջինը՝ խորհուրդների լռությունը՝ անձիդ թեթև խռովքի ժամանակ: Իսկ վերջը՝ անշարժ լռությունը անմաքուր քամիների ժամանակ (Հովհաննես Սանդուղք):

44. Ոմանք ունենալով թուլություն դյուրաբորբոքության հանդեպ, ծուլանում են բժշկվելուց և այդ չարիքը ոչնչացնելուց: Բայց այս խղճուկները չեն խորհում ասվածի մասին. «Նրա զայրույթի ընթացքը նրան տանում է դեպի կործանում» (Սիրաք 1:28): Մեզանից թաքնված թող չմնա, բարեկամներ, և այն, որ երբեմն բարկության ժամանակ անիրավ դևերը շուտով հեռանում են մեզանից այն նպատակով, որպեսզի մենք այս մեծ կրքերի հանդեպ ծույլ գտնվենք, ինչպես որ ոմանք ասում են՝ արդարացնելով իրենց. «Ես թեև բռնկվող եմ, բայց այն շուտ է անցնում»: Այսպիսով, համարելով այն ոչ կարևոր, իրենց հիվանդությունը դարձնում են անբուժելի (Հովհաննես Սանդուղք):

45. Ով ցանկանում է Տիրոջը ներկայացնել մաքուր մարմին և մաքուր սիրտ, նա պետք է պահի անբարկություն և ժուժկալություն, որովհետև առանց այս երկու առաքինությունների, մեր բոլոր ջանքերը անօգուտ կլինեն (Հովհաննես Սանդուղք):

46. Ինչպես որ կարծր և սուրանկյուն քարը, բախվելով և հարվածներ ստանալով ուրիշ քարերից, զրկվում է իր սուր անկյուններից, անհարթություններից և անողորկությունից և դառնում է կլորավուն, այնպես էլ բռնկվող և համառ մարդը, հարաբերվելով այլ կոպիտ մարդկանց հետ, ստանում է երկուսից մեկը: Կամ համբերությամբ բժշկում է այս խոցը, կամ նահանջում է, և այս կերպ հայտնապես տեսնում է իր տկարությունը, որը և ինչպես հայելու մեջ, երևում է իր փոքրոգի փախուստով (Հովհաննես Սանդուղք):

47. Եթե ծայրագույն հեզության նշանն այն է, երբ բարկացնողի ներկայությամբ պահպանվում է սրտի հանդարտություն և սեր նրա հանդեպ, ապա, անկասկած, բարկության գագաթնակետն այն է, երբ մարդը միայնության մեջ ինքն իր հետ խոսելով և մարմնի շարժումներով, կարծես իրեն բարկացնողի հետ վիճում է բորբոքվում (Հովհաննես Սանդուղք):

48. Վավաշոտը վնասում է միայն իրեն, միգուցե նաև ևս մեկին՝ իսկ բարկացկոտը նման է գայլի, որը հաճախ խռովքի է մատնում հոտը և շատ հոգիների է տրտմեցնում (Հովհաննես Սանդուղք):

49. Եթե ուզում ես հանել շյուղը մերձավորիդ աչքից, ապա բժշկական գործիքի փոխարեն մի օգտագործիր դերան: Դերանը կոշտ խոսքերն են և կոպիտ վարմունքը, իսկ բժշկական գործիքը հեզությամբ հասկացնելն է և համբերատարությամբ հանդիմանելը և ուսուցանելը (Հովհաննես Սանդուղք):

50. Երանելի անբարկության սկիզբն անպատվություն կրելն է, թեկուզ և՝ տրտմությամբ ու ցավով: Միջինը՝ գտնվելն է այդ վիճակի մեջ՝ առանց նեղվելու և թախիծի: Իսկ վերջը, իհարկե, եթե սա վերջ ունի, ընդունել վիրավորանքներն ինչպես գովասանքներ:
Թող ուրախանա առաջինը, իսկ երկրորդը ցնծա, իսկ երրորդը երանելի է Տիրոջով և թող բերկրի նա (Հովհաննես Սանդուղք):

51. Այն, որ վիրավորանքներ կրելը հոգու լվացում է կրքերից, ապացուցում է ժողովրդական ասացվածքը, երբ աշխարհային մարդկանցից ոմանք, երբ դիմացինի գլխին են թափում հայհոյանքներ, ապա ասում են. «Ես լավ լվացի սրան», և դա իրավացի է (Հովհաննես Սանդուղք):

52. Ես տեսա երեք ճգնավորների միևնույն ժամանակ անպատվություն կրելիս: Նրանցից մեկը վիրավորվեց, բայց լռեց, երկրորդն ուրախացավ իր համար, բայց տխրեց իրեն վիրավորողի համար, իսկ երրորդը՝ պատկերացնելով վնասը, իրեն անպատվող մերձավորի համար հեղեց ջերմ արցունքներ: Այսպես, այստեղ կարելի էր տեսնել երկյուղածություն, վարձատրություն և սեր (Հովհաննես Սանդուղք):

53. Ինչպես որ մարմնի ջերմությունը բարձրանում է հիվանդության պատճառով, և դա լինում է ամենատարբեր հիվանդությունների ժամանակ, և անկախ ջերմությունից, բուժումներն էլ տարբեր են լինում ըստ հիվանդության, այնպես էլ բարկության և այլ կրքերի բուժման համար միևնույն բուժիչ դեղը չի կարելի առաջարկել բոլորին անխտիր, այլ քննել և տեսնել, թե ինչն է պատճառը, և երբ կհայտնաբերվի, այնժամ պետք է հոգևոր բժշկություն փնտրել՝ ըստ բարկություն առաջացնող հիվանդության (Հովհաննես Սանդուղք):

54. Եվ այսպես, ասա մեզ, բարկություն անմիտ և անամոթ կիրք, քո հոր անունը և անվանումը քո չար մոր, նաև՝ քո պիղծ որդիների և դուստրերի: Ասա մեզ նաև, ով է քեզ դիմակայում և ոչնչացնում, և որպես այս հարցմանը պատասխան, բարկությունն ասում է. «Իմ մայրերը շատ են, և հայրն էլ մեկը չէ, իմ մայրերն են անափառությունը, արծաթասիրությունը, որկրամոլությունը, երբեմն էլ՝ չնության կիրքը, իսկ իմ հորը անվանում են ամբարտավանություն: Իմ աղջիկներն են հիշաչարությունը, ատելությունը, թշնամությունը, ինքնաարդարացումը: Իսկ ինձ դիմակայող թշնամիները, որոնք ինձ պահում են սանձերի մեջ, անբարկությունն է և հեզությունը: Ինձ չարախոսող թշնամին խոնարհամտությունն է, իսկ թե ումի՞ց է նա ծնվում, հարցրեք իրեն իր ժամանակին» (Հովհաննես Սանդուղք):

55. Հիշաչարությունը բարկության կատարումն է, մեղանչման թաքցնումը, ճշմարտության հանդեպ ատելությունը, առաքինությունների կործանումը, հոգու ժանգը, մտքի որդը, աղոթքի աղտոտումը, խնդրվածքների մերժումը, սիրո խորթացումը, մեխ է՝ խրված հոգու մեջ, տհաճ զգացում, չդադարող մեղք, անքանակ օրինազանցություն, ամենժամյա չարություն (Հովհաննես Սանդուղք):

56. Այնժամ չէ, որ կիմանաս, որ ազատվել ես լիովին հիշաչարության թարախից, երբ աղոթես վիրավորողիդ համար, կամ նրան չարի փոխարեն բարիք անես, կամ հրավիրես ճաշկերույթի, այլ այնժամ միայն, երբ լսես, որ նա ընկել է հոգևոր կամ մարմնավոր փորձության մեջ, հոգաս նրա համար, ինչպես ինքդ քո վրա՝ արցունքներ հեղելով (Հովհաննես Սանդուղք):

57. Հիշաչար միայնակյացը նման է իժի, որ թաքնվել է բնում և իր մեջ մահացու թույն է կրում (Հովհաննես Սանդուղք):

58. Հիսուսի տառապանքների հիշողությամբ բժշկվում է հիշաչարությունը, որը հզոր հարված է ստանում և խայտառակվում Տիրոջ անհիշաչարությունից: Ծառը, որի ներսը փտել է, իր մեջ կրում է որդեր, իսկ միայն արտաքինից հեզերը, որոնք իրականում այդպիսին չեն, իրենց մեջ կրում են թաքնված չարունակական

բարկություն: Ով իր վրայից ցած է նետում բարկությունը, նա գտնում է մեղքերի թողություն, իսկ ով կպչում-մնում է նրանից, զրկվում է Աստծո ողորմությունից (Հովհաննես Սանդուղք):

59. Երբ տեսնում ենք, որ ոմանք սիրում և հարգում են մեզ՝ Տիրոջով, ապա նրանց հանդեպ մենք էլ ավելի պիտի համեստություն դրսևորենք, քանի որ ոչինչ այնպես չի սնանկացնում սիրուց և հարգանքից և ոչինչ այնքան շուտ չի առաջացնում ատելություն, որքան ազատ վարվելակերպը (Հովհաննես Սանդուղք):

60. Թույլ մի՛ տուր, որ բարկությունը մինչև կոկորդդ հասնի (Աբբա Իսիդոր):

61. Սրբերի իմաստությունը Աստծո կամքը ճանաչելու մեջ է կայանում: Այնքան սարսափելի չեն բոլոր դևերը, որքան սեփական սրտի ցանկությունները կատարելը, անձի խորհուրդներին հետևելը, և ոչ թե Աստծո օրենքներին հետամուտ լինելը: Կյանքի վերջում մարդը շատ պիտի ողբա այն բանի համար, որ չճանաչեց քրիստոնեության էությունը, չգտավ սրբերի ճանապարհը և չջանաց առաջնորդվել դրանցով (Հայր Իսիդոր):

62. Եղբայրը հարցրեց հայր Իսիդորին. «Հայր, ինչո՞ւ են դևերը քեզանից այդպես սաստիկ սարսափում»: Ծերը պատասխանեց. «Այն ժամանակից ի վեր, ինչ ես վանական եմ դարձել, թույլ չեմ տվել, որ բարկությունը մինչև կոկորդս հասնի» («Հարանց վարք»):

63. Կարելի՞ է արդյոք մեղանչելիս բարկանալ և դժգոհել ինքս ինձանից:

Եթե որևէ բան այնպես չարեցիր կամ մեղանչեցիր, ապա մի՛ բարկանա, կամ մի՛ տրտնջա, այլ խոնարհվիր և ներում խնդրիր Աստծուց: Այսպես արա միշտ. մերթ օգնություն խնդրի՛ր, մերթ՝ ներում («Վանական ուսմունք»):

64. Եթե մեկը մեկ կամ երկու դիտողությունից հետո չի զգաստանում, դու նրա հետ մի վիճիր, այլ ամեն ինչ Աստծուն հանձնիր, որ գիտի չարից բարիք անել, որպեսզի կատարվի Իր կամքը և փառավորվի Իր ծառաների մեջ (Հոգեշահ գրքերից):

65. Եթե ուզում ես քեզ հանդուրժեն, դու էլ ուրիշներին հանդուրժիր: Տե՛ս, թե ինչքան հեռու ես ճշմարիտ եղբայրսիրությունից և խոնարհությունից, որը եթե երբևէ զայրանում էլ է կամ բարկանում, ապա միայն ինքն իր դեմ (Հոգեշահ գրքերից):

66. Աստված տնօրինեց իրար բեռներ կրել, որովհետև յուրաքանչյուր մարդ իր բեռն ունի:

Ոչ ոք զերծ չէ թերությունից, ոչ ոք ինքնաբավ չէ, ոչ ոք այնքան իմաստուն չէ, որ կարողանա իր անձն առաջնորդել, այլ պետք

է հանդուրժել, մխիթարել, օգնել, դաստիարակել և փոխադարձաբար զգուշացնել իրար (Թովմաս Գեմբացի):

67. Բարկության տագնապից մշուշ է բարձրանում և իջնում հոգու մեջ, և պատում է թանձր վարագույրի նման և մթագնում հոգին (Տեր Գաբրիել քահանա):

68. Բարկությունը ծնունդ է հպարտության. խոնարհ մարդը հեզ է լինում, հեզն էլ չի բարկանում, որով այս երկու գեղեցիկ առաքինությունները միշտ ուրիշների օրինավոր կամքին տեղիք են տալիս: Իսկ հպարտը, որ ամեն մարդու և ամեն բան միշտ իր կամքին հպատակեցնել ու գերի անել է ուզում, բարկանում և զայրանում է, երբ իր կամքին հակառակ բան է տեսնում կամ լսում (Տեր Գաբրիել քահանա):

69. Բարկությունը առաջ է գալիս նաև տգիտությունից: Իմաստունն արդեն գիտի, որ մանուկի բնությունը չարին հակամետ է, որ երիտասարդը անփորձ է, ծառան՝ սխալական, կինը՝ համառ, ծերը՝ անուղղելի, օտարը՝ չարալեզու. սրանցից մեկի հանցանքը կամ սխալը հանկարծակի չի բերի իրեն ու բարկությանը տեղի չի տա, այլ վեհանձնությամբ կխորհի ու կասի. «Ես գիտեի արդեն, որ այս բանը այսպես պիտի լիներ» (Տեր Գաբրիել քահանա):

70. Դարձյալ բարկությունը առաջ է գալիս չներող հոգուց, որովհետև ներողամիտ մարդը, երբ տեսնում է ուրիշի հանցանքը կամ սխալը, փոխանակ բարկանալու, սկսում է իր անձի վրա մտածել, թե քանի՜- քանի անգամներ ինքն էլ նմանօրինակ հանցանքների մեջ է գտնվել, բայց աչքերից անտես ու անպատիժ էր մնացել, և թե այդպիսի պարագայում ինչպես էր Աստծուց և մարդկանցից ներում գտնել փափագում: Հարկ է, ուրեմն, ներել հանցավորին՝ առանց բարկանալու և վրեժխնդիր լինելու, չէ՞ որ Աստված մեզ պիտի չափի այն չափով, որով մենք չափում ենք ուրիշներին (Տեր Գաբրիել քահանա):

71. Եթե բարկությունը կրակի նմանեցնենք, հեզությունը նրա վրա թափված ջուր է (Տեր Գաբրիել քահանա):

72. Մի անգամ փիլիսոփա Սոկրատեսը, իր ծառաներից մեկի վրա բարկանալով՝ ձեռքը բարձրացրեց, որ խփի նրան, սակայն հիշելով, որ այս հուզված վիճակի մեջ պետք չէ խփել, ձեռքը օդի մեջ բարձրացրած թողեց ու ասաց ծառային. «Տեսնո՞ւմ ես այս բռունցքը, հիմա գլխիդ պիտի իջներ, եթե բարկացած չլինեի»:

Մեր ընտանիքներից ներս, ազգականների ու դրացիների միջև, որքա՜ն կռիվներ ու ատելություններ կպակասեր, եթե միայն սովորեինք բարկության ժամանակ չխոսել ու չգործել (Տեր Գաբրիել քահանա):

73. Սակայն կա արդար բարկություն, որը ներելի է, այն է՝ նախանձախնդրություն կամ բարկություն Աստծո փառքի

համար: Աստծուն և իր պատվիրաններին հակառակ, կամ Նրան անպատվություն բերող բան, երբ տեսնի մարդ, չպետք է անտարբեր մնա, բայց՝ առանց մեղանչելու: Ինչպես սրբազան Պողոս Առաքյալն է ասում. «Երբ բարկանաք՝ մեղք մի գործեք»: Սակայն պետք է միշտ զգուշությամբ գործել, քանի որ Աստված սրտերն է քննում և գիտի, թե Ի՞ր փառքի համար, թե՞ քո բարկության և վրեժխնդրության կիրքդ հագեցնելու համար ես բարկանում (Տեր Գաբրիել քահանա):

74. Բարկությունը մայրն է բազմաթիվ մեղքերի, որի չարածնունդ զավակներն են նախատինքը, հայհոյությունը, ոխակալությունը, կռիվը, սպանությունը և սրանց հետևանքը եղող ամեն տեսակ այլ չարիքներ: Այս մեղքերից ազատ լինելու համար կացինը արմատին իջեցնենք, այսինքն՝ բարկության մեղքը վերացնենք մեջտեղից: Օձի մարմինը կտոր-կտոր անելը բավական չէ, երբ գլուխը ողջ է, որտեղ գտնվում է թույնը և կարող է իր մահացու ազդեցությունն ի գործ դնել, բայց, երբ գլուխը ճզմվի, այլևս վախենալու բան չի մնա (Տեր Գաբրիել քահանա):

75. Ջանում է վառոդով հուրը մարել նա, ով ջանում է բարկացածին բարկությամբ հանդարտեցնել (Պողոս Պատրիարք):

76. Ոչ մի բարկացող չի կարող լինել իմաստուն, որովհետև բարկությունը իմաստնության հետ չի բնակվում: Իսկ Աստծո բարկությունը ոչ միայն արդար վրեժխնդրություն է անիրավների հանդեպ, այլ նաև պատճառ՝ նրանց բարիքների, որովհետև բազում անգամ տանջելով, չարը բարի է դարձնում և անպիտանին՝ պիտանի (Պողոս Պատրիարք):

77. Բարկացողն անտանելի վիշտ է իր ընկերների համար, որովհետև ինչ-որ ուրիշները խոսում են կամ անում, անարգանք է թվում նրան: Ինչպես որ ցուլերը կատաղում են կարմիր գույնից, կամ գազանները խռովվում են իրենց ստվերից, կամ գրաստները խրտնում ճանապարհին ընկած դիակներից, այնպես էլ բարկացկոտն ունայն և սնոտի պատճառներից վորդովվում է և աղմուկ բարձրացնում (Պողոս Պատրիարք):

78. Բարկությունը հաճախ տեսնվում է ծերերի և հիվանդների մեջ, որոնք ստեպ-ստեպ տրտնջում են ընտանիքի անդամների սպասավորությունից: Սակայն ոչ պակաս վարձք կառնեն Աստծուց նրանք, որոնք համբերությամբ խնամում են ծերին, հիվանդին, որովհետև խնամվողները համարվում են մանուկներ, ովքեր տկարամիտ են և ի վիճակի չեն ճանաչելու մարդու երախտիքները և գոհանալու նրանցից (Պողոս Պատրիարք):

79. Ով որ ընկերոջ հետ բարկությամբ վարվի, դևերի մոտ խաղաղություն կունենա. լավ է ասել իմաստունը, թե՝ «Ընկերոջ դեմ

ոխ պահողը դևերի հետ դաշինք կնքած կլինի» (Սարգիս Շնորհալի):

80. Բարկությունը մեր բնությունից դուրս՝ չարի հնարքն է, որ մեզ վնաս է հասցնում և մեծապես տառապեցնում, իսկ մենք, ցավոք, միշտ դրա ետևից ենք գնում: Արդարև, որն է մեր միջի առավել սաստիկ կիրքը, եթե ոչ նախատելը և նախատվելը, անպատվելը և անպատվվելը, ատելը և ատվելը, խփելը և խփվելը, տրտմեցնելը և տրտմելը, բամբասելը և բամբասվելը: Ահա սրանք են գործերը բանսարկուի և առհավատչյան՝ անդենական տանջանքների (Սարգիս Շնորհալի):

81. Պետք է սիրես քեզ անպատվողին: Մեկ անգամ զայրանալովդ մի՛ կորցրու սիրո բարիքը, որովհետև դյուրին է այդ, լավ է սանձել բարկությունը, քան Աստծու սիրուց ընկնել: Նա մեկ անգամ անպատվեց, իսկ Աստված քեզ բյուրավոր անգամ կպատվի. արդ, ո՞րն է ավելի նախընտրելի. մեկ անգամվա պատճառով բոլոր պատիվը կորցնե՞լ, թե՞ համբերությամբ կրկնակին ստանալ (Սարգիս Շնորհալի):

82. Բարկացողը չի մտաբերում Աստծուն, ոչ էլ Նրա դատաստանը, հատուցումը, սպառնալիքը ու քաղցրությունը, և այդ պատճառով, միշտ գազանության մեջ է մնում՝ խռովված վիճակում, խռովեցնելով իր հետ նաև ուրիշներին: Շատ անգամ տեսնում ենք վայրի գազաններին՝ արջերին, հովազներին, առյուծներին ու գայլերին, որոնք որոշ ժամանակ ընտելացվելուց հետո, հանդարտված, մարդամոտ են դարձել, իսկ բարկացկոտները՝ երբեք:

Ինչպես որ կարիճը կամ քարբը, ում որ մոտենում են՝ խայթում կամ վիրավորում են, այնպես էլ նաև բարկացողը, նույնիսկ, նրանցից էլ ավելի վատ:

Եվ ինչպես հովազի մասին ասում են, թե նրանց ճիրանները բերանից ավելի վատ են պատառոտում, սրանցն էլ այդպես է, որովհետև բարկության մագիլները մահ են և սպանություն (Սարգիս Շնորհալի):

83. Չկա ավելի դառը բնություն, քան բարկությունը: Սա որքան ավելանա, այնքան կցավեցնի ու կդժգունեցնի մեր կերպարանքը, որով հոնքերը վայր են իջնում, երեսը դեղնում է ու ապականվում, շրթունքները սևանում են ու թառամում, քիթը երկար ու սուր է երևում, ձայնը խոժոռվում ու ծանրանում, աչքը դառնում է հրանման, խոսքերը ընդդիմացող ու անախորժ, իսկ տեսնողի աչքին՝ ամբողջությամբ ահարկու ու դժոխատեսիլ է երևում: Նմանվում է վայրենի ու անընտել գազանի, այսպես էլ իմացիր, որ բարկասիրտը այս օրինակից ավելի վատն է (Սարգիս Շնորհալի):

84. Արդարև, կրակը մարելու համար ջուր է պետք, իսկ բարկությունը մարելու համար, նախ պետք է Աստծո երկյուղը, դա-

տաստանի տանջանքների ակնկալությունը, և ապա հեզություն ու խոնարհություն, սեր ու համբերություն, հնազանդություն՝ եղբայրների նկատմամբ, և ինքն իրեն ամենահետինն ու մեղավորը համարել (Սարգիս Շնորհալի):

85. Խոնարհություն է, երբ սիրտդ զայրանում է, դու արգելում ես ցասումը, և քեզ արժանի չես համարում ընդդիմանալ եղբորը, ինչպես ասում է Սողոմոնը. «Խոնարհամիտը միայն ողոքիչ խոսքերով է աղաչում, իսկ հպարտը հանդուգն պատասխան է տալիս» (Անանիա Նարեկացի):

86. Ով եղբոր նկատմամբ ոխ ունի, դաշնակից է սատանային: Ով կասկածով է քննում, բարկացնում է Աստծուն (Եզնիկ Կողբացի):

87. Ով բարկանում է եղբոր վրա, և դա Աստծո համար չէ, նրան անողորմ հրեշտակ կպատահի (Եզնիկ Կողբացի):

88. Մի դատիր ոչ ոքի, քանի որ դա է քո անկման պատճառը (Անտոն Անապատական):

89. Մի դատապարտիր մահկանացուներից ոչ ոքի, որպեսզի Աստված չնողկա քո աղոթքներից (Անտոն Անապատական):

90. Ոչ մեկին մի դիր ի ցույց բոլորի՝ իր թերություններով հանդերձ, և ոչ մի պատճառով (Անտոն Անապատական):

91. Ոչ մեկի հանդեպ չար բան մի արա և մի դատիր ոչ ոքի (Անտոն Անապատական):

92. Երբ տեսնես, որ մի որևէ եղբայր ընկել է մեղքի մեջ, մի արհամարհիր նրան, և երես մի դարձրու նրանից և մի դատիր նրան ու մի չարախոսիր, թեկուզ և նրան տեսնես բոլոր պատվիրանները խախտելիս, հակառակ դեպքում, ինքդ կընկնես քո թշնամիների ձեռքը (Անտոն Անապատական):

93. Ուրիշին մի դատապարտիր, այլ աշխատիր ինքդ քեզ ուղղել, որպեսզի կշտամբանքի չարժանանաս (Հովհան Ոսկեբերան):

94. Բացակայող եղբորդ հանդեպ ոչինչ մի ասա՝ վատաբանելու միտումով, դա զրպարտանք է, թեկուզ ասածդ արդարացի լինի (Բարսեղ Կեսարացի):

95. Մի՛ աշխատիր ուրիշի գործերը քննել, քո մեջ էլ կգտնվի այն, ինչի մեջ դու ուրիշին ես կասկածում (Նեղոս Սինայեցի):

96. Հառաչիր մեղավոր մերձավորիդ համար, որպեսզի քեզ համար էլ հառաչես, որովհետև բոլորս հանցավոր ենք մեղքերի պատճառով և դատապարտության արժանի (Նեղոս Սինայեցի):

97. Երբ մենք ծածկենք եղբոր մեղքերը, Աստված էլ մեր մեղքերը կծածկի, իսկ եթե մենք ի հայտ բերենք եղբոր մեղքերը, Աստված էլ մեր մեղքերը կհայտարարի (Հայր Պիմեն):

98. Ով դատում է մեղավորին, նա վանում է իրենից

ապաշխարությունը (Աբբա Եսայի):

99. Քեզ քա՛ջ պահիր, հաստատուն, քանզի ինչպես հրաժարվում ես արյուն հեղելուց և հայհոյելուց, նույնպես ժուժկալի՛ր և պահի՛ր քեզ, որպեսզի բերանով և մտքով չդատես քո ընկերոջը և չչարախոսես կամ զրպարտես մեկին՝ փոքր լինի թե մեծ: Այլ, եթե որևէ բան տեսնես այլոց մեջ, կամ եթե մեկը մեկ ուրիշի մասին խոսի, մի՛ ունկնդրիր, այլ քեզ քա՛ջ և պի՛նդ պահիր և ամենևին մի՛ չարախոսիր ընկերոջդ, այլ ասա, թե՝ գրված է. «Մեզանից յուրաքանչյուրն իր անձի համար է հաշիվ տալու»: Արդ, եղբայրնե՛ր, մի՛ դատեք միմյանց, այլ առավել ա՛յս դրեք ձեր մտքում՝ դայթակղություն չդնել եղբոր առաջ, քանզի դու ո՞վ ես, որ դատում ես ուրիշի ծառային, նա Տիրոջով մնում կամ ընկնում է (Հայր Սրապիոն):

100. Ով հավատում է, որ ինքը մի օր մարմնից դուրս գալով պետք է Աստծո դատաստանի առջև ներկայանա, այդպիսինը ոչ մի դեպքում մերձավորին չի դատի, որովհետև անձամբ ինքը պետք է պատասխան տա իր բոլոր արարքների համար (Աբբա Եսայի):

101. Երբ միտքդ պարտադրում է եղբորդ վատ բան ասել, մտածիր, ինչքան վնասակար է դա հոգու համար ու տհաճ է Աստծուն, և կխաղաղվես (Աբբա Եսայի):

102. Մերձավորի հանդեպ սիրո վկայությունը մերձավորին չդատելն է (Աբբա Եսայի):

103. Փորձով հաստատված է՝ ինչ մեղքի համար, որ դատում ենք մերձավորին. լինի մարմնավոր, թե հոգևոր, նույնի մեջ ինքներս ենք ընկնում (Հովհաննես Սանդուղք):

104. Չկա ավելի ծանր ու չար բան, քան դատապարտությունը: Մերձավորիդ մի դատապարտիր, քանզի դու նրա մեղքերին ես տեղյակ, իսկ ապաշխարությանը՝ ոչ (Հայր Դորոթեոս):

105. Ուրիշին դատապարտողը իր չար գործերի վրա կնիք է դնում: Երկյուղենք, որպեսզի ինքներս չմերկացվենք մեր իսկ խոսքերով (Մարկոս ճգնավոր):

106. Զդատելը սիրո արգասիք է: Ճշմարիտ սեր նա ունի, ով ընկերոջը սիրում է Աստծով, իսկ թշնամուն՝ հանուն Աստծո (Գրիգոր Երկխոս):

107. Իրեն տեսնողը եղբոր թերությունները չի տեսնում (Հայր Սարատիդ):

108. Հանդիմանելով քեզ, կդադարես ուրիշներին հանդիմանելուց (Հայր Հովհաննես):

109. Ինչպես մեռելը չի ուտում, այնպես էլ խոնարհը չի դատում մարդուն (Հայր Լոգին):

110. Եթե աչքերովդ տեսնես եղբորդ մեղանչելիս, և միտքդ ասի. դատիր նրան՝ քշիր այդ միտքը և ասա. «Անեծք քեզ, սատանա, այդ դու ես մեղավոր, եղբայրս ի՞նչ է արել»,- և հաստատ որոշիր, որ եղբորդ չես դատելու, այլապես Աստծո ողորմությունը կհեռանա քեզանից («Հոգևոր պատերազմ» գրքից):

111. Եթե քո ներկայությամբ եղբայրդ բամբասում է մեկ ուրիշ եղբորից, մի ասա. «Այո, այդպես է», այլ ասա. «Ես ինքս էլ մեղավոր եմ, այդ պատճառով ուրիշներին չեմ կարող դատել, քանզի ինքս էլ եմ դատապարտյալ» (Հոգեշահ գրքերից):

112. Ուրիշին դատողը նմանվում է նեռին, քանի որ հափշտակում է Աստծո դատաստանը (Հոգեշահ գրքերից):

113. Նախանձոտը տեսնելով ուրիշների բարիքները, նախանձի կրքով բորբոքված՝ այրվում է, ինչպես հնոց, և չարաչար կարծիքներով դատաստան է անում, թե անարժան են նրանք, որ այս բարիքները վայելում են (Պողոս Պատրիարք):

114. Երանության համար հեզախոս լինենք և դրանով խոնարհություն սովորեցնենք (Եղիշե):

115. Սիրելիներ, սթափվենք մեր խելագարությունից և որևէ մեկին անիրավությամբ չդատենք, իսկ եթե արդարությամբ, ապա ոչ անողորմաբար, որպեսզի չլինի թե անողորմների դատաստանն ընդունենք: Իսկ եթե հանցավորին դատելու իշխանություն չունենք, որչա՜փ ավելի՝ արդարին:

Վախենանք Քրիստոսի դատաստանից, որ սաստիկ հանդիմանում է բոլոր նրանց, ովքեր իրենց մեղքերը ոչինչ համարելով՝ իրենց ընկերների փոքրագույն սխալին իսկ դատախազ ու հանդիմանիչ են լինում (Սարգիս Շնորհալի):

116. Արդ, եթե մեղքից հեռացնելու մտքով հանդիմանես եղբորդ, ո՛չ ոք չի արգելի կամ մեղադրի արարքդ. այդ անելով գովասանքի կարժանանաս և ոչ թե մեղադրանքի, որովհետև նա, որ պատվականը զատում է անարգից՝ Աստծո բերան է կոչվում: Ինչը որ տիրապես արգելված է անել, այս է՝ չճաղկել նրան շատերի ներկայությամբ և չհրապարակել հանդիմանությունը, որպեսզի չլինի, թե ավելի վիրավորես վհատված հոգուն կամ դարձյալ լրբության առաջնորդես: Այլ պետք է կիրառես հեզ և մարդասեր Քրիստոսի օրենքները, որ մեր տկարությունները առավ և մեր ցավերը վերցրեց: Ո՞րն է այդ օրենքը. եթե եղբայրդ մեղանչի, գնա հանդիմանիր նրան, երբ երկուսդ էլ առանձին եք: Ինչպե՞ս պետք է հանդիմանել. ոչ խստությամբ, այլ՝ քաղցրությամբ (Սարգիս Շնորհալի):

117. Ինչպես որ ջանում ես քո հանցանքներդ մարդկանցից

ծածկել, որպեսզի չնախատվես, բյուրապատիկ ավելի փութա՛ եղբորդ ամոթալի գործերը ծածկել:

Եղբորդ մեղքերը որչափ էլ ջանաս ծածկել՝ կարող ես միայն տասը, հարյուրը կամ հազարը մարդկանցից պահել, մինչ քո գործերը պիտի ծածկվեն տիեզերական հրապարակի վրա, ուր Ադամի բոլոր սերունդները միասին, նաև դևերի բնությունն ու հրեշտակների բազմությունը պետք է հավաքվի: Տեսնո՞ւմ ես, թե ինչպիսի հատուցում կստանաս եղբորդ կարեկցելով (Սարգիս Շնորհալի):

118. Եվ եթե չպիտի դատես եղբորդ, որչափ ավելի վարդապետը: Իսկ եթե սուտ էլ լինի՝ սաստիկ տանջանք և պատիժ պիտի կրի բամբասողը, որովհետև եթե ամեն դատարկ բանի համար հաշիվ պիտի տրվի, որքան ավելի պարապ բամբասանքների համար (Սարգիս Շնորհալի):

119. Առաքինությունների գլուխը սերն է, իսկ ախտերի գլուխը՝ ինքնաարդարացումը (Հովհան Մանդակունի):

120. Սարսափում էի Հակոբոսի պես հզոր մարդուց, որը միշտ բողոքում է, թե՝ «Շատ վարդապետող մի եղէք, եղբայրներ, իմացեք, որ մեծ դատաստան եք ընդունելու» (Հակ. 3:1): Եվ դարձյալ, չի կարելի նմանվել պիղծ ու վատթար գործերով լցված մարդկանց, որոնք իրենց աչքի դերանը չտեսնելով, ուրիշի աչքն են զննում, որ շյուղ հանեն (Ղազար Փարպեցի):

121. Երանելի է նա, ով ձեռք է բերել ճշմարիտ և անկեղծ հնազանդություն, քանի որ այդպիսի մարդը նմանվում է մեր Փրկչին, որ մինչև ի մահ հնազանդ եղավ (Եփրեմ Ասորի):

122. Հնազանդն արագությամբ առաջընթաց է ունենում և կարճ ժամանակամիջոցում հասնում հաջողությունների (Եփրեմ Ասորի):

123. Հնազանդը բոլորի կողմից ընդունելի է, գովելի և բոլորի կողմից՝ փառավորվող: Բայց նզովքի է արժանի և դժբախտ է նա, ով ձեռք չի բերել հնազանդություն, և տրվում է տրտունջին: Քանի որ տրտունջը վանքում մեծ ցավ է, գայթակղություն և սնանկացում սիրուց, համախոհության խարխլում, խաղաղության խաթարում (Եփրեմ Ասորի):

124. Տրտնջացողը, երբ հրաման է ստանում, հակաճառում է գործի համար: Անպիտան է այսպիսինը, որովհետև նա ծույլ է, իսկ ծուլությունն անբաժան է տրտունջից: Եվ սրա համար էլ, եղբայրներ, չտրտնջանք հրամաններից, որոնք տալիս են մեզ, չհակաճառենք, և մեր իրավունքները հանդես չբերենք որպես գիտուններ (Եփրեմ Ասորի):

125. Եթե մարդը ձեռք չբերի հնազանդություն, խոնարհություն և համբերություն, չի կարող դուրս գալ անբնական վիճակից, եթե նույնիսկ պահի բոլոր պատվիրանները (Հայր Եսայի):

126. Հնազանդությունը սեփական կամքի անմնացորդ մերժումն է, որն ի հայտ պիտի գա մարմնավոր գործերում, կամ հակա-

ռակը՝ հնազանդությունը մարմնավոր անդամների մահացումն է՝ կենդանի մտքի առկայության դեպքում: Հնազանդությունը կամավոր մահ է, խորթ կյանք՝ հետաքրքրությունից, անտխրություն դժբախտության ժամանակ, անվախություն՝ մահվան հանդեպ, անխափան նավարկություն, քնածների ճանապարհորդություն: Հնազանդությունը սեփական կամքի դերեզման է և խոնարհության հարություն: Հնազանդը, ինչպես լեռ, չի հակաճառում, չի քննարկում ոչ բարին, ոչ էլ թվացյալ չարը, քանի որ այդ բոլորի համար պետք է պատասխան տա նա, ով լուսաշնորհապես մահացրել է հնազանդվողի անձը: Հնազանդությունը քննարկման հետաձգում է՝ մտքի հարուստ պաշարների առկայության դեպքում (Հովհաննես Սանդուղք):

127. Տեսա ես մի հնազանդվողի (սկսնակ վանական կամ մոնթ), որն ընդհատելով իր հոգևոր հորը, շարունակեց խոսակցությունը նրա փոխարեն, և ես տեսա, որ ոչ մի օգուտ չկա նման հնազանդություն սովորելու ընթացքից, քանի որ սա ոչ թե խոնարհություն է ձեռք բերում, այլ հպարտություն:

Ուսուցչի ներկայությամբ սովորեցնենք մեզ ծայրագույն լռակյացության և անգիտության, քանի որ լռակյաց մարդը որդին է իմաստության, որը միշտ ձեռք է բերում խելամտություն (Հովհաննես Սանդուղք):

128. Հնազանդվողը նա է, ով մարմնով ծառայում է մարդկանց, իսկ մտքով և աղոթքներով ելնում երկինք (Հովհաննես Սանդուղք):

129. Հօգուտ հնազանդության կվկայեն նրանք, ովքեր հեռացել են հնազանդությունից, քանզի միայն հիմա են հասկանում, թե ինչ բարձունքի վրա են եղել (Հովհաննես Սանդուղք):

130. Հայրերը սաղմոսերգությունը համարում են զենք, աղոթքը՝ պարիսպ, մաքուր արցունքները՝ լվացարան, իսկ երանելի հնազանդությունը՝ խոստովանություն, առանց որի կրքոտներից ոչ ոք չի տեսնի Տիրոջը (Հովհաննես Սանդուղք):

131. Խելամիտ հնազանդվողը, եթե նույնիսկ մեռելներին հարություն տա և արտասուքի շնորհ ունենա, թշնամական հարձակումներից ազատության հասնի, ամեն կերպ մտածում է, որ այդ բոլորի պատճառը իր հոգևոր հոր աղոթքների հետևանքն է, և խորթ է իրեն, ու հեռու է մնում ունայն ինքնամեծարումից: Եվ արդյոք, կարո՞ղ է նա մեծարվել, երբ ինքն է խոստովանում, թե արել է ուրիշի միջոցով և ոչ իր սեփական ջանքով (Հովհաննես Սանդուղք):

132. Զավակս, երկար չես ջանա երանելի խաղաղություն ձեռք բերելու, եթե ի սկզբանե, ամբողջ հոգով տրվես համբերությամբ անարգանքներ կրելու (Հովհաննես Սանդուղք):

133. Հնազանդությունից վեհագույն առաքինություն չկա (Ներսես Լամբրոնացի):

Հայրերի վարքից

1. Եղբայրը հարցրեց հայր Պիմենին. «Ի՞նչ է նշանակում եղբոր վրա իգուր տեղը բարկանալ»: Ծերը պատասխանեց նրան. «Զուր տեղը բարկանալը համարվում է ամեն առիթով բարկությունը: Ինչի համար էլ որ եղբայրդ քեզ բարկացնի, նույնիսկ, եթե աջ աչքդ հանի կամ աջ ձեռքդ կտրի, ու դու նրա վրա բարկանաս՝ կլինի զուր: Միայն նրա վրա իրավունք ունես բարկանալու, ով քեզ ուզենա Աստծուց հեռացնել» («Հարանց Վարք»):

2. Մի եղբայր, ապրելով վանքի հանրակացարանում, հաճախ պարտվում էր բարկության կողմից և ինքն իրեն ասաց. «Գնամ անապատ, այնտեղ հանգստանամ այս կրքից, քանի որ միայնության մեջ բարկության պատճառներ չի լինի և չեմ վիճի մարդկանց հետ»: Դուրս գալով վանքից՝ սկսեց ապրել անապատում:

Մի անգամ նա ջրով լցրեց ջրամանը և դրեց գետնի վրա: Ջրամանը հանկարծ շուռ եկավ: Երկրորդ անգամ նորից նույնը կրկնվեց: Եվ երբ երրորդ անգամ կուժը շուռ եկավ, վանականը բարկացած կուժը խփելով գետնին՝ ջարդուփշուր արեց: Եղբայրն սկսեց մտածել և հասկացավ, որ թշնամին նորից հաղթել է իրեն:

Այնժամ նա ասաց. «Ահա ես մենակ եմ, սակայն նորից պարտվում եմ բարկության կրքից, վերադառնամ վանք, քանի որ պատերազմը ամենուրեք է. թե՛ վանքում և թե անապատում: Եվ պետք է ամենուրեք պայքարել բարկության դեմ, հուսալով Աստծո օգնությունը»:

Բարկությունը բժշկվում է, եթե մարդը ամեն անգամ, բարկության մեջ ընկնելով, ներողություն է խնդրում ու զղջում և ոչ թե՝ արդարացնում ինքն իրեն՝ մեղադրելով ուրիշներին («Հարանց Վարք»):

3. Մի ծեր հարատևում էր մշտական խաղաղության մեջ, և խորթ էր նրա համար սրտմտությունն ու բարկությունը: Մի եղբայր հարցրեց ծերին՝ ասելով. «Հայր, ինչպե՞ս ես խաղաղությունդ պահպանում և երբեք չես ընկնում բարկության մեղքի մեջ»: Իսկ ծերը պատասխան տվեց. «Զավակս, ինչ-որ ասում են ինձ՝ համաձայնվում եմ և չեմ հակաճառում, դրանով էլ պահպանում եմ անդորրս»: Եղբայրը՝ զարմանալով պատասխանի վրա, ասաց. «Հայր, միգուցե սխա՞լ է այդպես վարվելը»: «Միգուցե սխալ է»,-պատասխանեց ծերը՝ դարձյալ չհակաճառելով» («Հարանց վարք»):

4. Մի ճգնավոր ապրելով վանքում, անտարբերությամբ էր անցկացնում իր կյանքը: Երբ այն աշխարհ փոխվելու

ժամանակը եկավ, նա մահը դիմավորեց արդարի ուրախությամբ, ինչը և շատ զարմացրեց այդ պահին նրան շրջապատող եղբայրներին: Եվ խնդրեցին նրան, որ նա իրենց խրատի համար ասի այդ ժպիտի և ուրախության պատճառը: Մեռնողը՝ նստելով անկողնում, հայտնեց եղբայրներին, որ հրեշտակները իր մահից առաջ բերեցին իր մեղքերի ցուցակը ու իրենից արդարացման պատասխան պահանջեցին դրանց համար: Բայց ինքը կարողացավ ասել միայն, «որ ես մեղավոր եմ, բայց այն ժամանակվանից ի վեր, ինչ ճգնավոր դարձա՝ ոչ մեկին չդատեցի և ոչ մեկի հանդեպ չարություն չունեցա, և այդ պատճառով, հույս ունեմ, որ իմ վրա Տիրոջ խոսքը կիրականանա, որ ասաց. «Մի դատեք, որպեսզի չդատվեք»: Եվ հրեշտակները պատռեցին իմ մեղքերի ցուցակը» («Հարանց Վարք»):

5. Հայր Պաֆնուտը պատմում է իր մասին. «Մի անգամ ճանապարհորդելիս մոլորվեցի, որովհետև մառախուղ էր, ու հայտնվեցի ինչ-որ գյուղի մոտ: Այնտեղ ես մի քանի հոգու տեսա, որոնք անամոթաբար չար բաներ էին խոսում միմյանց հետ: Կանգ առնելով, ես սկսեցի աղոթել իմ մեղքերի համար: Եվ ահա ինձ սուրը ձեռքին հրեշտակ հայտնվեց և ասաց. «Պաֆնուտ, բոլոր եղբայրներին դատողները այս սրով կսպանվեն, բայց դու չդատապարտեցիր, այլ խոնարհվեցիր Տիրոջ առջև, ինչպես մեղավոր, այդ պատճառով քո անունը գրվեց կյանքի գրքի մեջ» («Հարանց Վարք»):

6. Մի վանական, երբ տեսավ իր մեղանչող եղբորը, հոգոց հանելով ասաց. «Վա՜յ ինձ, ինչպես որ նա այսօր մեղանչեց, վաղն էլ ես կընկնեմ մեղքի մեջ»: Տեսնո՞ւմ ես ամրությունը, տեսնո՞ւմ ես, ինչպես էր տրամադրված ուրիշին դատելուց խուսափելու՝ «Վաղն էլ ես կընկնեմ մեղքի մեջ» ասելով: Սրանով նա իրեն զգոնացնում էր, որ թերևս ինքն էլ կարող է մեղանչել, և սույնով խուսափեց մերձավորին դատելուց: Եվ սրանով էլ չբավարարվելով, նա կարծես իրեն նետեց եղբոր ոտքերի առաջ՝ ասելով. «Նա գոնե կապաշխարի իր մեղքի համար, իսկ ես, ինչպես որ հարկն է, չեմ զղջա և չեմ հասնի ապաշխարության»: Նա ոչ միայն հասցրեց խուսափել մերձավորին դատելուց, այլև իրեն նետեց նրա ոտքերի առջև: Իսկ մենք՝ թշվառներս, առանց խորության դատում ենք, նվաստացնում, երբ վատ բան ենք տեսնում կամ լսում, կամ որ ավելի վատ է՝ կասկածում: Եվ ցավալի է, որ մեր հոգուն հասցված վնասով չենք բավարարվում, այլ հանդիպելով մեկ այլ եղբոր՝ նրան էլ ենք հաղորդ դարձնում՝ մեղքը խցկելով նրա սրտի մեջ: Եվ չենք վախենում ասվածից. «Վա՜յ նրան, ով ընկերոջը պղտոր հրապույրներով է արբեցնում» (Հայր Դորոթեոս):

7. Ահա թե ինչ պատահեց հայր Իսահակ Փիբեցու հետ.

«Հարևան վանքում գտնվելով, - իր մասին պատմում է հայր Իսահակը, - ծույլ-ծույլ պտտվող մի վանական տեսա ու մտքումս դատապարտեցի նրան: Իսկ երբ վերադառնում էի իմ խուցը, ապա դռների մոտ ինձ մի հրեշտակ հանդիպեց և կանգնեցնելով՝ հարցրեց խստությամբ. «Փրկիչը հրամայեց ինձ քո կարծիքը իմանալ, թե ինչ պետք է անել այն վանականի հետ, որին դու դատապարտեցիր»: Իսահակը ճանաչելով իր մեղքը, դեմքին փռվելով հրեշտակի առաջ զղջաց ու իր համար աղոթք խնդրեց. «Վեր կաց, -ասաց հրեշտակը, -այս անգամ Տերը ներում է քեզ, բայց մյուս անգամ փախիր եղբորդ դատելուց, մինչև որ Աստված չդատի նրան, ապա թե ոչ, այլևս չեմ թողնի խուցը մտնես» («Հարանց Վարք»):

8. Մի ծեր կար վանքում, որն ապրում էր անհոգ ու ամբարտավան վարքով: Նա մի աշակերտ էր ձեռք գցել Ակաքիոս անվամբ, որն ուներ հասարակ վարք, բայց իմաստուն միտք: Աշակերտը չափազանց դառնություններ կրեց ծերից, որը լսողներին անհնարին կարող է թվալ, քանի որ ծերը նրան չարչարում էր ոչ միայն սպառնալիքներով և հայհոյությամբ, այլև ծեծ ու ջարդով, իսկ համբերությունը հնազանդվողի՝ Ակաքիոսի, անմտությամբ չէր: Նա, ինչպես գնված ստրուկ, ամենուր չափազանց մեծ տառապանքներ էր կրում: Ես հաճախ նրան տեսնելուց ասում էի. «Դե, եղբայր Ակաքիոս, այսօր ինչպե՞ս ես», իսկ նա, որպես պատասխան, երբեմն ցույց էր տալիս աչքի տակ եղող կապտուկները, երբեմն էլ՝ գլխի կամ մարմնի վրա եղող վերքերը, որն ստացել էր ծերից: Իսկ ես ասում էի. «Լավ է, լավ է, դիմացիր և մեծ օգուտ կստանաս»: Ապրելով այս անողորմ ծերի մոտ ինը տարի, Ակաքիոսը տեղափոխվեց երկինք՝ Տիրոջ մոտ, թաղվելով ծերերի համար նախատեսված դամբարանում: Հինգ օր անց ամբարտավան ծերը գնում է այնտեղ ապրող մի սրբակենցաղ ճգնավորի մոտ և ասում. «Գիտե՞ս, Ակաքիոսը մահացավ»: Ճգնավորը զարմացավ և չհավատալով, անմիջապես տեղից ելավ ու այս ծերի հետ գնաց գերեզմանոց: Երբ հասան տեղ, ծերը ձայնեց՝ դիմելով գերեզմանին, կարծես կենդանի մարդուն. «Եղբայր Ակաքիոս, դու իսկապե՞ս մահացել ես»: Եվ այս հնազանդության մեջ իմաստունը մահվանից հետո էլ հնազանդվելով, պատասխանեց ճգնավորին. «Հայր, ինչպե՞ս կարող է մահանալ հնազանդվողը»: Իսկ ծերը, որ առաջ երանելի Ակաքիոսի ուսուցիչն էր համարվում, վախից սարսափեց և արցունքաթաթախ ընկավ գետնին: Նա Ակաքիոսի գերեզմանի կողքին խուց սարքեց և մինչև իր կյանքի վերջն ապաշխարեց՝ ջանալով առաջանալ առաքինի գործերի մեջ, և միշտ ասում էր մյուս հայրերին. «Ես մարդասպան եմ» (Հովհաննես Սանդուղք):

Աղոթք

Դարձրո՛ւ ինձանից, Տե՛ր, Քո բարկության ցասումը, որ իմ բազում մեղքերով Քեզ տրամեցրի: Ողորմի՛ր Քո դեմ ապստամբածիս և ցրի՛ր իմ մեղքերի սաստիկ դիզված կույտերը, բևեռի՛ր իմ միտքը՝ Քեզ ծառայելու քաղցր լուծին:

Ողորմի՛ր ինձ՝ լքվածիս, օգնի՛ր ինձ՝ եղկելիիս, ճառագայթի՛ր ինձ՝ մոլորյալիս, որ լի եմ մեղքերով և անթիվ հանցանքներով և տարուբերվելով՝ ծփում եմ անօրենության հորձանքներում:

Դարձրո՛ւ ինձ, Տե՛ր, իմ մեղքերի համար սգացող և արտասվող, քանզի ծանրացած եմ անօրենության բեռով և հագեցած՝ աղտեղի խորհրդով, շատ ներեցիր ինձ, քանզի չպատժեցիր մարմնի մեջ. արդ, սարսելով դողում եմ, թե ինձ համար աններելի չե՞ն մնա այսպիսի չարիքները: Աղաչում եմ, բարերա՛ր Տեր, մի՛ կանչիր ինձ Ատյան և մի՛ մատնիր ինձ տանջանքների, այլ փրկի՛ր գեհենի հրից, ազատի՛ր վտանգներից և ողորմի՛ր ինձ, քանզի միայն Դո՛ւ ես մարդասեր:

Ե՛կ, Տե՛ր, տեսության՝ իմ հիվանդացած հոգուն, դի՛ր Քո ձեռքն ինձ վրա, բժշկի՛ր՝ ասելով. «Զորացի՛ր, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛ արդարության տունդ»:

Դատի՛ր, Տե՛ր, ինձ դատապարտողին, որ հանդգնում է զորաժողով լինել ինձ վրա՝ մարտնչելով ինձ հետ ցանկությամբ և անժուժկալությամբ, ծուլությամբ և որկրամոլությամբ, փառասիրությամբ և մարդահաճությամբ, բարկությամբ և զայրույթով, ատելությամբ և չարաչար հայհոյությամբ, սնափառությամբ և սնապարծությամբ, հպարտությամբ և ամբարտավանությամբ, խոսքերով, գործերով ու խորհուրդներով և ընկզմում չարիքների խորքը:

Արեգա՛կդ արդարության՝ Փրկի՛չ իմ և ազատի՛չ Հիսուս Քրիստոս, Քո լույսին եմ ապավինում, լուսավորի՛ր և ջերմացրո՛ւ իմ սիրտը: Հրկիզի՛ր իմ չար խորհուրդները և հալեցրո՛ւ իմ մեղքերի սառնամանիքը: Գարո՛ւն շնորհիր, Տե՛ր, իմ հոգուն՝ ծաղկեցնելու և պտղաբերելու արդարության պտուղը:

Ողորմի՛ր, Տե՛ր, մեղավորիս, անթիվ բազմությամբ հանցավորիս, և ապաշխարությամբ դարձի՛ բեր վտարանդի գերուս և մտցրո՛ւ ինձ արքունական փառքի մեջ: Առաջնորդի՛ր ինձ՝ Քեզ մոտ գալ վերին ճանապարհով, քանզի եթե Դու չառաջնորդես ինձ, ես չեմ կարողանա գալ: Որովհետև Դո՛ւ իսկ հրամայեցիր, թե՝ «Ոչ ոք չի կարող գալ Ինձ մոտ, եթե Հայրս չկանչի նրան»: Եվ արդ, Տե՛ր իմ գթած, մի՛ հիշիր իմ բազում պիղծ մեղքերը և մի՛ անտեսիր մնալ նույն չարի-

քի մեջ և դեգերել աշխարհիկ կյանքում, այլ, ինչպես փախած ծառայի ետևից ընթանալով, այնպես ինձ ե՛տ բեր և թողությո՛ւն տուր իմ հանցանքներին ու հաղո՛րդ դարձրու Քո սուրբ կամարարներին, և նրանց հետ գոհանալով պիտի փառավորեմ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):

Գերգեսացի դիվահարի մասին

(Մարկ. 5:1-20)

«Եվ Հիսուս եկավ ծովի հանդիպակաց կողմը՝ գերգեսացիների երկիրը, և գերեզմաններից Նրան ընդառաջ եկավ պիղծ ոգուց բռնված մի դիվահար, որի բնակավայրն իսկ գերեզմանն էր: Ոչ ոք նրան շղթաներով անգամ չէր կարող կապել, որովհետև շատ անգամ շղթաները պոկել և ոտնակապերը ջարդել էր: Ոչ ոք նրան չէր կարողանում զսպել, որովհետև գիշեր ու ցերեկ գերեզմանում և լեռներում աղաղակում էր, ինքն իրեն քարերով ծեծում»:

Երբ քննում ենք այս դիվահարի վիճակը, տեսնում ենք, որ շատ բաներում մենք՝ քրիստոնյաներս, նմանվում ենք այս դիվահարին: Այս խոսքերը, միգուցե, զարմանք և վրդովմունք պատճառեն, բայց քանի որ ասվում է. «Ամեն բան քննե՛ք և բարին ամուր բռնեք», մենք էլ աշխատենք քննել և համեմատություն անցկացնել այս դիվահարի և մարմնավոր, այսինքն՝ հոգևոր վիճակից ընկած քրիստոնյաների միջև:

Եվ քանի որ մարդասպանությունը և եղբոր վրա զուր տեղը բարկանալը նույնն են Աստծո առջև, և շնությունն ու ուղղակի ցանկությամբ կնոջը նայելը միևնույն մեղքն են, ապա շատ բաներ, որոնք տեսնում ենք գերգեսացու մեջ, կարող ենք տեսնել և մեր՝ քրիստոնյաներիս մեջ: Իհարկե, մարդկային տեսանկյունից դրանք անհամեմատելի են, բայց Սուրբ Գիրքն ասում է. «Աչքի տեսածով մի՛ դատեք»:

Նախ՝ նրա ապրած տեղը գերեզմանն էր, և ամեն անգամ շղթաները պոկում և փախչում էր այնտեղ: Սուրբ Գիրքը մեզ ասում է՝ թող աշխարհը ձեզ համար խաչը ելած լինի, իսկ դուք էլ՝ աշխար-

հի: Բայց շատ հաճախ մենք ավելի աշխարհի մեջ ենք մեզ տեսնում, կարծես այս պատվիրանն այն շղթան է, որով կապված էր գերգեսացին, որը և կապում է մեզ: Բայց մենք ամեն կերպ պոկում ենք այն և փախչում աշխարհ, այսինքն՝ գերեզման: Հոգևոր կյանքում աշխարհը գերեզման է, որտեղ թաղված պիտի լինի հին մարդն իր կրքերով հանդերձ: Բայց եթե մեկը կասի, թե՝ մենք աշխարհի մեջ չենք և այն չենք սիրում, ապա թող քննի իր անձը, թե օրը քանի՞ ժամ է նստում հեռուստացույցի առջև, քանի ժամ՝ թերթեր և ամսագրեր կարդում, որքան՝ քաղաքականության շուրջը զրուցում, և ամենակարևորը՝ թե միտքը օրվա մեջ ինչքան ժամանակ է ցնորական պտույտներ գործում աշխարհային՝ մարմնավոր ոլորտներում և ինչքան՝ աստվածայինի մասին խոկում և մտածում: Չէ՞ որ ասվեց. «Ամբողջ մտքով սիրիր քո Տեր Աստծուն»:

Եվ եթե անկեղծորեն քննենք ինքներս մեզ և տեսնենք, որ շատ բաներում իսկապես մենք ավելի աշխարհն ենք սիրում, այսինքն՝ մահն ու գերեզմանը, ապա զարհուրենք, քանի որ «աշխարհի հանդեպ սերը թշնամություն է Աստծո դեմ»: Տերն ասաց. «Ես եմ Հարությունը և Կյանքը»: Ուրեմն, չփախչենք կյանքից դեպի մահ, այլ խնդրենք, որ Տիրոջ շնորհը մեզ բժշկի աշխարհսիրությունից: Չանանք նմանվել մեր Տիրոջը, այլ ոչ թե գիշեր ու ցերեկ գերեզմաններում անցկացնենք դիվահարի պես, քանի որ գրված է, թե՝ «Ով այս աշխարհում ուզենա իր անձը ապրեցնել, կկորցնի այն, իսկ ով իր անձը կորցնի այստեղ՝ Տիրոջ համար, ապա այն կապրեցնի հավիտենական օրերի համար»:

Կարդում ենք նաև, որ նա լեռներում աղաղակում էր: Շատերս էլ կարծես նույն բանն ենք անում. սիրում և ձգտում ենք բարձր տեղերի, առաջին աթոռների՝ փառավորվելով մարդկանցից և քայլելով անմիտ հպարտության բարձունքներում, այնինչ ասվեց. «Աստված դեմ է հպարտներին», նաև՝ «Ով որ իր անձը խոնարհեցնի, Աստված նրան կբարձրացնի»: Եվ այդ բարձր տեղերում որքան էլ խոսակցությունը հավատքի շուրջ լինի, որքան էլ քարոզները գիտական մեծ հագեցվածություն ունենան, դրանք կնկատվեն որպես հպարտության լեռից հնչող աղաղակ և ուրիշ ոչինչ:

Շատ անգամ կտեսնենք, որ քրիստոնյաներիս մեջ, երբ մեկտեղ ենք հավաքվում, ավելի աշխարհային զրույցներ են տարվում, մեկ էլ մեկն ընկնում է բարկության մոլուցքի մեջ և սկսում աղաղակել, մյուսը մի զվարճալի բան է պատմում, և դրանից առաջանում է անզուսպ ծիծաղ և հռհռոց, և այս բոլորը ոչ այլ ինչ է, եթե ոչ գերգեսացու աղաղակը: Եթե նման բան նկատենք մեր մեջ, ապա հեռվում՝ աղանդավորների մեջ չփնտրենք «գառան մորթով գայլերին», այլ դա տեսնենք ինքներս մեր մեջ, քանի որ անարժանաբար Տիրոջ սուրբ անունն ենք վերցրել մեր վրա և շատերին երևում ենք որպես

լուսո որդիներ, բայց իրականում մենք ավելի նման ենք հպարտության, փառամոլության, ինքնավստահության և մեծամտության լեռներից աղաղակող գերգեսացի դիվահարին: Եվ ինչպես ասում է Գրիգոր Նարեկացին. «Կռապաշտ է նա, ով ծածկված քողով, ձևացնում է իրեն բարեպաշտ, բայց կատարում է Արարչի համար անախորժ գործեր»:

Ուրեմն, եթե սա էլ կնկատենք մեր մեջ, անհոգ չլինենք, այլ Եզեկիա թագավորի պես լաց լինենք Տիրոջ առջև, Նրանից ապաշխարության ժամանակ խնդրենք, ջանանք իջնել խոնարհության ձորը, որպեսզի Տերը մեզ բարձրացնի Իր սուրբ լեռը: Եվ ապա կարդում ենք, որ ինքն իրեն քարերով ծեծում էր: Այստեղ էլ բազում նմանություններ կգտնենք մարմնավոր ընթացքով քայլող քրիստոնյաների և գերգեսացու միջև:

Չանանք տեսնել, թե մենք ինչպիսի քարերով ենք հանապազ ծեծում մեր հոգին, մեր անձը: Շատ հաճախ կտեսնենք քրիստոնյային՝ ահավոր բարկության մեջ: Այնքան կարևոր չէ պատճառը, քանի որ բարկությունը մահացու մեղք է, և մենք, կարծես, վերցնելով բարկության քարը, դրանով ինքներս մեզ ենք ծեծում՝ ավերելով մեր հոգևոր կյանքը: Երբեմն վերցնում ենք նախանձի քարը և դրանով՝ տուր թե կտաս, ինքներս մեզ: Ում որ նախանձում ենք, դրանից նա չի տուժում, բայց նախանձողի համար գրված է, թե՝ «Նախանձը ոսկորների փտություն է բերում»: Ահա թե ինչու, մեր հոգիները անդամալույծ են դառնում հոգևոր փտախտից:

Երբեմն, վարպետորեն օգտագործելով ծիծաղկոտության և կատակասիրության քարերը, ջախջախում ենք մեր մեջ այն երանելի զղջման հոգոցներն ու արցունքները, որոնք թե յուղ են մեր լապտերների համար և թե պատճառ՝ մեղքերի թողության: Քանի որ, թե՛ Պետրոսը և թե Եզեկիան ապրեցին արտասուքների պատճառով, նաև ասվում է, թե՝ «Եթե զղջաս ու հոգոց հանես, այնժամ կապրես»:

Եվ այս մատենաշարի մեջ կտեսնենք, թե ուրիշ քանի՜-քանի տեսակ քարերով գիշեր ու զոր ծեծում ենք ինքներս մեզ և զարմանում, թե ինչու չի գործում Աստծո զորությունը մեր մեջ, ինչու չկա սեր, խոնարհություն, հավատք, հույս: Ուրեմն, դադարենք դիվահարին կրկնօրինակելուց, դեն նետենք այս հոգեսպան քարերը, որպեսզի բժշկություն գտնենք Տիրոջից և սրանից հետո կարողանանք գիտակցել՝ որն է բարին և որը՝ չարը, քանի որ գրված է. «Վա՜յ նրան, ով չարին բարի կասի և բարուն՝ չար»:

Եվ երբ Հիսուս հարցրեց գերգեսացուն, թե անունն ինչ է, սա պատասխանելով՝ ասաց, թե՝ Լեգեոն, քանի որ շատվոր էին:

Մեր մեջ էլ, ճիշտ է, ոչ դևերի, բայց կրքերի բազում լե-

գեոններ կան՝ հպարտության, որկրամոլության, վավաշոտության, աշխարհսիրության, դատարկաբանության, մարդահաճության, սնափառության և դեռ բազում և բազում այլ կրքերի: Եվ սրանցից ազատվելու համար, նախ պիտի գիտակցենք, որ սրանք չար ու մահաբեր բաներ են և մեծ արգելքներ՝ երկնքի արքայության ճանապարհին: Բոլոր սուրբ հայրերի նպատակը մեկն էր՝ հասնել անկրքության երկիրը, այսինքն՝ ըստ Պողոս առաքյալի՝ «հին մարդը կրքերով հանդերձ խաչը հանել»:

Իսկ ի՞նչ էին խոզերը, եթե ոչ այն առարկաները, որոնց հանդեպ կիրք է առաջանում մեր մեջ. դա կարող է լինել հագուստ կամ կերակուր, պաշտոն կամ գեղեցիկ կերպարանք, գրքեր կամ ինչ-որ հավաքածու, հեռուստացույց և թե աշխարհային այլ բազում բաներ:

Բայց մենք պարտավոր ենք մեռած լինել այս բոլորի հանդեպ, որպեսզի մեր պանդխտության օրերը այս անցավոր կյանքում կարողանանք Տիրոջ ողորմությամբ հասցնել հաղթական ավարտին և հասնել բուն հայրենիք՝ «ի Վերին Երուսաղեմ»: Բայց մինչ այս բոլորի վտանգավորությունը չտեսնենք և ի սրտե չաղաղակենք առ Աստված, սրանցից փրկություն չկա: Մեր անելիքը սա է՝ փնտրել, որպեսզի գտնենք, բախել, որպեսզի բացվի, և խնդրել, որպեսզի տրվի: Սուրբ հայրերն ասում են. «Դու սկսի՛ր, և Աստված կսկսի քո փրկագործությունը»: Իսկ եթե հույսդ դրել ես Աստծո ողորմության վրա և անհոգ ես կրքերիդ հանդեպ, ապա կսեպվես գերգեսացիների դասը, որոնք Տիրոջը իրենց երկրից դուրս հանեցին: Ուրեմն մենք մեր գործերով Տիրոջը մեր սրտերից չհանենք: Իսկ եթե Աստված տեսնի մեր, թեկուզ, թույլ և տկար ջանքերը, ապա Նա էլ Իր ողորմության և մարդասիրության համեմատ միջամուխ կլինի մեր այդ ձգտմանը և կօգնի մեզ մաքրվել և սրբվել կրքերից և ցանկություններից, որոնք մեղք են ծնում, իսկ սա էլ իր հերթին՝ մահ:

Եվ երբ Տիրոջ ողորմությամբ կմաքրվենք և կբժշկվենք, այնժամ կարող ենք հանդարտ նստել Տիրոջ ոտքերի մոտ՝ բժշկված գերգեսացու պես: Եվ այնժամ, ինչպես գերգեսացիները, տեսնելով բժշկված դիվահարին, վախեցան, մենք էլ կդառնանք ահ ու սարսափ՝ դևերի դասերի համար, որովհետև նրանք պատերազմում են մեր դեմ մեր կրքերի օգնությամբ, իսկ նրանցից ազատված վիճակում նրանց զորությունը տկարանում է: Իսկ քանի որ մաքուր ու սուրբ անոթների մեջ Աստված է բնակվում, ուրեմն, մեր հաղթարշավը դեպի Քանան չափազանց հեշտանում է:

Եվ այս բժշկված վիճակում է միայն, որ կարող ենք լսել Տիրոջ ձայնը և դառնալ պատճառ՝ բազում մարդկանց փրկության: Ինչպես որ Տերն ասաց արդեն բժշկված գերգեսացուն. «Գնա քո

տունը, քո ընտանիքը և պատմի՛ր, թե Տերն ինչպես ողորմեց քեզ»: Նա էլ գնաց և սկսեց Դեկապոլիսի մեջ պատմել, ինչ որ Հիսուս իրեն արեց: Բոլորը զարմանում էին:

Ուրեմն, մեր քարոզներով ու վկայություններով չնմանվենք աղաղակող գերգեսացուն, այլ մեր կյանքի ճշմարիտ փոփոխությամբ քարոզենք երկնքի արքայությունը, որպեսզի Հոգով և ճշմարտությամբ փառավորվի Ամենասուրբ Երրորդությունը. Ամեն:

Նարեկ

Բան (ԽԶ)

Ո՜վ անձդ իմ դերի, ի սպառ կշտամբված.
Ճիշտ է, առաջին նմանությունից,
Կյանքի դրախտում մեղանչելով սուրբը
Պատվիրանի դեմ, դու կողոպտվեցիր,
Բայց ավազանի լույս շնորհներով՝
Հոգու փչման հետ չէ՛, որ ստացար
Նաև պատկերի նմանությունը:
Արդ, ինչո՞ւ կորցրիր փառքը երկնային,
Ինչպես երբեմն Եդեմ-դրախտում
Նախաստեղծողը այն՝ վիճակն երկնավոր.
Ինչո՞ւ փակեցիր ինքդ քո ձեռքով երկինքը քո դեմ,
Վերելքիդ դուռը կողպեցիր իսպառ.
Ինչո՞ւ խառնեցիր մաքուր ջրի հետ
Ախտն արցունքների քո տաժանաբուխ.
Ինչո՞ւ լվացված ձորձը ծածկույթիդ
Աղտեղեցիր քո զազիր գործերով.
Ինչո՞ւ մեղքերիդ պատմուճանը, որ մի կողմ էր դրված,
Անառակ վարքով, հագար վերստին.
Ինչո՞ւ ժանտերի ճանապարհներով
Ապականեցիր մաքրությունը քեզ կրող ոտքերի.
Ինչպե՞ս վերստին ուխտազանց եղար իրավադատին՝

Մեղանչելով հին պատվիրանի դեմ.
Ինչո՞ւ զրկվեցիր շնորհի պաղից,
Ինչպես Ադամը՝ ծառից կենարար.
Ինչո՞ւ նենգեցիր ինքդ կամովին
Հավերժությունը անստվեր հույսի.
Ինչպե՞ս օգնեցիր, որ անհամարձակ
Ամոթը սաստիկ ծածկի դեմքը քո.
Ինչպե՞ս զինվեցիր ինքդ ընդդեմ քեզ,
Ո՛վ ընդունարար խելագարության.
Ինչո՞ւ որս դարձար մահվան ծուղակին՝
Թողած արահետն ամենավստահ.
Ինչպե՞ս բռնվեցիր պատրանքի կարթով
Հաղո՛րդդ մարմնին կենդանարարի:
Սակայն դու դարձյալ հուսալով նրան՝ պաղատի՛ր իրեն.
Ապավեն և լույս քավիչ, նորոգիչ,
Փրկիչ, կեցուցիչ և կենդանարար,
Ողորմած, գթած, մարդասեր, անոխ,
Բազմագութ, օրհնյա՛լ հավիտյանս. ամեն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի)

Ծիծաղի և լացի մասին

Խրատը *պահողը կյանքի ճանապարհի մեջ է, բայց հանդիմանությունը մերժողը կմոլորվի (Առակ 10:17):*

Գիտունի համար ***խրատը*** *նման է ոսկեղեն զարդի և աջ բազկի ապարանջանի (Սիրաք 21:24):*

Աստվածաշնչից

1. Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, որովհետև պիտի սգաք ու պիտի լաք (Ղուկ. 6:25):

2. Երանի նրանց, որ այժմ լալիս են, որովհետև պիտի ծիծաղեն (Ղուկ. 6:21):

3. Նրանք, որ արցունքով են ցանում, ցնծությունով պիտի հնձեն: Նա, որ լացով է գնում՝ տանելով ցանելու սերմը, անշուշտ ցնծությամբ ետ պիտի դառնա՝ իր ցորենի խրձերը բերելով (Սաղմ. 125:5- 6):

4. Ծիծաղի համար ասացի. «Հիմար է»: Եվ ուրախության համար՝ «Սրա արածը ի՞նչ է» (Ժող. 2:2):

5. Ծիծաղում են և չարությունով բռնություն խոսում. բարձրից են խոսում: Իրենց բերանը երկնքում են դնում, բայց իրենց լեզուն երկրի մեջ է ման գալիս (Սաղմ. 72:8-9):

6. Ծիծաղելու ժամանակ էլ մարդու սիրտը տրտմություն է զգում, և ուրախության վախճանը սուգ է լինում (Առակ. 14:13):

7. Իմաստունի սիրտը սուգի տուն է, իսկ հիմարինը՝ ուրախության (Ժող. 7:4):

8. Տրտմությունը ծիծաղից լավ է, քանի որ երեսի տրտմությունից սիրտն է զվարճանում (Ժող. 7:3):

9. Ինչպես փշերի ձայնը կաթսայի տակ, հիմարների ծիծաղն էլ այնպես է (Ժող. 7:6):

10. Սուգի տուն գնալը խնջույքի տուն գնալուց լավ է (Ժող. 7:3):

11. Ծիծաղելիս տխմարը բարձրացնում է իր ձայնը, իսկ խորագետ մարդը հազիվ ժպտում է հանդարտ (Սիրաք 21:23):

12. Գուրգուրիր որդուդ, և նա քեզ կվախեցնի, խաղա նրա հետ, և նա քեզ կտրտմեցնի: Մի ծիծաղիր նրա հետ, որպեսզի ցավ

չպատճառի քեզ, և հետո ատամներդ չառնեն դառնությունից (Սիրաք 30:9-10):

13. Իսկ դուք մի ցնծացեք, որ չամրանան ձեր կապանքները (Եսայի 28:22):

14. Եվ այն մարդիկ, որ նրան պահպանում էին, ծիծաղում էին նրա վրա և խփում (Ղուկ. 23:11):

15. Հերովդեսն էլ, իր զորականներով հանդերձ, արհամարհեց Նրան և ծիծաղելով Նրա վրա՝ սպիտակ զգեստներ հագցնել տվեց ու վերստին հանձնեց, որ տանեն Նրան Պիղատոսի մոտ (Ղուկ. 23:11):

16. Եվ հիմա ծաղր անողներ մի լինեք, որ ձեր կապերը ավելի չպնդանան (Եսայի 28:22):

17. Մինչև ե՞րբ պիտի, ով անմիտներ, անմտություն սիրեք, և մինչև ե՞րբ պիտի ծաղր անելը հաճելի լինի ծաղր անողներին. և հիմարներն ատեն գիտությունը (Առակ. 1:22):

18. Ամբարտավան լրբի անունը ծաղրող է (Առակ. 21:24):

19. Դուք պիտի լաք և պիտի ողբաք, իսկ աշխարհը ուրախ պիտի լինի (Հովհ. 16:20):

20. Ո՞վ կտար իմ գլխին ջուր և իմ աչքերին՝ արտասուքի աղբյուրներ (Ողբ Երեմ.9:1):

21. Մենք իսկ, որ Հոգու առաջին պտուղն ունենք, մենք ևս մեր մեջ հեծեծում ենք՝ սպասելով որդեգրությանը՝ մեր մարմնի փրկությանը (Հռոմ. 8:23):

22. Մեղավորնե՛ր, մաքրեցե՛ք ձեր ձեռքերը. երկմիտնե՛ր, ուղղեցե՛ք ձեր սրտերը, տառապեցե՛ք, սգացե՛ք և լացե՛ք. ձեր ծիծաղը սուգի թող վերածվի, և ձեր ուրախությունը՝ տրտմության (Հակ. 4:9):

Հայրերից

1. Լսի՛ր այժմ ծիծաղի մասին. ծիծաղը հեռացնում է մեզանից սգավորներին խոստացված երանությունները և քանդում է կառուցվածը: Ծիծաղը վիրավորում և տրտմեցնում է Սուրբ Հոգուն, օգտակար չէ մեր հոգուն և քայքայում է մարմինը: Ծիծաղը հեռացնում է առաքինությունները, մահվան և տառապանքների հիշողությունները (Եփրեմ Ասորի):

2. Լսում ենք, որ Ինքը՝ Բանն Աստված, մեր մեղքերի համար գամվեց փայտին ու անշնչացավ, իսկ մենք ծիծաղում ենք՝ հանձնվելով ցրվածությանը: Արևը, չտանելով ամենակալի անարգանքը, իր լույսը խավարի փոխեց, իսկ մենք մեր մեղքերի խավարից չենք ուզում ելնել: Տաճարի վարագույրը, որը երբեք չէր մեղանչել, ինքն իրեն պատռվեց, իսկ մենք չենք ուզում, որ մեր սիրտը զղջմամբ պատռվի մեր մեղքերի համար: Ապաշխարենք, վերջապես, եղբայրներ, որպեսզի Աստծո ողորմածությանը արժանանանք (Եփրեմ Ասորի):

3. Հոգևոր ապականության սկիզբը ծիծաղն ու ինքնակամությունն է: Երբ քո մեջ կտեսնես այս, իմացի՛ր, որ չարիքների խորքն ես հասել: Անդադար աղոթի՛ր Աստծուն, որ ազատի քեզ այսպիսի մահվանից: Ծիծաղն ու ինքնակամությունը ոչ միայն երիտասարդին, այլև ծերին մղում են ամոթալի կրքերի, սրանք ցրտաշունչ քամու նման ոչնչացնում են հոգևոր պտուղները (Եփրեմ Ասորի):

4. Եթե պահիր քեզ կատակներից, որպեսզի նրանք քեզ անամոթության չհասցնեն, քանի որ անամոթությունը մայրն է անպիտանության (Եփրեմ Ասորի):

5. Որքան հնարավոր է, փախիր կատակներից և հետաքրքրաշարժ զրույցներից (Անտոն Անապատական):

6. Վառիր քո լապտերը արցունքներիդ յուղով (Անտոն Անապատական):

7. Լավ է դեմքդ միշտ տխուր լինի, որպեսզի քո մեջ բնակվի Աստծո երկյուղը (Անտոն Անապատական):

8. Քեզ ինչ-որ բան մի կարծիր, այլ միշտ լացիր մեղքերիդ համար (Անտոն Անապատական):

9. Երբեք քեզ թույլ մի՛ տուր ծիծաղել՝ ատամներդ մերկացնելու աստիճան, դա հոգու ցրվածության և սնափառության նշան է՝ զերծ Աստծո վախից (Աբբա Եսայի):

10. Մի ծիծաղիր մարդկանց վրա, ու ամբողջ կյանքում ծաղրի չես ենթարկվի (Նեղոս Սինայեցի):

11. Այն, որ մարդկանց կյանքը լեցուն է ողբով ու լացով, պարզ հասկանում ես՝ տեսնելով, ինչպես են լացում նորածինները՝ հազիվ դուրս գալով մոր որովայնից, և ինչպես ողբի է արժանանում խեղճ մարդն իր մահվանից հետո (Նեղոս Սինայեցի):

12. Հարկավոր է ուրախանալ այնպես, որպեսզի հիշողությունից երբեք դուրս չգա գալիք դատաստանի դառնությունը (Գրիգոր Երկխոս):

13. Անպարկեշտ է ծիծաղը, և կշտամբելի է աչքերի անամոթ նայվածքը, ամեն մի անմիտ ընկնում է նրա մեջ (Եվագր Պոնտացի):

14. Հաճույք մի փնտրիր ծիծաղկոտության մեջ և համամիտ մի եղիր բամբասողների և դատողների հետ, քանի որ հեռանալու է նրանցից Տերը (Եվագր Պոնտացի):

15. Եթե ուզում ես իմանալ՝ երկյուղ ունե՞ս Աստծուց, թե՝ ոչ, հարցրու արցունքներիցդ (Եվագր Պոնտացի):

16. Արդ, երբ դու տեսնես, որ ամեն ժամ գործառնությամբ հանդերձ, սփռում ես քո խորհուրդները Տեր Աստծու և միայն Նրա հայացքի առաջ, այնժամ Ինքը՝ Տերը, կհայտնվի քեզ, Իրեն անճառապես ցույց կտա Իր ցանկալի գեղեցկությամբ կպայծառացնի, Իր օգնականությամբ առլեցուն կդարձնի, Իր ողջ հաղթությունը կտա և կազատի քեզ քո աներևույթ թշնամիներից՝ հայելով քո՝ նախապես Իրեն ուղղված անզբաղ խնդրվածքներին, մտքիդ անսխալ ակնկալությանը և սրտիդ՝ Իր հանդեպ միշտ աննվազ տածվող սիրույն: Ահա այսպես կուսուցանի և կտա քեզ ճշմարիտ աղոթքը, հավատքի և ճշմարտության սերը, երկնային և ճշմարիտ խնդությունը, որն Ինքը Քրիստոսն է, որ ամենուրեք քեզ հետ է (Մակար Մեծ):

17. Ահա թե ինչ են ասում այս մարդիկ, կարծրացած սրտով տրված ստությանը: «Չկա չարիք զվարճություններից: Ի՞նչ վնասակար բան կա խաղերի (հեռուստատեսային, աշխարհի երգ ու պարի) մեջ: Օ՜, ծայրագույն անմտություն, օ՜, դիվային չար ներշնչանք: Չար և շնացող ազգ, այսպե՞ս եք ձեր երախտապարտությունը հայտնում Տիրոջը: Ամենասուրբ Տերը պատվիրում է, որպեսզի քրիստոնյաները ընդհանրապես չկպչեն աշխարհիկ զվարճություններին, իսկ դու ասում ես՝ ի՞նչ վնաս կա դրա մեջ: «Վայ նրանց, որոնք չարը բարի կանվանեն և բարին՝ չար, որոնք լույսը խավար կհամարեն և խավարը՝ լույս, որոնք դառը քաղցր կհամարեն, իսկ քաղցրությունը՝ դառը» (Եսայի 5:20):

Ոչ ոք թող ձեզ չխաբի, իմ եղբայրներ, որքան դուք տրվեք հաճույքներին, այնքան կընկնեք շնորհից (Հովհան Ոսկեբերան):

18. Ով անկաշկանդ վարվեցողությանը խառնում է զազրախոսություն, անտարակույս նրա ծիծաղի մեջ էլ հայհոյախոսություն մասնիկ կա: Արդեն ասել ենք, որ անկաշկանդ վարվեցողությունը օգտակար չէ, ուստիև, ծիծաղն էլ պիտի չերկարի և ազատություն չստանա: Խոսքի պահեցողությունը կօգնի արժանավայել շրջանցելու ծիծաղը: Քանզի նրանք, ովքեր իրենց ազատություն են տալիս այս հարցում, թող իմանան, որ սրա հետևանքով անառակության մեջ են ընկնում (Բարսիլիսկոս Մեծ):

19. Հարց. -Տերն ասել է. (Երանի սգավորներին((Մատթ. 5:4), իսկ Խոսքի համաձայն, պետք է միշտ ուրախ լինել (Թես. 5:17), (Հռոմ. 12:10): Ասա ինձ, ի՞նչը կարող է մարդու համար սգո առիթ լինել, ինչը՝ մշտական ուրախության: Եվ հնարավո՞ր է այս երկուսը՝ սուգը և ուրախությունը, մեկտեղ լինեն:

Պատ. -Սուգն Աստծո հանդեպ վշտանալուց է լինում, որը մարդուն մղում է ապաշխարության, իսկ ապաշխարության նշաններն են. պահքը, սաղմոսերգությունը, աղոթքը, Աստծո Խոսքի ուսումնասիրությունը: Ուրախությունը, Աստծո հանդեպ ուրախությունն է, որն երևում է թե՛ մարդու պահվածքից, թե՛ խոսքից: Թող սիրտը սգի մեջ մնա, իսկ մարդու դեմքին և խոսքերի մեջ արժանավայել ուրախություն լինի (Բարսիլիսկոս Մեծ):

20. Եթե ոչինչ այնքան համահունչ չէ խոնարհամտությանը, ինչպես լացը, ուրեմն, անկասկած, ոչինչ այնքան չի խոչընդոտում նրան, ինչպես ծիծաղը (Հովհաննես Սանդուղք):

21. Եթե ձեռք ես բերել լաց, ապա ամբողջ ուժով պահպանիր այն, քանի որ մինչև կատարելապես քոնը չդառնա, հեշտությամբ կարող ես կորցնել, և ինչպես մոմը հալվում է կրակից, այդպես էլ այն դյուրին ոչնչանում է՝ մարմնական հոգսերից և հաճույքներից, հատկապես, շատախոսությունից և ծիծաղից (Հովհաննես Սանդուղք):

22. Խոնարհության ձեռքով մերժիր քեզ վրա եկող ուրախությունը, որպես թե անարժան ես դրան, որպեսզի չտարվես դրանով և գայլին Հովվի տեղ չընդունես (Հովհաննես Սանդուղք):

23. Ես հանդիպել եմ մարդկանց, որոնք մեծարվել են որպես ստախոսներ և դատարկաբաններ և իրենց սրամտություններով գրգռել են ծիծաղ՝ լացողների շրջանում, կործանելով նրանց լացը և ողբը (Հովհաննես Սանդուղք):

24. Եղբայրներ, մենք չենք դատվի մեր շունչը փչելիս, ինչ է՝ հրաշքներ չենք գործել, չենք քարոզել կամ վկայել, տեսիլքներ չենք տեսել, բայց, անկասկած, պատասխան պետք է տանք Աստծուն այն բանի համար, որ անդադար չենք լացել մեր մեղքերի համար (Հովհաննես Սանդուղք):

25. Անժամանակ ծիծաղը երբեմն առաջանում է շնության դևի կողմից, իսկ երբեմն էլ՝ փառասիրությունից, երբ մարդը ներքուստ ինքն իրեն անամոթաբար գովում է, երբեմն էլ

ծիծաղն առաջանում է կերակրի հագեցումից (Հովհաննես Սանդուղք):

26. Ով հանդերձավորվել է երանելի և բարերար լացով, իբրև հարսանեկան զգեստով, նա ճանաչել է հոգևոր ծիծաղը և ուրախությունը «Ուրախ եղեք Տիրոջով, դարձյալ եմ ասում ձեզ, ուրախ եղեք» (Փիլիպ. 4:4) (Հովհաննես Սանդուղք):

27. Ով ներքուստ հպարտանում է իր արցունքներով և իր մտքում դատում չլացողին, նման է նրան, ով թագավորից զենք է խնդրում իր թշնամուն խոցելու համար, բայց դրանով սպանում է ինքն իրեն (Հովհաննես Սանդուղք):

28. Հաճախ մի խոսքը հեռացնում է լացը, բայց հրաշալի կլիներ, եթե մի բառով էլ կարելի լիներ վերադարձնել այն (Հովհաննես Սանդուղք):

29. Ով հարատևում է Աստծո հանդեպ ունեցած մշտական լացի մեջ, նա չի դադարում հոգևորապես ուրախանալուց: Իսկ ով միշտ մարմնական տոների մեջ է, նրան սպասում է հավիտենական լացը (Հովհաննես Սանդուղք):

30. Ով երբեմն լացում է, իսկ երբեմն էլ՝ խոսում ծիծաղաշարժ բաների մասին և բավականություն ստանում դրանից, նա քարի փոխարեն հաց է նետում վավաշոտության շան վրա, առերես, կարծես թե, քշում է նրան, բայց իրականում հրապուրում է իր կողմը (Հովհաննես Սանդուղք):

31. Ոչ թե հարսանյաց հանդեսի , օ՜ բարեկամներ, ոչ թե հարսանյաց հանդեսի ենք մենք հրավիրված, այլ մեզ այստեղ Կանչողը ճշմարտապես կոչ է անում, որպեսզի լանք ինքներս մեր վրա (Հովհաննես Սանդուղք):

32. Օրհնյալ և արդար մեր Դատավորը, ինչպես որ ամեն ինչում, այնպես էլ, անկասկած, և լացի խնդրում դատում է ըստ բնական կարողությունների, քանի որ ես տեսել եմ ոմանց, որոնք քամում են արցունքի նվազ կաթիլներ, նման արյան կաթիլների: Իսկ ոմանք էլ առատությամբ, այն էլ առանց մեծ ջանքի, արտասուքի աղբյուրներ են հեղում: Բայց ես դատում եմ ըստ ջանքի, և ոչ թե ըստ արցունքների քանակի: Կարծում եմ, որ Տերը նույնպես այդպես է դատում (Հովհաննես Սանդուղք):

33. Ինչպես որ կրակը այրում է ծղոտը, այնպես էլ մաքուր արտասուքը ոչնչացնում է բոլոր տեսակի արտաքին և ներքին ախտերը (Հովհաննես Սանդուղք):

34. Ինչպես որ չի կարելի մեկ լոպեում հագեցնել որովայնի պահանջը, այնպես էլ չի կարելի միանգամից հաղթել վախկոտությանը: Մեր լացի զորացման հետ մեզանից հեռանում է այն, իսկ լացի սակավության հետ զորանում է վախը (Հովհաննես Սանդուղք):

35. Երբ արտասվում ես մեղքերիդ համար, երբեք մի լսիր չանը (դևին), որ ներշնչում է քեզ, թե Աստված մարդասեր է, քանզի նա այդ անում է, որպեսզի քեզ հեռացնի լացից և երկյուղից: Աստծո ողորմության մասին միտքը ընդունիր միայն այն ժամանակ, երբ ընկնում ես անհուն հուսահատության մեջ (Հովհաննես Սանդուղք):

36. Մկրտությունից հետո եղած արցունքների աղբյուրը մեծ է մկրտությունից: Չնայած որ, այս խոսքերը կարծես թվում են փոքր-ինչ հանդուգն: Մկրտությունը մաքրում է մեզ մեր առաջվա ունեցած չարությունից, իսկ արցունքները սրբում են մեղքերը, որոնք գործել ենք մկրտությունից հետո:

Մանուկ հասակում ընդունելով մկրտությունը, հետո մենք այն պղծել ենք մեր մեղավոր ընթացքով, իսկ արցունքներով մենք այն նորից սրբում ենք (Հովհաննես Սանդուղք):

37. Մեր հոգոցները և վշտերը աղաղակում են առ Աստված, իսկ այն արցունքները՝ որոնք առաջանում են վախից, բարեխոսում են մեր համար, իսկ նրանք, որ առաջանում են ամենասուրբ սիրուց, մեզ ավետում են, որ մեր խնդրանքները լսվեցին (Հովհաննես Սանդուղք):

38. Մի դադարիր երևակայել և հիշել խավարային կրակների անդունդները, անողորմ խոշտանգողներին, անգութ Դատավորին, անվերջանալի խորքերը բոցածավալ գեհենի և նեղ ուղիները անդրշիրիմյան վայրերի, սարսափազդու վիհերը, և նմանօրինակ մյուս բաները, որպեսզի մեր մեջ բույն դրած ցանկությունները ոչնչանան մեծ վախի պատճառով, և հոգին միանա անապական մաքրության հետ, ընդունի իր մեջ փայլը աննյութական Լույսի՝ պայծառանալով ամեն մի կրակից առավել (Հովհաննես Սանդուղք):

39. Ինչպես ամուսնուց զրկված այրին, որ ունի մի մինուճար որդի, որը Տիրոջ կողմից իրեն մխիթարություն է, այնպես էլ ընկած հոգու համար մարմնից ելնելու ժամանակ, չկա այլ մխիթարություն, բացի պահեցողության ջանքից և ապաշխարության արցունքներից (Հովհաննես Սանդուղք):

40. Երբ դևերը տեսնում են, որ մենք հենց սկզբից ջանում ենք հեռանալ վնասակար պատմողի ծիծաղաշարժ զրույցներից, ինչպես կորուսիչ վարակից, այն ժամ հարձակվում են մեր վրա՝ փորձելով մեզ դայթակղեցնել երկակի մտքերով. «Մի նեղացրու պատմողին», ներշնչում են նրանք մեզ, կամ. «Քեզ մի ցուցադրիր որպես ավելի աստվածասեր, քան մյուսները»: Իսկ դու արագ կտրիր հեռացրու այդ մտքերը և մի դանդաղեցրու, իսկ եթե այդպես չանես, ապա աղոթքի պահին քո մեջ կծնվեն ծիծաղաշարժ մտքեր: Եվ ոչ միայն փախիր նման զրույցներից և նմանօրինակ չար հավաքներից, այլև առաքի-

նաբար խափանիր դրանք՝ առաջարկելով այդ հա-
վաքվածների միջավայրում հիշողություններ և զրույցներ՝
մահվան և վերջին դատաստանի մասին, քանի որ ավելի լավ է քեզ
համար մի փոքր տուժել սնափառությունից, փոխարենը՝ դառնալով
պատճառ ընդհանուրի օգուտի (Հովհաննես Սանդուղք):

41. Ինչպես որ խեցգետինները հետ որսվում են, որովհետև մեկ առաջ են գնում, մեկ էլ ետ դառնում, այնպես էլ անձը, որը երբեմն լաց է լինում, երբեմն էլ՝ ծիծաղում և հետամուտ է վայելքներին, ոչ մի օգուտ չի կարող ստանալ (Հովհաննես Սանդուղք):

42. Եթե մենք տեսնում ենք բարկություն և հպարտություն նրանց մեջ, ովքեր արտասվում են Աստծո համար, ապա այդպիսիների արտասուքները պետք է կեղծ համարել (Հովհաննես Սանդուղք):

43. Մեղքի հետևանքով առաջացած արցունքները՝ գործնական միջոց են՝ հանգցնելու այն կրակը, որ մեղքերի համար է պատրաստված (Աբբա Պիմեն):

44. Քեզ պահիր ճշմարտությամբ, որպեսզի ամեն օր հիշես քո մեղքերը և թե՝ որքան հեռու ես Աստծո պատվիրաններից, և միշտ հիշես և աչքի առաջ ունենաս անչեջ հուրը, արտաքին խավարը և հավիտենական տանջանքները և նրանց, որ այնտեղ տանջվում և հեծեծում են հառաչանքներով: Եվ որքան զորություն ունես, հառաչել և տրտմել ու սգալ, և այսպես ամեն օր մահն ակնկալել: Արդ, այսպես սգա ինքդ քեզ, օրըստօրե աշխատելով տրտմությամբ և հեծությամբ, երբեք չզվարթանալով, չծիծաղելով: Այլ ամենայն ժամ քո ծիծաղը թող սուգ դառնա, և քո խնդությունը՝ տրտմություն: Եվ միշտ տխուր ու տրտում շրջիր, քանի որ անձդ լցվեց չարչարանքներով (Հայր Սրապիոն):

45. Ով սիրում է ծիծաղը և մարդկանց առջև իրեն ցուցադրելը, այդպիսինին մի ընկերացիր, հակառակ դեպքում նա կսովորեցնի քեզ թուլության տրվելու չար սովորությանը (Իսահակ Ասորի):

46. Հանդգնությունը դրսևորվում է ամենատարբեր կերպերով՝ խոսքով, շարժումներով և հայացքով: Ոմանք հանդգնության պատճառով ընկնում են դատարկախոսության մեջ, խոսում աշխարհային և ծիծաղաշարժ բաներ, ուրիշների մեջ էլ առաջացնելով ծիծաղ: Եվ ահա չկա ոչ մի ավելի վնասակար բան հանդգնությունից, որովհետև սա հանդիսանում է մայրը բոլոր կրքերի, որ դուրս է մղում ակնածանքը և վերացնում Աստծո երկյուղը մարդուց և ծնում անհոգություն (Աբբա Դորոթեոս):

47. Ոչ մի բան այնպես չի քայքայում բարի տրամադրվածությունը, ինչպես ծիծաղը, կատակները և դատարկաբանությունը: Եվ ոչինչ այնքան չի նորոգում խարխլված անձը և չի աջակցում Աստծուն մերձենալուն, ինչպես Աստծու հանդեպ ունեցած երկյուղը,

բարի ուշադրությունը, մշտական կրթությունը
Աստծո խոսքով, աղոթքով զինվելը, պտղաբեր գործերի խա-
տապահանջությունը (Հովհաննես Կառթանցի):

48. Զգուշացիր ծիծաղից, դատարկախոսությունից և անլուրջ սրամտություններից, որպեսզի լացով հավաքածը ցիրուցան չարվի: Անվայելուչ ծիծաղը ցրում է հավաքած բարին, հեռացնում Աստծո շնորհից, սպանում է մահվան մասին հիշողությունը, մոռացության է մատնում Ահեղ դատաստանը: Ծիծաղը մանկամտության նշան է, նշան վավաշոտ սրտի, թույլ և ոչ տղամարդկային հոգու: Ծիծաղը ոչ մի պարագայում պիտանի չէ (Դիմիտրիոս Եպիսկոպոս):

49. Զգուշացիր ծիծաղից, որպեսզի այն չծառայի ի վնաս լացի, և որպեսզի անձդ չդատարկվի ամեն տեսակի առաքինասեր գործերից, քանի որ լացը դեպի բարին է քեզ առաջնորդում: Արթուն եղիր, որպեսզի ծիծաղը չընդգրկի քեզ վտանգի հանդեպ կորուսիչ արհամարհանքի դիվային ցանցի մեջ:

Լացը անհամեմատ լավ է ծիծաղից: Ծիծաղ հրահրողները պիտի ամաչեն դատաստանի օրը և ուրախության ժամանակ կլացեն ու կողբան (Դիմիտրիոս Եպիսկոպոս):

50. Դու, ո՜վ մարդ, ի՞նչ ունես այս աշխարհում արժանի ծիծաղի, ուրախության ու զվարճության: Ի՞նչ բան ունես, որում կարողանաս մխիթարվել: Կյանքդ լի է վշտերով, տրտմությամբ և հոգոցներով, իսկ դու անցկացնում ես ժամանակդ ծիծաղկոտությամբ և կատակներով: Կյանքդ լի է տխրությամբ և ողբով, իսկ դու ուրախանում ես և բարվոք կյանք վայելում: Այդ քո վիճակը խելամիտ չէ, չես հասկանում, թե ինչով ես մխիթարվում: Զգիտես, թե ինչն է քեզ օգտակար և ինչն է պիտանի՝ հավիտենական կյանքը ձեռք բերելու: Մի փնտրիր մխիթարություն նմանօրինակ բաների մեջ, այլ փնտրիր մխիթարություն Տիրոջ մեջ (Դիմիտրիոս Եպիսկոպոս):

51. Փախիր ծիծաղից, դատարկախոսությունից և սրբապիղծ սրամտություններից, որպեսզի չզրկվես Աստծո շնորհից, և որպեսզի հոգիդ չդարձնես չոր անապատ: Քանի որ ծիծաղը և կատակները դուրս են մղում Աստծո շնորհը, սառեցնում սիրտը, ճնշում հոգին, մթագնում են խիղճը, տխրեցնում են հրեշտակներին, ներաբնակեցնում դևերին, պատճառ են ամեն տեսակի հանդգնության, արտադրող են մեղքերի, ղեկավար՝ շնության և առաջնորդ ամեն տեսակի աղտեղության (Դիմիտրիոս Եպիսկոպոս):

52. Դեռ չազատված սգից, արդեն մխիթարություն ես փնտրում ծիծաղի, դատարկախոսության և սրբապիղծ կատակների մեջ: Այս սին աշխարհում ոչինչ չունես ուրախության արժանի, բայց ահա հարատևում ես ծիծաղի մեջ: Չեմ հասկանում քո մտադրու-

թյունները, մի՞թե չես հասկանում, որ այս աշխարհն ամեն ինչից առավել արժանի է լացի և ոչ թե՝ ծիծաղի, արժանի է ողբի և ոչ թե՝ ուրախությունների: Քանի որ դու գտնվում ես լացի երկրում, այլ ոչ թե՝ մխիթարության, պանդխտության մեջ ես և ոչ թե՝ հայրենիքում, և դրա համար էլ պետք է սգաս, և ոչ թե ուրախանաս, լացես ու ողբաս և ոչ թե՝ ծիծաղես և սրամտես (Դիմիտրիուս Եպիսկոպոս):

53. Կորցնելով մի փոքր առարկա, հուզվում ես և չափազանց վշտանում: Իսկ կորցնելով հավիտենական հայրենիքդ՝ ծիծաղում ես և ուրախանում, և մի փոքր անգամ չես սգում դրա համար և չես փնտրում այն: Լինելով այս պանդխտության վայրում, հանգիստ ես վայելում, կարծես թե, գտնվում ես հավիտենական հայրենիքում: Որտեղ պետք է լացել ու ողբալ, այնտեղ դու ծիծաղում ու զվարճանում ես, որտեղ քեզ պետք է հոգալ և ջանալ ստրկությունից ազատվելու համար, այնտեղ տրվում ես անհոգության ու նինջի: Մի երկրից մի ուրիշ տեղ գերվածը ողբում և հույժ տագնապում է իր վիճակի համար, իսկ դու՝ վտարված լինելով դրախտից աշխարհ, կյանքի փոխարեն դատապարտված մահվան, զրկված ազատությունից, տքնում ես ստրկական աշխատանքից հեռավոր մի երկրում, և այս ցավալի վիճակը քեզ վրա ոչ մի ազդեցություն չի թողնում, և դու ոչինչ չես զգում: Զես ողբում քո խաղաղ, սիրելի, ազատ, հավիտենական հայրենիքի համար, չես սթափվում և չես հոգում քո քավության և ազատության համար: Սա հաստատում է քո անմտությունը և կուրությունը (Դիմիտրիուս Եպիսկոպոս):

54. Եվ այսպես, վանիր ծիծաղը քեզանից, որպեսզի չհասնի քեզ հավիտենական լացը: Զգուշացիր շատախոսությունից և անարգ սրամտություններից, որպեսզի հետո չփոշմանես դառնությամբ այն ժամ, երբ հոգիդ մարմնիցդ դուրս գալու ժամին կհասնի, և երբ կտեսնես հոգուդ աղքատությունը, երբ էլ ոչ մի հնարավորություն չես ունենա օգնելու ինքդ քեզ: Ա՜խ, եթե դու գիտակցեիր, ա՜խ եթե դու տեսնեիր, թե ինչ է լինելու այս ամենից հետո, այնժամ երբեք չէիր ուզենա լինել անհոգ, երբեք չէիր սպանի քո ժամանակը ծիծաղկոտությամբ և անմիտ կատակներով: Ծիծաղեցին ոմանք երբեմն, իսկ հիմա լացում են, ուրախանում էին, իսկ հիմա ողբում են և երբեք չեն դադարելու ողբալուց (Դիմիտրիուս Եպիսկոպոս):

55. Հատկապես զգուշացիր ծիծաղից այն ժամ, երբ հագեցել ես կերակրով և ըմպելիքով, քանի որ ծիծաղը սովորաբար ավելի մեծ զորությամբ է հարձակվում այդ ժամանակ: Եթե կպատահի քեզ ինչ-որ ժամանակ մեղանչել այս բանում, ապա անպայման զղջա (Դիմիտրիուս Եպիսկոպոս):

56. Լացիր, քանի որ դու ծնվել ես մի աշխարհում, որը լեցուն է մեղքերով, և քանի որ դու ամեն օր անդադար մեղանչում ես Աստծո առջև: Լացիր, որովհետև ունես բազում հակառակորդներ և չար իշխողներ՝ անտեսանելի, աննյութեղեն, անքուն հալածիչներ, որոնց ձեռքին կրակ է, որով կամենում են այրել Քրիստոսի Եկեղեցին: Լացիր, հիշելով մահը, քանի որ մահանալու ես և դառնալու հող ու մոխիր: Լացիր, քանի որ պիտի անցնես չար ոգիների օդային սարսափազդու մաքսատներով և այնտեղ պիտի խոշտանգվես, մինչև իսկ բերնիցդ ելած ամեն մի պարապ խոսքի և մտքովդ անցկացրած ամեն մի չար մտածմունքի համար (Դիմիտրիուս Եպիսկոպոս):

57. Եթե քո գործած մեղքը անցել է ամեն տեսակի մեղանչումից էլ այն կողմ, էլի պիտի չհուսալքվես և անմխիթար սգաս, քանի որ չկա մեղք, որ կարող լինի հաղթել Աստծո ողորմությանը: Մեր մեղքերը չեն կարող համեմատվել Աստծո հորդահոս առատաձեռնության հետ (Դիմիտրիուս Եպիսկոպոս):

58. Ծիծաղկոտությունն ու անբռնազբոսիկ վարվելակերպը պոռնկության դևի գործն է («Հոգևոր Պատերազմ» գրքից):

59. Ծիծաղել՝ նշանակում է դևին ուրախացնել («Հոգևոր պատերազմ» գրքից):

60. Ծիծաղը ոչ մի պարագայում պիտանի չէ («Հոգևոր պատերազմ» գրքից):

61. Ծիծաղը Եկեղեցում դատապարտելի է («Հոգևոր պատերազմ» գրքից):

62. Լինում է և առանց խոնարհության լաց, այսպիսի լացը չի մաքրում մեղքը («Հոգևոր պատերազմ» գրքից):

63. -Ինչպե՞ս ազատվել ծիծաղից:

-Հիշիր Աստծուն և Ահեղ դատաստանը («Հարց և պատասխան» գրքից):

64. Եթե լաց ես լինում, երբ քեզ վշտացնում են և վիրավորում, այդ արցունքները օգտակար չեն: Իսկ եթե լալիս ես, որ ծույլ ես, նեղացկոտ, որ չես սիրում Աստծուն, ինչպես պետք է, այդ արցունքները օգտակար են, և պետք է աղոթել նման արցունքներ ստանալու համար («Հարց և պատասխան» գրքից):

65. Ծիծաղը դևի հայտնագործությունն է (Հոգեշահ գրքերից):

66. Դատարկախոս կատակասերի վերջը հավիտենական տանջանքն է (Հոգեշահ գրքերից):

67. Ուշադի՛ր եղիր. մեկը ծիծաղում է, իսկ ընկերը սաստում է նրան, մեկ ուրիշն առարկում է, թե ծիծաղելուց ի՞նչ վնաս կա: Սակայն ծիծաղից է, որ ծնվում են խեղկատակությունները, անպարկեշտ զրույցները և պոռնկության գործերը (Բարսեղ Մաշկևորցի):

68.Պողոսը նույնպես ասում է. «Ուրախ՝ միշտ Տիրոջով», -ակնարկելով արցունքներից ծնված ուրախությունը: Մարգարեն էլ նույնն է ասում, թե՝ «Նա, որ արցունք ցանի՝ ուրախություն կհնձի»: Ինչպես որ արտասուք ցանողը ուրախություն պիտի հնձի, նմանապես նա, որ ծաղրանք ցանի, ափսոսանք ու տրտմություն կհնձի, համաձայն այն խոսքի, թե՝ «Վայ ձեզ, որ ծիծաղում եք, որովհետև պիտի լաք» (Բարսեղ Մաշկևորցի):

69. Ինչպես որ այս աշխարհի ուրախությունը տրտմություն է ծնում, և սա հայտնի է բոլորին, որովհետև երբ մեկը շատ է խնդում, ասում են. «Աստված վերջը բարին անի», նմանապես, երբ Աստծո համար լանք, այսինքն՝ մեր մեղքերի համար, ապա այդ արցունքներից ուրախություն կծնվի: Օրինակ, պոռնիկ կինը Քրիստոսի ոտքերը արցունքով լվաց և փոխարենը՝ իր բազմաթիվ մեղքերին թողություն ստացավ (Բարսեղ Մաշկևորցի):

70. Արդարև, ինչպես որ սաստիկ անձրևներից հետո օդը պայծառանում է, նույնպես, երբ արտասվենք, մեղքի խավարը կփարատվի և հոգին կպայծառանա (Բարսեղ Մաշկևորցի):

71. Զղջումի արցունքը թե՛ տանը և թե՛ եկեղեցու մեջ պետք չէ, որ ի ցույց լինի, այլ՝ մեղմ և անձայն, սրտի խորքից, նեղությամբ և տառապանքով, միայն Աստծու համար, ինչպես Աննայինը (Ա Թագ. 1:13), որի միայն շրթունքներն էին շարժվում, իսկ ձայնը ոչ ոք չէր լսում: Արդարև, միայն այդպիսի արցունքներն են, որ փողից ավելի բարձր է շեփորում: Դու ևս, եթե նույն ձևով լաս, Քրիստոսին կնմանվես, որ լացեց Ղազարոսի, Երուսաղեմի և Հուդայի վրա (Բարսեղ Մաշկևորցի):

72. Ավետարանիչներից ոչ ոքի մոտ չի նշված, թե Հիսուսը ծիծաղեց, կամ՝ մեղմիկ ժպտաց, նույնպես ոչ մի սուրբի մասին չի հիշատակված, թե նա ծիծաղել է, բացի Սառայից (Ծննդոց 18:12-15), որի համար էլ պատժվեց, ինչպես նաև Նոյի զավակից, որ կորցնելով իր որդիական պատիվը՝ ծառա դարձավ (Բարսեղ Մաշկևորցի):

73. Ծիծաղի ճանապարհով սատանային մեր մեջ սաստիկ տեղիք ենք տալիս: Ծիծաղելով՝ այլայլում ես քրիստոնյայի դեմքդ, դու որ հրաման առար սուգի մեջ լինել: Արդարև, ուրիշի մեղքերի համար չտրտմողը, եթե պիտի պատժվի, ապա ինչպիսի տանջանքներ պիտի կրի այն, որ իր մեղքերի համար իսկ ցավ չի քաշում: Քահանան կանգնած, բոլորի համար աղաչում է Աստծուն, իսկ դու՝ ծիծաղում ես և չես վախենում (Բարսեղ Մաշկևորցի):

74. Կանայք, հակառակ նրան, որ իրենց գլուխները ծածկում են քողով, սակայն քրքջում են: Ով կին, եկել ես եկեղեցի, որպեսզի մեղքերդ խոստովանես և թողություն խնդրես, իսկ դու ծիծաղում ես, ապա ինչպե՞ս պիտի կարողանաս Աստծուն հետդ հաշտեցնել

(Բարսեղ Մաշկևորցի):

75. Արդյոք խնդուքը չա՞ր բան է՝ հարցնում ես: Չար չէ, բայց մեղադրելի է, երբ անտեղի և անչափ լինի: Խնդուքը մեր մեջ դրված է, որպեսզի սիրտը զբոսնի, երբ բարեկամներ տեսնենք՝ ուրախանանք, իսկ սգավորներին մխիթարենք մեղմիկ ժպիտով և ոչ թե քրքջալով (Բարսեղ Մաշկևորցի):

76. Ասա, ինչո՞ւ ես ծիծաղում, դու որ այնչափ պատժի պարտական ես, չէ՞ որ Քրիստոսի ահեղ ատյանին ներկայանալով՝ մտածումներովդ, խոսքերովդ և գործերովդ, որ խորհեցիր, խոսեցիր և գործեցիր, բոլորի համար հաշիվ պիտի տաս: Նաև կամա և ակամա գործած մեղքերիդ համար պատասխան պիտի տաս, ինչպես Տերն ասաց. «Նա, որ ինձ ուրանա մարդկանց առջև, Ես ևս նրան պիտի ուրանամ Հորս առջև»: Թեև ակամա լինի այդ ուրացումը, միևնույն է, տանջանքներից չես փրկվի, նմանապես, երբ գիտակցաբար կամ անգիտակցաբար մեղանչենք՝ պատիժ պիտի կրենք, ինչպես Առաքյալն է ասում. «Իմ մասին ոչինչ չգիտեմ, բայց դրանով չեմ արդարանում», և թե՝ «Վախենում եմ, միգուցե ինչպես որ օձը խաբեց Եվային, նույնպես դուք էլ խաբվեք»: Ահա նման պատիժների պիտի ենթարկվես, իսկ դու ծիծաղում ես (Բարսեղ Մաշկևորցի):

77. Դատարկախոսությունը, թեև ամեն տեղ էլ վնասակար է, սակայն ավելի եկեղեցու մեջ, պարապ բաներ խոսելու համար չէ, որ գալիս ենք եկեղեցի, այլ՝ ավելի հեծեծելու և հառաչանքներով Արքայություն ժառանգելու համար: Երբ թագավորի մոտ գնաս, չես համարձակվի խնդալ, իսկ այստեղ՝ Աստծո առջև լինելով հանդերձ, չես վախենում, ծիծաղում ես, երբ Նա ցասումի մեջ է (Բարսեղ Մաշկևորցի):

78. Ոմանք այնքան անզգա են, որ այս բաները լսելուց հետո էլ ասում են. ես երբեք չեմ սիրել լացել, այլ ուզում եմ, որ Աստված ինձ միշտ ուրախություն՝ խնդալ և պարել տա: Սրանից ավելի չար ուրիշ ի՞նչ կա: Պարելն ու քրքջալը մեզ հատուկ չէ, այլ անառակներին և դուսաններին, որոնք Աստծո Արքայության բաժնեկից չեն, որովհետև նրանք սատանային են իրենց մեջ կրում և վնասում Քրիստոսի հավատացյալներին: Արդարև, ինչպես որ աղբը և կավը ծեփում են մարմնի աչքերը, նույնպես և պոռնկական երգերը (ռոք, դիսկո, ռեպ, ջազ, էստրադա և այլն) փակում են հոգու և մտքի աչքերը: Մեղքի աղբը նույն ձեր ականջների մեջ է, և այս պոռնկական երգերը ձեզ պիտի չարչարեն: Եվ ավելի ահավորը նա է, որ երբեք չենք դժգոհում, երբ լսում ենք նման բաներ, այլ նույնիսկ ուրախանում ենք այն բաներով, որոնցից պիտի գարշեինք: Արդարև, երբ դուսաններն ու ծաղրածուները զանազան անտեղի բաներ են խոսում, բազմաթիվ անմիտներ ծիծաղում և գովում են այն, մինչդեռ պետք էր նրանց քարկոծել: Նրանք, որ նման բաների համար գովվում են կամ գովում, գեհենի կրակ-

ների մեջ պիտի տանջվեն, համաձայն այն խոսքի, թե. «Ոչ միայն գարշելի բաներ խոսողները պիտի պատժվեն, այլև նրանք, որոնք լսելով այդ բաները, հաճույք են ստանում» (Բարսեղ Մաշկևորցի):

79. Տրտմենք այն տրտմությամբ, որ մայրն է ուրախության, և ոչ թե ցնծանք այն ուրախությամբ, որ ատամների կրճտոց է ծնում: Երկրի վրա մի քիչ հոգնենք, որպեսզի հավիտենապես երկնքի մեջ փափկանանք: Պողոսից ավելի լավը չես, ոչ էլ Պետրոսից առավել ազնվական, որոնք միշտ անոթի, ծարավ ու մերկ էին: Եթե ուզում ես այն քաղաքը գնալ, ուր նրանք գնացին, դու ևս գնա այն ճանապարհով, որ տանում է այնտեղ: Հանգստի ճանապարհը այնտեղ չի առաջնորդում, այլ՝ նեղության, հետևաբար, նեղությամբ ապրենք, որպեսզի հավիտենական կյանքը ժառանգենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհով (Բարսեղ Մաշկևորցի):

80. Զվարճասեր կրոնավորը գերգեսացի դև է (Եզնիկ Կողբացի):

81. Մի՛ լինիր ծաղրածու և խեղկատակ, որ անվախճան լացը չժառանգես (Եզնիկ Կողբացի):

82. Ով սաղմոսելու ժամանակ ծիծաղի կամ մարմնական խոսք մեջ բերի, թող սրբությունից դուրս մնա, մինչև առողջանա (Եզնիկ Կողբացի):

83. Քանզի, եթե դատարկ խոսքերի համար հաշիվ է պահանջում Քրիստոս, ինչպես հրամայեց (Մատթ. 4:22), ապա ի՞նչ պիտի լինեն նրանք, ովքեր գարշելի և վատ բաներ են անխտրաբար խոսում: Մանավանդ նրանք, ովքեր խեղկատակության ու ծիծաղաշարժ խոսքերի են վարժեցնում իրենց լեզուն՝ նմանվելով խեղկատակների և ծաղրածուների, որոնք ծիծաղելիս այլայլում են դեմքը և անմտաբար քրքջում: Ուստի, աղաչում եմ, ձեր խոսքերը անհամ և անալի թող չլինեն անմիտ ռամիկների խոսքերի պես, այլ աղով համեմված՝ ըստ առաքյալի խրատի (Կող. 4:6), որպեսզի լսողներին շահ և օգուտ բերեն և ոչ թե դայթակղություն ու զզվանք պատճառեն (Ներսես Շնորհալի):

84. Եթե առայժմ հուրը երկնքից ընկնելով արագապես չի այրում, արդյո՞ք վախճանի Օրը հատուցում չի լինի, երբ ոչ միայն գործերի քննություն է լինելու, այլև՝ խոսքերի ու խորհուրդների: Եվ գռեհիկ դատարկաբանության ու ծաղրածության համար ստուգապես պատիժ և պատուհաս է պատրաստված (Խոսրով Անձևացի):

85. Աղոթքի վայրում չպետք է ծիծաղել, այլ՝ լալ, որովհետև այն լալու, արտասվելու տեղ է, քանզի. «Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք», - ասում է Տերը, և. «Երանի՛ նրանց, որ այժմ լալիս են» (Ղուկ. 6:21, 25) (Գրիգոր Տաթևացի):

86. Ուրախանում ենք, խնդում և ծիծաղում, մինչ որպես մեռելի վրա պետք է սգայինք մեր անձերի համար: Մարդ, որքան էլ անզգա լինի, երբ մեռած մարմին տեսնի, չի կարող իր արցունքները զսպել, իսկ ինչպե՞ս չլացենք մենք, երբ հոգին ենք մեռած տեսնում (Սարգիս Շնորհալի):

87. Նմանվեցի գերեզմանների, որոնք արտաքուստ հարդարված են, իսկ ներքուստ լի են աչքով, լեզվով ու ականջով, հոտոտելիքով ու շոշափելիքով, գործված մեղքերի ժանտահոտությամբ: Սովորությամբ միշտ սրանց կողմն եմ դառնում և չեմ ուզում ձերբազատվել, այլ խոզի պես լվացված լինելով հանդերձ, տիղմի մեջ եմ թավալվում: Արցունքի և ողբի այս գործերի մեջ պարարտացած եմ մնում ու հանգիստ վայելում, մարդկանցից ռաբբի եմ կոչվում և այս կյանքը վարում եմ զվարճանալով ու կեղծավորելով (Սարգիս Շնորհալի):

88. Մեծագույն աղետը սակայն այն է, որ հրաման ստացանք ուրիշների մեղքերի համար սգալ, իսկ մենք ոչ միայն մեր մեղքերի համար չենք ապաշխարում, այլ օրեցօր ավելի ենք մեղանչում և աշխարհիկ ուրախություններով ենք զվարճանում, որ շատ շուտով կանցնի և բազմաթիվ ցավեր կծնի: Տրտմենք այն տխրությամբ, որ մայրն է ուրախության, և ոչ թե ցնծանք այն ուրախությամբ, որ նեղություն է ծնում: Թափենք այնպիսի արցունքներ, որոնք ուրախություն են սերմանում. «Ուրախ եղեք, քանի որ Քրիստոսի չարչարանքներին հաղորդակից եք» (Ա. Պետրոս 4:13), և ոչ թե ծիծաղենք այն խնդությամբ, որ ատամների կրճտոց է ծնում. «Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, որովհետև պիտի սգաք ու պիտի լաք» (Ղուկաս 6:25): Այնպիսի նեղություն կրենք, որ հանգստի պատճառ լինի, և ոչ թե՝ ուրախանանք այն փափկությամբ, որտեղից նեղություն և ցավ է ծնվում (Սարգիս Շնորհալի):

Հայրերի վարքից

1. Սա է Ղազարոսը՝ Քրիստոսի բարեկամը, որ չորս օրվա մեռած էր և հարություն առավ: Եվ Սուրբ Հոգու գալուստից հետո՝ առաքյալների կողմից եպիսկոպոս ընտրվեց և ուղարկվեց Կիպրոս՝ Կիտուան քաղաքը, և այնտեղ քարոզեց Քրիստոս: Իր առաջին մահից 15 տարի հետո մահացավ և կյանքի ամբողջ տևողության ընթացքում չծիծաղեց («Վարք սրբոց»):

2. Վարդապետներից մեկը վերջին փողի մասին ասում է. «Այն այնքան սարսափելի է, որ թե՛ ուտելիս, թե՛ խմելիս, և ինչ էլ որ անելիս լինեմ, ինձ այնպես է թվում, թե այն փողը գոչում է ականջիս՝ ասելով. «Ելեք, բոլոր մեռյալներ և տվեք հաշիվը ձեր գործերի»: Ինչպես այն թագավորը, որ բնավ չէր ծիծաղում և շատ հազվադեպ էր ուրախ լինում, բայց արդար դատաստան էր տեսնում:

Իշխանները և նախարարները աղաչեցին այս թագավորի եղբորը, որ հարցնի թագավորից տխրության պատճառը, թե ինչո՞ւ երբեք չի ծիծաղում և միշտ օրն անցկացնում է տխուր-տրտում: Եվ ասաց արքան. «Վաղը կտամ պատասխանը»: Եվ մյուս օրը հրամայեց եղբոր տան մոտ դատապարտություն ազդարարող փողեր հնչեցնել՝ երկար և շատ բարձր: Նաև հրամայեց շատ խոր փոս փորել և մինչև կեսը կրակ վառել, հորի վրա հին, փտած աթոռ դնել՝ աթոռի վերևում բարակ թելով երկայրի սուր կախել: Սրա մոտ սեղան դնել պատրաստված զանազան խորտիկներով, ուտելիքներով և անուշահամ գինով: Այնժամ եղբորը նստեցրեց աթոռին, չորս կողմից սուսերակիրներ կանգնեցրեց՝ առջևից, թիկունքից, աջից և ձախից: Հրամայեց, որպեսզի բոլորը քնարներ և նվագարաններ նվագեն: Եվ ասաց թագավորն իր եղբորը. «Ուրախ եղիր և զվարճացիր, կեր, խմի՛ր, և սիրտդ թող բերկրանքի մեջ լինի»: Եղբայրն ասաց. «Ինչպե՞ս կարող եմ ուրախանալ կամ ծիծաղել, երբ ամեն կողմից մեծ նեղության մեջ եմ»: Այնժամ թագավորն ասաց. «Ինչպես դու ես հիմա, այնպես եմ ես ամեն ժամ: Ինչպես դու իմ փողի ձայնից վախեցար, չնայած, իմ հանդեպ ոչ մի հանցանք չես գործել, նույնպես և ես երկնչում եմ վերջին՝ Տեառնագալուստ փողից, քանի որ մեղավոր և հանցավոր եմ Աստծո առաջ: Փտած աթոռը՝ մարմինս է, իսկ երբ նայում եմ վեր, տեսնում եմ արդար Դատավորին, որին հաշիվ եմ տալու ամեն մի խոսքի, գործի և խորհուրդի համար: Ցած եմ նայում ու միտքս եմ բերում դժոխքի հուրը, և դատապարտյալ

ների տանջանքները, նայում եմ առջևս և տեսնում եմ մեղքերս, որ գործեցի և ժամանակս իզուր անցկացրի: Նայում եմ ետ՝ միտքս եմ բերում մահը, որին շարունակ մոտենում եմ և ոչ ժամը գիտեմ, ոչ տեղը: Ձախ եմ նայում. տեսնում եմ դևերին, որ գիշեր-ցերեկ իմ անձն են փնտրում, և դեմ են իմ փրկությանը: Աջ եմ նայում. տեսնում եմ Աստծո հրեշտակներին, որ միշտ բարի խորհուրդ են տալիս, չար ճանապարհից դարձնում են ինձ, որոնք, ավա՜ղ, ոչ միշտ կատարեցի, և չգնացի նրանց բարի խրատների համեմատ: Եվ այս պատճառով էլ, չեմ կարողանում ծիծաղել և սիրտն իմ զվարճությանը տալ»:

Եվ այսպես, ամեն մարդ պետք է իր ականջը վերջին օրվա փողին պահի և չուրախանա այս աշխարհի ուրախությամբ («Հայելի Վարուց»):

3. Մի օր ես հարցրեցի երանելի Հուլիանոսին, թե ո՞վ է այստեղ փչացնում գրքերը, քանի որ որտեղ գրված էր. «Աստված կամ՝ Հիսուս Քրիստոս, կամ Փրկիչ», այնտեղ տառերի ուրվագծերը գրեթե ջնջված էին: Երանելին պատասխանեց ինձ՝ ասելով. «Չեմ թաքցնի քեզանից ոչինչ: Անառակ կինը, որ եկավ Փրկչի մոտ, ողողեց Նրա ոտքերը արցունքով և սրբեց իր մազերով: Եվ ես, երբ կարդալիս հանդիպում եմ իմ Աստծո անվանը՝ հեղեղում եմ իմ արցունքներով, որպեսզի ես էլ պոռնիկ կնոջ նման Նրանից ստանամ մեղքերի թողություն»: Իսկ ես սիրով ասացի նրան. «Աստված, որպես մարդասեր, կընդունի քո մտադրությունը, բայց խնդրում եմ, խնայիր նաև գրքերը»: Նա պատասխանեց ինձ և ասաց. «Չի ոռոգվում սիրտն իմ, եթե չարտասվեմ իմ Տեր Աստծու առջև» (Եփրեմ Ասորի):

4. Պատմում են հայր Արսենի մասին, երբ զբաղված էր լինում ձեռքի աշխատանքով, մշտապես թաշկինակը ծնկների վրա էր պահում այն արցունքների պատճառով, որոնք իջնում էին նրա աչքերից («Հարանց վարք»):

5. Երբ վախճանվեց հայր Արսեն Մեծը, սուրբ Պիմենը այդ լուրը լսելով՝ արտասվալից ասաց. «Երանելի ես դու, հայր Արսեն, որովհետև դու այս կյանքը լացով անցկացրիր: Քանի որ անկարելի է չլացել այստեղ կամավորապես, կամ կամքիցդ անկախ՝ դժոխքի վի-

հերում»(«Հարանց վարք»):

6. Եղբայրը հարցրեց հայր Պիմենին, թե ինչպիսին պետք է լինի վանականի գործունեությունը: Ծերը պատասխանեց. «Երբ Աբրահամը եկավ Ավետյաց երկիր, նա առաջին հերթին իր համար գերեզման գնեց և գերեզմանից սկսեց իր մուտքը Ավետյաց երկիր»: Եղբայրը հարցրեց. «Ի՞նչ է նշանակում գերեզմանը», ծերը պատասխանեց. «Դա լացի և հեկեկոցի տեղ է» («Հարանց վարք»):

7. Պատմում էր աբբա Իսահակը. «Մի անգամ ես նստած էի հայր Պիմենի մոտ և տեսա, որ նրա միտքը հափշտակվեց: Ես՝ մինչև գետին խոնարհվելով, խնդրեցի, որ ասի ինձ, թե որտեղ էր հայտնվել նա այդ պահին: Ստիպված լինելով հայտնել իր գաղտնիքը, նա ասաց. «Ես մտովին հայտնվել էի Փրկչի խաչի մոտ այն ժամ, երբ այնտեղ կանգնած էր Մարիամ Աստվածածինը և լացում էր, ես շատ կցանկանայի միշտ այդպիսի լացի մեջ լինել» («Հարանց վարք»):

8. Եղբայրը ասաց հայր Պիմենին. «Տուր ինձ հոգեշահ խրատ»: Ծերն ասաց. «Հայրերի մոտ ամեն բան ուղեկցվում էր լացով» («Հարանց վարք»):

9. Մի անգամ հայր Պիմենը անցնում էր հայր Անուվի հետ Դիոլկաս քաղաքի մատույցներով: Տեսնելով այնտեղ մի կնոջ, որը իրեն ծվատում էր և դառնորեն լացում մի գերեզմանի վրա, նրանք մի պահ կանգ առան այդ կնոջ մոտ, ապա մի փոքր հեռանալով հարցրեցին մի անցորդի. «Ի՞նչ է պատահել այդ կնոջը, ինչո՞ւ է նա այդպես դառնորեն սգում»: Անցորդը պատասխանեց. «Մահացել են նրա ամուսինը, որդին և եղբայրը»: Այն ժամ հայր Պիմենը՝ դիմելով հայր Անուվին, ասաց. «Ասում եմ քեզ, եթե մարդը չսպանի իր բոլոր մարմնավոր ցանկությունները և ձեռք չբերի այսպիսի լաց, չի կարող դառնալ վանական: Վանականի ամբողջ կյանքը լաց է» («Հարանց վարք»):

10. Ասաց մի օր հայր Եսային. «Եթե գինով լցված անոթը մնա բացված վիճակում, այն ժամ անոթի վրա կհավաքվեն մոծակները և մլակները, որից և գինին կփչանա: Նմանօրինակ վնասի է ենթարկվում անձը, երբ տրվում է շատախոսության, կատակների և դատարկաբանության» («Հարանց վարք»):

11. Վանական կյանքում ծիծաղը անհնարին էր համարում հայր Անտոնը, և երբ մի օր աշակերտները հարցրին նրան. «Հայր, կարելի՞ է երբևիցե ծիծաղել», ծերը պատասխանեց. «Մեր Տերը

դատապարտում է ծիծաղողներին, երբ ասում է. «Վա՜յ ձեզ, որ ծիծաղում եք, որովհետև պիտի լաք և ողբաք»: Եվ այսպես, նվիրված վանականը չպիտի ծիծաղի, մեզ պետք է հաճախ արցունք թափել նրանց համար, ում կողմից անարգվում է Աստծո անունը: Նրանք խախտում են օրենքը և իրենց ամբողջ կյանքը աղտոտում մեղքերի մեջ: Լանք ու ողբանք անդադար, խնդրելով Աստծուն, որպեսզի թույլ չտա նրանց՝ կործանալ մեղքի մեջ, և մահը վրա չհասնի մինչև ապաշխարելը» («Հարանց Վարք»):

12. Մի որսորդ անապատում տեսնելով հայր Անտոնին եղբայրների հետ կատակելիս, գայթակղվեց նրանից: Իսկ ծերն այս իմանալով, կամեցավ նրան համոզել, թե պետք է երբեմն զիջել եղբայրներին: Եվ ասաց նրան. «Դիր քո նետը աղեղին և ձգիր», և այնպես արեց: Ծերը դարձյալ ասաց, որ էլի ձգի, և նա արեց: Երրորդ անգամ ասաց, որ էլ առավել ձգի, իսկ որսորդն ասաց. «Եթե չափից ավելի ձգեմ, աղեղը կկոտրվի»: Ծերն ասաց նրան. «Այսպես է նաև, եղբայր, Աստծո գործը, եթե չափից ավելի նեղենք եղբայրներին՝ եռանդը կվերանա, դրա համար պետք է երբեմն զիջել նրանց»: Այս լսելով, որսորդը շատ շահեց և գնաց իր տուն: Եղբայրները նույնպես լցվեցին ուրախությամբ և գոհացան Աստծուց («Հարանց Վարք»):

13. 394 և 404 թվականներին Կ. Պոլսում եկեղեցու հայրապետն էր զարմանալի ու պայծառ ջահ սուրբ Հովհան Ոսկեբերանը, որ Քրիստոսի համընդհանուր եկեղեցին լուսավորում էր կենաց խոսքի վարդապետությամբ: Սա մկրտվելուց հետո գինի չխմեց, չծիծաղեց, չերդվեց և ոչ ոքի չնզովեց:

Աղոթք

Հեռացրու՛ ինձանից, Տեր, ծիծաղը և պարգևի՛ր ինձ լաց և ողբ, որը Դու, ով Աստված, պահանջում ես ինձանից:

Պարգևի՛ր ինձ, Տե՛ր, Դավթի լացը և Երեմիայի ողբը, Պետրոսի հառաչումը և պոռնիկ կնոջ արտասուքների հորդառատ վտակը, որպեսզի նստած անդադար լամ օր ու գիշեր, որ արժանանամ սրբվելու ախտից և թարախից, ազատվելու որդնած վերքերից, թեթևանալու բազմաբեռ չարիքներից և դասվելու Քո սուրբերի հետ:

Վա՜յ ինձ, Տե՛ր, վա՜յ ինձ, քանզի կործանվեցի մեղքերով և իմ մտքերով աղտեղացա, ունայնացա բարիքներից և ցամաքեցի սիրուց, խավարեցի լալուց և դադարեցի առաջ գնալուց: Աչք չունեմ լալու և արտասվելու, ծփում եմ տարակուսած, քանզի չունեմ բարու հույս և ակնկալություն:

Հիշեցրո՛ւ, Տե՛ր, իմ զբաղված և մոռացկոտ մտքին Քո ահավոր և սոսկալի դատաստանը, արդարների պատիվն ու փառքը և մեղավորների աններելի տանջանքները և, նրանցով զարհուրեցնելով, դողացրու իմ մարմինը, որ իմ աչքերի առջև հանապազ տեսնեմ մահը:

Դարձրու՛ ինձ, Տե՛ր, իմ մեղքերի համար սգացող և արտասվող, քանզի ծանրացած եմ անօրենության բեռով և հագեցած՝ աղտեղի խորհրդով, շատ ներեցիր ինձ, քանզի չպատժեցիր մարմնի մեջ. արդ, սարսելով դողում եմ, թե ինձ համար աններելի չե՞ն մնա այսպիսի չարիքները: Աղաչում եմ, բարերա՛ր Տե՛ր, մի՛ կանչիր ինձ ատյան և մի մատնի՛ր ինձ տանջանքների, այլ փրկի՛ր գեհենի հրից, ազատի՛ր վտանգներից և ողորմի՛ր ինձ, քանզի միայն Դու ես մարդասեր:

Իմ գլուխն արտասուքների բխման աղբյուր դարձրու, Տե՛ր, լվա իմ հոգու թարախը, սրբի՛ր իմ զգայարանները: Եվ չարություններ գործողիս դարձրո՛ւ դեպի Քո ջերմ սիրո զղջումը՝ զգաստ մարմնով ապրելու, ըստ Քո պատվիրանի:

Հալածի՛ր, Տե՛ր, խավարն իմ հոգո՛ւց և հագցրու Քո արդարության ճառագայթների լույսը: Զարդարիր իմ սիրտը երկյուղով, զղջմամբ և արտասուքով՝ երկնչելու Քո դատաստաններից և պահելու Քո բոլոր պատվիրանները:

Ազատի՛չդ Քրիստոս, ազատի՛ր ինձ ամեռային մեղքերի դառնաշունչ քամիներից, պայծառացրո՛ւ և ջերմացրու խավարած և սառած հոգիս, և ցողի՛ր Քո շնորհի ջերմության ցողը՝ իմ սրտի խորհուրդների անդաստաններում:

Հասունացրու՛ ինձ, Տե՛ր, բարին գործելու ամեն ժամ, և խափանի՛ր իմ չար մտքից բոլոր չարիքները, ե՛տ պահիր ինձ պիղծ և անխրատ ընթացքից ու չար սովորությունից և հաստատի՛ր Քո պատվիրանների երկյուղի ու սիրո մեջ և շնորհի՛ր ինձ հավատով ապավինել Ամենասուրբ Երրորդությանդ՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):